



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

STAATLICHE UNIVERSITÄT JEREWAN

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

HEINRICH VIERBÜCHER

ՀԱՅՆՐԻԽ ՖԻՐԲՅՈՒԽԵՐ

ARMENIEN 1915

ՀԱՅԱՍՏԱՆԸ 1915-ԻՆ

WAS DIE KAISERLICHE REGIERUNG  
DEN DEUTSCHEN UNTERTANEN VERSCHWIEGEN HAT

ԹԵ ԻՆՉ Է ԹԱՔՑՐԵԼ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐՄԱՆԱՅՊԱՏԱԿՆԵՐԻՑ

DIE ABSCHLACHTUNG EINES KULTURVOLKES  
DURCH DIE TÜRKEN

ՀԻՆ ՄՇԱԿՈՒՅԹ ՈՒՆԵՑՈՂ ԺՈՂՈՎՐԴԻ  
ԿՈՏՈՐԱԾԸ ԹՈՒՐԶԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Übersetzung aus dem Deutschen von  
Hunan Ghukasjan

ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻՅԳ ՔԱՐԳՄԱՆԵԳ  
ՀՈՆՄԱՆ ՂՈՒԿԱՍՅԱՆԸ

VERLAG DER UNIVERSITÄT JEREWAN  
JEREWAN - 2000

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ - 2000

ՂՄՀ 941(479.25)  
ՊՄԴ 63.3(2Հ)5 +  
Ֆ 881

### Ֆիրբյուխեր Հայնրիխ

Ֆ 881 Հայաստանը 1915-ին,- (գերմ. թարգմանեց՝ Հունան Ղուկասյանը),- Եր.: ԵՊՀ, 2000 - 112 էջ:

Գիրքն ամփոփում է գերմանացի մարդասեր և խաղաղության ականավոր գործիչ Հ. Ֆիրբյուխերի անձնական տպավորությունները՝ 1915-1921 թթ. Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած հայերի ահավոր ցեղասպանության վերաբերյալ: Այդ տարիներին նա եղել է Թուրքիայում՝ որպես մարշալ Լիման ֆոն Չանդերսի թարգման, գտնվել է ողբերգական իրադարձությունների ոլորտում և դարձել ականատեսը թուրքական ոճիրների ու վայրագությունների: Այս փաստերի հիման վրա նա հաստատում է ծրագրված ցեղասպանության իրողությունը և դատապարտում բուն մեղավորներին՝ թուրքերին ու նրանց ղաշնակից կայզերական Գերմանիային, նաև եվրոպական մեծ տերություններին՝ հայկական հարցի դրական լուծումը վերջնականապես ծախսողելու համար:

Թարգմանությունը կատարված է 1987 թ. Բրեմենում լույս տեսած երրորդ լրացված հրատարակությունից:

Առաջին հրատարակությունը եղել է 1930 թ.:

Նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար:

Ֆ  $\frac{0503020913}{704 (02)}$  2000

ՊՄԴ 63.3(2Հ)5+

ISBN 5-8084-0311-1 Թարգմանի համար, 2000 թ.

## ՆԱԽԱԲԱՆ

Երբ կատարվում էին հայ ժողովրդի առաջին հալածանքները, ես դեռ չէի ծնվել (ես ծնվել եմ 1902 թ.) կամ էլ երեխա էի, մանուկ, որը նման իրադարձությունները չէր կարող հասկանալ: Սակայն առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, չնայած գրաքննությանը, մեզ հասան այդ ցեղասպանության վերաբերյալ առաջին շշուկներն ու հաղորդումները: Մենք այդ իրադարձությունը հանիրավի դասեցինք Արևելյան և Արևմտյան Եվրոպայում կատարված սարսափելի զանգվածային կոտորածների շարքը կամ էլ այն լրիվ վանեցինք մեր գիտակցությունից՝ Սոմալի փին, Ֆլանդրիայում, Վերդենի մոտ և այլուր մեր կաշվի վրա զգացած սպանությունների ազդեցության տակ:

Միայն պատերազմի ավարտից հետո մենք լսեցինք էքսպրեսիոնիստ գրող Արմին Թ. Վեգների ահազանգող աղաղակը: Մանրամասները ես իմացա հետո, երբ 1922 թ. դեկտեմբերին Վեգների հետ միասին (նա որպես Պատերազմի հակառակորդների լիգայի նախագահ, իսկ ես՝ Գերմանական պացիֆիստական ուսանողության միության ներկայացուցիչ) մեկնեցինք Խաղաղության միջազգային մեծ կոնգրեսներին, որոնք տեղի էին ունենում Հաագայում և Ամստերդամում:

Հաջորդ տարիներին մեզ համար, որ ամենօրյա պայքարում ճառում էինք, գրում և կազմակերպական աշխատանք տանում ընդդեմ սպառնալիցությունների մրցավազքի, ընդդեմ քիմիական ու հրդեհակեզ պատերազմների և մացիոնալ-սոցիալիզմի վերահաս վտանգի, կրկին հետին պլան մղվեց 1915 թ. հայերի ջարդը: Ողջ մնացած հայերը Արևմտյան Եվրոպայում չունեին այնպիսի լավ քաղաքական «լոբբի», ինչպիսին ունեին, օրինակ, վտարանդի ռուս մենչևիկները կամ հետագայում՝ մուսոլինյան Իտալիայից փախած սոցիալիստներն ու կոմունիստները: Առավել կարևոր էր այն, որ 1930 թվականին Ֆիրբյուխերի գիրքը արթնացրեց մեր խիղճը:

Ակներև կարևորություն ունեցող այս գրքին, սակայն, ազդեցության կարճ ժամանակ էր վիճակված, քանզի 1933 թ. Գեբելսի

և գերմանական գրավածառների բորսային միության ջանքերով այն արժանացավ սև ցուցակ մտցնելու «պատվին»: Եվ այն օրինակները, որոնք դրված էին գերմանական պացիֆիստների ու սոցիալիստների անձնական գրադարաններում, դարձան նացիստական գրոհային ջոկատների և գետապոլի տնային խուզարկությունների զոհը, եթե նրանք իրենց տերերի կողմից խորապես գիտակցված վախից մինչ այդ արդեն չէին այրվել կամ ինչ-որ տեղ չէին նետվել աղբի մեջ: Իսկ շատ քաղաքների գրադարաններում պ ա հ վ ո ղ այդ գիրքը ոչնչացավ քառասունական թվականների ոմբակոծություններից:

Առավել քան ողջունելի է, որ այս գիրքն ահա, իր լույս տեսնելուց 55 տարի անց, վերջապես կրկին հնարավոր է ձեռք բերել: Քանզի ոչնչով չի նվազել նրա նշանակությունն ու հրատապությունը այլոց թվում նաև այն պատճառով, որ Ֆիրբյուխերը հայերի գանգվածային ջարդերը ինքնական քննության է առնում Գերմանիայի և նրա թուրք դաշնակցի իմպերիալիստական քաղաքականության տնտեսական և քաղաքական կ ա պ ե ռ ի մ ե ջ (Բաղդադի երկաթուղին): Շատ այլ կարևոր, լուրջ մատնված կամ մոռացված մանրամասներ է հիշեցնում մեզ Ֆիրբյուխերը, ինչպես, օրինակ՝ պանգերմանական պրոֆեսորների (Ռորբախ, Յեք) դերը և քաղաքական գործիչ ու ավետարանական աստվածաբան Ֆրիդրիխ Նաումանի (1860-1919) դերը, ում արտաքին քաղաքական բախտավճիռ դիրքորոշումը ցայսօր անտեսվում կամ գիտակցաբար լուրջան է մատնվում գերմանական պատմագրության և դեմոկրատական քաղաքական գործիչների մեծ մասի կողմից: Այնպես որ, ընթերցանության և ուսումնասիրության արժանի առատ նյութ կարելի է գտնել այս փոքրիկ գրքում:

Կան ոճրագործություններ, որոնք երբեք չպետք է մոռացվեն: Հայերի ցեղասպանությունը պատկանում է նման ոճիրների թվին, որոնք մենք պետք է մշտապես հիշենք:

*Զյուլն, 1985 թ. մարտի վերջ*  
**Պրոֆ. դ-ր Վալթեր Ֆարիան**



**Հայնրիխ Ֆիրբյուխեր**  
(1893-1939)

## Շ Ի Ր Մ Ա Խ Ա Չ Ը

Ո՞վ է տեղյակ այն ժողովրդի ճակատագրին, որը անվաջարդվել ու խաչվել է համաշխարհային պատերազմի տարիներին:

Գիտե՞ք արդյոք, որ մարդակերպ սատանայի բոլոր վայրագությունները կզգային անձամբ Գոյունեվալդի, Գոյայի, Բրոյգել Թրոցի վերարտադրելու տաղանդի կարիքը, որ մարդագայլի հիսնամսյա մոլեգնությունը մարդկության նկատմամբ Վոյի և Դուոմնի ընդարձակ խառնարաններում չհասավ իր գագաթնակետին, այլ Կովկասի լեռնակապաններում վերաճեց Գողգոթայի դրամայի, որը խորտակում է զարհուրանքի բոլոր սահմանները:

Լեռան գագաթը, որտեղից Նոյյան աղավնին թռել էր բերելու արթնացող կյանքի լուրը, «Մեծ դարաշրջանում» շրջապատված էր մահագուշակ թակագլուխ թռչուններով, նրա բարձունքներին էր հասնում մեռնող մի ժողովրդի միլիոնապատիկ հառաչը, մարդկանց քայքայվող մարմինների գարշահոտությունը: Ապագա բանաստեղծներին ու պատմագիրներին զոհասեղան կպատկերանա Արարատը, որի ստորոտին մեր բարբարոս, խեղկատակ ժամանակն այնպիսի զոհ մատուցեց, ինչպիսիք մատուցվել են Թիրի Մուրքին ու ացտեկների աստվածներին, և ինչից կխամրեին Թամեռլանի, Տորքվեմադայի, Իվանի գործած արյունալի զարհուրանքները:

Երզնկայի և Սվազի արանքում է ընկած **Քեմախի\* կիրճը**: Այնտեղ 1915 թ. հունիսյան օրերին տասնյակ հազարավոր կանանց ու երեխաների անասելի տանջանքներից հետո գլխապտույտ առաջացնող բարձրությունից ողջ-ողջ նետում էին ցած: Այդ կիրճը պետք է **Դանթեի կիրճ** անվանել: Դա իրականություն դարձած նզովքի վիրապ է, ինչպիսին Դանթեն է նկարագրել իր Դժոխքում: Մարդիկ ռազմայրերի հուշարձան են կանգնեցնում՝ առավել հաճախ դրանով հարգանք մատուցելով սպանությանը և ոչ թե սպանվածներին: Մարդկությունը, որ հասել է իր խայտառակության ճանաչմանը և իր մեղսապարտության գիտակցությանը, պետք է որ Կովկասի խայտառակ սպին դարձներ հուշավայր ամբողջ երկրագնդի համար, քանզի այստեղ է կատարվել բոլոր ոճ-

\* Իմա՝ Կամախ:

րագործություններից ամենամոռացածը: Այդ խայտառակությունը մաքրելու ցանկությունը և պատերազմն անհծողների նողկանքը պետք է որ միավորվեն և մարդկանց առիթ տալին ուխտագնացության դեպի Քեմախ-բողազ: Ուխտավորներն այնտեղ վերստին ու վերստին հոգեպես կ վ ե ռ ա պ ռ ե ի ն այն, ինչ եղել էր 1915-ին, ականջներն անդունդին, և անըմբռնելիի, բայց և կատարվածի արծագանքից յուրաքանչյուր նյարդ կ զ ի ն ե ի ն պայքարի կամքով՝ ընդդեմ հոգու թունավորման, ինչը հնարավոր դարձրեց այդ երևույթը:

Այստեղ մենք կփորձենք խիստ համառոտակի տալ քրիստոնյաների նկատմամբ պատմության մեջ խոշորագույն հալածանքի պատկերը: Սակայն այդ խնդիրը, կ ա ռ ո ղ է կատարյալ լուծում չստանալ. ով պաշտպանության պայքարում կանգնած է ընդդեմ վերահաս պատերազմի, չի կարող ծավալուն գրքեր գրել, քանզի նա հարկադրված կլինի անտեսել տվյալ ժամի հույժ կարևոր գործերը: Իսկ ժամը կոչ է անում՝ ողջ եվրոպան Պալմիրայի փլատակների, մի հսկայական, անմարդաբնակ Հայաստանի վերածել հենց այսօր, երբ թունավոր գազերն ու պայթուցիկ նյութերն ամեն օր լարված սպասում են իրենց խնդիրին: Եվ մեր բարեկամները՝ բարի կամքի գերմանացիները, գիրք գնելու համար շատ փող չունեն. նրանց համար մեծ մասամբ հացն առավել անհրաժեշտ է, քան գ ռ ո տ վ ա ծ թ ու ղ թ ը:

Եվ այսպես, այս գիրքը թող դիտվի որպես մի աննշան շ ի ռ մ ա խ ա չ կովկասյան զանգվածային գերեզմանի վրա, որպես մի փոքրիկ ավանդ՝ պատկերելու այն խոշոր գազանանոցը, ուր մենք անծամբ ենք եղել, որը մենք պիտի ատենք, եթե ուզում ենք մեր մեջ պահպանել սիրո նկատմամբ ունեցած մեր զորությունը:

### ՀԱՅ ԹԵԼԼԸ\*

1921 թ. մարտի 15-ին Շարլոթենբուրգի Հարդենբերգ փողոցում հայ ուսանող **Թեհլերյանը** գնդակահարեց նախկին մեծ վե-

\* Նմանեցնելով Թելլ և Թեհլերյան անունները, նույնացնելով նրանց ազատասիրական ոգին ու նպատակասլաց վրեժխնդրության ձգտումները՝ հեղինակն իր Թեհլերյան հերոսին համեմատում է շվեյցարական ժողովրդական առասպելի հերոս, ազատատենչ մարտիկ, անվրեպ հրածիզ ու նետածիզ փլիհելմ Թելլի հետ, որը նաև Ֆր. Շիլլերի համանուն դրամայի հերոսն է:

գիր **Թալեսթ փաշային**: Երիտթուրքերի ամենաազդեցիկ ղեկավարն ու համաշխարհային պատերազմի ընթացքում թուրքերի հեղինակավոր պետական գործիչը զոհ էր գնացել ակնհայտ վրիժառության: «Հանցագործը» արյունլվա ծեծվել էր վրդովված բազմության կողմից և ձերբակալվել առանց դիմադրության: 1921 թ. հունիսի 3-ին Բեռլինի երդվյալների դատարանը երկօրյա դատական նիստից հետո **արդարացրեց** այն մարդուն, ով սպանել էր թուրքական ռազմական քաղաքականության երբեմնի ամենագորեղ պարագլխին: Այդ վճիռը պատվո էլ է գերմանական արդարադատության պատմության մեջ: Պարագործալ այն դրույթը, թե մեղավոր է ոչ թե մարդասպանը, այլ սպանվողը, պաշտպանություն գտավ այստեղ և կ ա ն գ ն ե ց արդարացման թ ի կ ու ն ք ի ն, թեև այն ընդունվել էր ոչ պաշտոնական: Դատարանն ըմբռնել էր ոգու պայքարը, լ ռ ի վ ա ռ մ տ ա խ ի լ լ ի ն ե լ ը մի մարդու, ով գլխին հասցված շշմեցուցիչ հարվածից հետո երկու օր պառկած էր մնացել իր իսկ եղբոր դիակի տակ և լսել էր հուսահատության ու տառապանքի ճիչերն իր քույրերի, որոնք բռնաբարվում էին սանձարձակ թուրք ասկյարների խմբի կողմից:

Դատարանի առաջ կանգնածն ավելին էր, քան լոկ նիհարավուն և աննշան թվացող երիտասարդ հայը. այդտեղ էր մի ամբողջ կոտորված ժողովուրդ, այդտեղ էր կանգնած Բանքվոյի հրսկայացած ոգին, այդտեղ էին կանգնած ավելի քան մեկ միլիոն սպանված տղամարդկանց, կանանց ու երեխաների ստվերները: Եվ նրանք իրենց բողոքն էին բարձրացնում ընդդեմ ա մ ո թ ի մոռացման, որն իր խաբուսիկ քողն է փռում վիհերի վրա, որոնք կարող են վաղը և եթ վերստին բացվել:

Հանձին Թալեսթ փաշայի Թեհլերյանը տեսել էր իր ժողովրդի վայրագ սպանդի գլխավոր մեղավորին: Իրենց բազմանդամ ընտանիքից նա միակն էր, որ փրկվել էր 1915 թ. արյան բաղնիքից: Պարսկաստանում և իր ավերված հայրենիքում տարիներ տևած շվար դեգերումներից հետո նա կրկին եկել էր Երզնկա՝ իր հայրենի քաղաքը, որտեղ 20000 հ ա յ ե ռ ի ց մ ի ա յ ն ք ի չ ը ն տ ա ն ի ք ն ե ռ է ի ն մ ա զ ա պ ու ռ ծ ե ղ ե լ ե ղ ե ո ն ի ց, իսկ իր հարազատ օջախը վերածվել էր փլատակի: Նա պատմում է, որ մի անգամ երազում մտնում է տեսել, որն իրենից պահանջել է սպանության մեղավորից լուծել վրեժը: Այդ տեսարանը, այդ ծայրն իր իրեն հետամուտ են եղել մինչև այն օրը, երբ Թալեսթը փլվեց գնդակների ծանրությունից:

Ծանր էր դատախազի վիճակը: Վերթառուների, ֆոն Գորդոնի և Քիլուն միջազգային իրավունքի դասախոս Նիմայերի նման աշխարհահամբավ դատապաշտպանները մարտնչում էին ամբաստանյալի կյանքի համար: Դատական գործը լսելու գազաթնակետը կազմեցին ցուցմունքները մի հայ եպիսկոպոսի ու մի համեստ տիկնոջ, որի վկայությունը պետք է պարտադիր արտատպվի այս գրքում:

## ԿԱՐՄԻՐ ԵՎ ՍԵՎ-ՍՊԻՏԱԿ-ԿԱՐՄԻՐ ՍՈՒԼԹԱՆԸ

Գերմանիայի և Թուրքիայի միջև սերտ կապեր ձևավորվեցին միայն 19-րդ դարում: Դեռևս Ֆրիդրիխ քազավորը գրում էր Կոստանդնուպոլսում գտնվող իր դիվանագիտական ներկայացուցչին. «Միայն թե թուրքին քսի տուր ռուսի վրա ու ոչ մի թալեր էլ մի խնայիր»: 1836 թ. Ֆրիդրիխ Վիլհելմ III-ը գլխավոր շտաբի կապիտան Յելմութ ֆոն Մոլթեպեն մի քանի տարով ուղարկեց Բոսֆոր որպես հրահանգիչ-սպա: Մոլթեպեն հետագա գերմանա-թուրքական ռազմական գործարքների մունետիկն էր: 1869 թ. Սուեզի ջրանցքի հանդիսավոր բացմանը մեկնելու ճանապարհին թագածառանգ Ֆրիդրիխը այցելեց իր շրայությանը հայտնի սուլթան Աբդուլ Ազիզին: Պրուսիայի արքայազնը իրեն պահում էր այնպես «բարեկիրթ», ինչպես Յոհեննցուլերների մեծագույն մասը: Նա օգտագործեց սուլթանի քաղաքավարությունը և կարողացավ ավետարանական նպատակների համար Երուսաղեմում նվեր ստանալ մի հողակտոր, որը նախկինում երբևէ պատկանելիս է եղել Յոհաննիտներին: Իր օրագրում «մեր Ֆրիցը» գրում էր. «Մեծ վեզիրը խիստ անակնկալի եկավ, երբ ես նրան ներկայացրի այն հարցը, ... բայց նրա, ինչպես նաև սուլթանի՝ մեր թագավորին սիրալիրություն ցուցաբերելու պատրաստականության շնորհիվ ... մեր ձեռնարկումը գլուխ եկավ»: Առավել ձեռներեց էր նրա որդի Վիլհելմ II-ը, որը դեռ 1889 թ. շրջագայող կայսեր իր համբավը ձեռք բերեց դեպի Արևելք կատարած ճանապարհորդությամբ: Նա վարպետորեն էր տիրապետում արյունարբու Աբդուլ Յամիդի կողմից նվեր նվերի հետևից ստանալու արվեստին, այնպես որ Ստամբուլի ազդեցիկ շրջաններում, առաջին ոգևորություններն ի չիք դառնալուց հետո, այդ ուղևորությունը դիտե-

ցին որպես ասպատակության մի տեսակ: Որպես նվերների և կոնցեսիաների փոխհատուցում՝ Վիլհելմն իր թուրք գործընկերոջն ուղարկեց ս պ ա ն ե ռ, որոնք ձեռնամուխ եղան օսմանյան բանակի վերակազմմանը: «Մեր» Վիլհելմն, իմիջիայլոց, այդ սիրալիրությունն անելիս դեկավարվում էր փոքր-ինչ արտասովոր թվացող բարեկամությամբ: 1894 թ. սուլթանի գերմանացի ախոռապանն անսպասելի հետ կանչվեց Բեռլին, քանզի նա հրաժարվում էր պարբերաբար զեկույց տալ սուլթանի պալատում, բանակում և արտաքին գործերի նախարարությունում ընթացող դեպքերի մասին: Երբ Վիլհելմ II-ը 1898 թ. կրկին Կոստանդնուպոլիս եկավ, խանդավառությունն այնտեղ նվազ փոթորկոտ էր, քան ինը տարի դրանից առաջ: Սակայն առավել փքում էին ճառերը, որ արտասանում էր Վիլհելմը: Այս պատեհությամբ նա Դամասկոսում գտնվող Սալադինի գերեզմանի համար նվիրաբերեց արծաթե մի լամպ և իրեն ներկայացրեց որպես «300 միլիոն մահմեդականների բարեկամ»: Թուրքիայի մայրաքաղաքին նա նվիրեց մի հուշաղբյուր, որի վրա Աբդուլ Յամիդը փորագրել տվեց հետևյալ ասույթը.

«Նորին գերագանցության սուլթան Աբդուլ Յամիդ II խանի հավատարիմ բարեկամը,

Պայծառափայլ կայսերական ընտանիքի ամենափայլուն զարդը՝

Նորին գերագանցության կայսր Վիլհելմ II-ը,

որն իր երջանկության գազաթնակետին է,

Որպես գերմանական կայսր և նմանը չունեցող տիրակալ,

Որպես օսմանների փառիշահի հյուր գեղազարդել է

Կոստանդնուպոլիսը՝ այնտեղ ոտք դնելով:

Ի նշանավորումն այդ այցի կառուցվել է այս հուշաղբյուրը, եվ նրանից հոսող զուլալ ջրի պես

**Մաքրության տիպար է** երկու միապետների բարեկամությունը:

Յավերծ պիտ մնա այս հուշաղբյուրը՝

որպես կոթող այդ բարեկամության»:

Ո՞վ էր Աբդուլ Յամիդը: Պատմության ամենամռայլ կերպարներից մեկը: Դեռ 1876 թ. նրա գահակալությունն ուղեկցվեց իսկական ոճրագործություններով: Աբդուլ Ազիզը սպանվեց իր Թեոբազան պալատում: Նրա հետնորդ Մուրադ V-ը, հինգ ամիս կա-

ռավարելուց հետո, խելացնորության հողի վրա գահընկեց արվեց ու բանտ նետվեց: Ամենայն հավանականությամբ երկու դեպքերն էլ Աբդուլ Յամիդի խղճի վրա են: Ի ո ե դ բ ա յ Ր Մ ե հ մ ե դ Ռ ե շ ա դ ի ն (Աշխարհամարտի ժամանակաշրջանի հետագա սուլթանին) ն ա 34 տ ա Ր ի բ ա ն տ ա Ր կ ու թ յ ա ն մ ե ջ պ ա հ ե ց: Մեհմեդ Ռեշադի հետ կապի մեջ լինելու կասկածանքը բավական էր՝ տվյալ անձին անհետ կորցնել տալու համար: Դժվար է որևէ բանաձև գտնել այս թագադիր ճիվաղի հոգեվիճակի համար: Աբդուլ Յամիդը հարեմի հայ կնոջ զավակ էր: Եվ այդ մարդը բազմիցս, վերջին անգամ 1909 թ. տվել է հայերին կոտորելու ուղղակի հրաման: Թուրքիայի ամենանշանավոր պետական գործիչներից մեկը՝ լիբերալ Միդհաթ փաշան, 1877 թ. երկրի համար սահմանադրություն էր ստեղծել: Աբդուլը ջախջախեց այդ սահմանադրությունը, Միդհաթին աքսորեց Չեջագ, որտեղ էլ նրան սպանել տվեց 1883 թ.: Հաստատ համոզվելու համար նա կարգադրեց Ս տ ա մ բ ու լ ի Ր ե ն բ ե Ր ե լ Մ ի դ հ ա թ ի կ տ Ր վ ա ծ գ լ ու խ ը: Աբդուլն իրոք համակված է եղել հետապնդվելու մտազարույթի մեջ: Իր մոտ նա միշտ կրում էր մի քանի ատրճանակ: Իր կյանքի համար մշտական սարսափից նա սպառնում էր իր պալատականներից յուրաքանչյուրին, ով ինչ-որ ձևով կասկածելի էր թվում նրան: Սեփական պալատական դատարանը, որը **գործում էր ամենանեղ կտանքներով**, մեծ մասամբ կորզում էր այնպիսի խոստովանություններ, որոնք բավարար էին համարվում մահապատժի համար: Յըլդըզ-Քյոշքի (**հայերեն՝** Աստղավրան) պարտեզում զբոսնելիս՝ Աբդուլ Յամիդը հանդիպում է մի պարտիզպանի, որը վեր է թռչում սուլթանին խոնարհվելու մտադրությամբ: Դա այնպիսի սարսափ է ներշնչում սուլթանին, որ նա խեղճ արարածին տեղնուտեղը գնդակահարում է: Ահաբեկիչների երկյուղից սուլթանը պաշտոնական տոներին մեծ փութաջանությամբ էր անցնում քաղաքով: Պայթուցիկ քիմիական նյութերի ներմուծումն արգելված էր խստագույնս: Դեղագործներն իրավունք չունեին կիրարկելու քլորաթթու կալիում, քանզի պալատում հնարավոր էին համարում դրանից ռումբեր պատրաստելը: Զինվորական ուսումնարանի ուսանողների կարծեցյալ դավադրությունը ճնշվեց աներևակայելի դաժանությամբ. այդ երիտասարդներին հաղորդեցին, որ իրենց ուսման ավարտի կապակցությամբ սուլթանը նրանց արտասահմանյան շրջագայություն է թույլատրել: Նա-

վագնացության ժամանակ **շոգենավը գիշերով խորասույզ արվեց: Ոչ ոք չփրկվեց:** Բազմաթիվ դեպքերում անհամակրելիների նկատմամբ թույն է գործածվել:

Քանի դեռ կառավարում էր այդ բռնակալը, Կոստանդնուպոլսի նման աշխարհահամբավ քաղաքը **հեռախոս ունենալու իրավունք չունեց:** Գրաքննությունը հանդգնում էր դիմել խեղաթյուրումների, որոնք կատարյալ խելագարություն էին հիշեցնում և այդուհանդերձ 34 տարի շարունակ բնութագրում էին այն անառողջ մտածելակերպը, որը գալիս էր Վիլհելմ II-ի բարեկամից: Նույնիսկ արգելվեց որոշակի խոսքերի գործածությունը: Բռնագրավվեց Աստվածաշնչի ամերիկյան մի հրատարակությունը՝ «Մակեդոնիա» բառի պատճառով, որը առկա էր Պողոսի մամակում: Համաձայն թուրքական հանձնարարականի՝ դա պետք է հնչեր. «Մալոնիկ և Մոնաստիր վիլայեթները»: Այն խմբագիրը, ով կգործածեր **սահմանադրություն, ազատություն, մահափորձ, բռնակալություն, անարխիստ, հեղափոխություն, գահաժառանգ, Հայաստան, Բոսնիա** բառերը, բառիս բուն իմաստով անձնասպան կլիներ: Ֆրանսիայի նախագահ Սառդի Կարնոյի, Պարսկաստանի շահ Նասրեդդինի և Սերբիայի թագավոր Ալեքսանդրի սպանությունները չպետք է հաղորդվեին ճշմարիտ: Պետք է ասվեր, որ այդ պետությունների ղեկավարները կյանքից հեռացել են բնական մահով:

Եվ Վիլհելմ II-ը հավատարիմ բարեկամն էր այն մարդու, ում անունից և հանձնարարությամբ տեղի էին ունենում բոլոր այս անիրական հնչող բաները: Համենայն դեպս մեզ թվում է, որ Կեսար դառնալու մոլագարության պատմության մեջ պետք է որ ոչ նվազ իրավունքով հիշատակվի «մեր» Վիլհելմ II-ի անունը, ինչպես Աբդուլ Յամիդ II-ինը: Ցեղից-Թրոյուցլերի մոտ կարողում ենք. «Երբ մի անգամ Վիլհելմը դիտում էր Հոհենշթաուֆենի կայսր Ֆրիդրիխ II-ի ապարանքը՝ Քասթելնոնթե բերդը, իր շքախմբին ասաց. «Այո՛, երբ մտածում ես, թե ինչ բաներ է արել այս մեծ կայսրը ... **Բայց եթե ես ձեզ նույնկերպ մտրակել ու զխատել տալ կարողանայի, ինչպես նա, ապա ես է՛լ ավելին արած կլինեի**»»: Այս մարդը, որ որպես թագաժառանգ Ռուսաստանի կայսրին էր մատնում Գերմանիայի պետական գաղտնիքները, ով մի գործադուլի ժամանակ սպասում էր, որ Բեռլինի կայազորն առնվազն 500 գործադուլավոր կգնդակահարի, հովազի ցատկով, բարբարոսի ոճով, պանդոկապանի ժարգոնով այս մարդը, բոլոր գերմանա-անգլիական փոխըմբռնման հնարավորությունների տապալման մե-



ղավորը, այն մարդը, ով ամեն ինչ առավել լավ գիտեր, քան ամենանշանավոր մասնագետները, ով բարձրաստիճան պետական պաշտոնյաների հետ վարվում էր՝ ասես փսլեքոտների հետ, ում լուսանցքային դիտողություններն էապես նպաստում էին համաշխարհային պատերազմի բռնկմանը, Աբդուլ Յամիդի արժանավոր բարեկամն էր: Նրանց մոտ ընդհանուրն այն էր, որ երկուսն էլ ամենևին տանել չէին կարող քննադատությունը, երկուսն էլ հակում ունեին դերասանության: Անշուշտ, նրանք գանազանվում էին իրենց հարմարադերով: Ոսկեղջյուրի ափին կայսրն իրեն դուր էր գալիս շողոքորթ արյունահեղ բանասարկուի, իր սղոցող խղճից մշտապես տանջված չարագործի դերում, մինչդեռ սուլթանը Շփրեի ափին հերոսի դերեր էր խաղում անճաշակ խանդավառությամբ: Մեկը Մակբեթ էր, Ֆրանց Մոոր, Արքա Կլավդիուս, մյուսը՝ Տարտարենի, Դոն Զիշտի և Լոհենգրինի խառնուրդ: Աբդուլ Յամիդի մոտ այդ խաղը արյունահեղ լրջություն էր: Վիլիելմի մ ո տ կատակերգությունը, որը լուրջ սկիզբ էր ընդունել, աշխարհի կեսի համար դարձավ արյունահեղ ճակատագիր:

Եթե մոլեգնում են արքաները, պետք է ապաշխարհեն ժողովուրդները:

## ՊԱՆԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԸ

Վիլիելմ II-ը գերմանական իմպերիալիստների առևտրական շրջիկ գործակալն էր: Թուրքական բանակը գերմանական սպաներով անընդհատ ընդլայնվող մատակարարման հետ միասին ընթանում էր Բաղդադի երկաթուղու շինարարությունը: Գերմանական բանակը մեկը մյուսի հետևից մասնաճյուղ էր հիմնում: Կոստանդնուպոլսի գերմանական հյուպատոսության կողքին էր գտնվում Քրուպի շենքը: Պարոնայք գիտեին, թե ինչ է իրենց ուզածը. նրանք անում էին այն, ինչ անհրաժեշտ էին համարում: Նրանց համար Թուրքիան բացառիկ կարևոր խաղաքար էր իրենց համաշխարհային քաղաքականության շախմատային խաղում: Եվ նրանք այնքան էլ ջանք չէին թափում՝ հասարակայնությանը պարզաբանելու իրենց պլանները: Այդ հոգածությունը հայտնի ճարավկությամբ անում էին բարձր բարոյականություն, մակարդակ և դեմոկրատական ավանդույթ ունեցող մարդիկ: Դե-

մոկրատներ Նաումանը, Ռորբախը և Յեքը թուրքական հիմնահարցի վերաբերյալ Գերմանիայում հնարել ու տարածել էին այնպիսի հասարակական կարծիք, որն իր վտանգավորությամբ կարող էր մրցել պանգերմանականների գործունեության հետ: Քաղաքագետների այս տեսակը, որն աշխարհասփրության և ազգայնամոլության մշտական բախման մեջ վճռական պահին միշտ ազգայնամոլության կողմն է պահում (հիշենք Ռաթենաուի պատերազմելու հոգեգարությունը, հիշենք գեսլերականներին), հանցանքի իր մեծ բաժինն ունի հետագա աղետի հարցում:

1898 թ. Նաումանն իր «Ասիա» գրքում գրում է. «Թվաքանակի նվազումով, համառորեն տեղի տալով՝ թուրքը ձեռք բերեց մի այնպիսի առանձնահատկություն, որը, հավանաբար, նա նախկինում չի ունեցել: Նա ձեռք բերեց այն մարդկանց խորամանկությունը, որոնք ներսից փշրված են, բայց արտաքինից ուզում են դեռ գոյատևել: Ինչպես հիվանդ կենդանին բնագործն գիտի, թե համընդհանուր թուլության պայմաններում որտեղ և ինչպես դեռ կարող է օգտագործել իր ատամներն ու մագիլները, այդպես էլ թուրքը գիտի, թե ինքը վերստին ե՞րբ կարող է բարբարոս լինել և արյուն հեղել: Թուրքական բարբարոսության վերջին ա ո ի թ ը հայերի կոտորածն էր»:

Այս էր գրում Նաումանը 1898-ին: Նաումանի համար թուրքերը համաշխարհային պատերազմում խիզախ և կենսունակ ժողովուրդ էին: Պարոն քահանան ոչ մի բառ չգտավ անկասկած իրեն ևս հայտնի 1915 թ. հայկական ջարդերը դատապարտելու համար:

Սուեզի ջրանցքի վերաբերյալ Նաումանը 1898-ին գրում էր.

*«Մենք էլ մասնակցեցինք այն հարցի քննարկմանը, թե ում է պատկանելու Սուեզը պատերազմի դեպքում: Եթե երբևիցե Ռուսաստանը կռվի Անգլիայի դեմ, ապա Գերմանիան Ֆրանսիայի հետ միասին կկանգնի ռուսների կողմը, հետո մենք հեռագիր կսպասենք Սուեզից, ինչպես 1870 թ.՝ Վոզեզներից: Անգլիան գիտի, թե ինքն ինչ է անում, երբ իր ձեռքի տակ է պահում Ջիբրալթարը, Մալթան, Կիպրոսը, Ալեքսանդրիան, Ադենը: Դանուն այդ նեղուցի դեռ պիտի դիպուկ կրակոցներ ճայթեն՝ ի հեճուկս Բերթա ֆոն Զուլթների»:* Եվ ապա.

*«Եթե նույնիսկ մենք չկարողանանք մեզ համար օգտագործել Կոստանդնուպոլիսը, մենք կուզենանք մասնակցել*

օսմանյան կայսրության գույքի բաժանմանը»:

Այս խոսքերը դեմոկրատ Նաումանը գրում էր այն նույն ժամին, երբ Կոստանդնուպոլսում կառուցվում էր Վիլհելմ II-ի բարեկամության հուշաղբյուրը: Դա այն նույն Նաումանն էր, որը 1900 թ. գրեց. «Մենք՝ գերմանացիներս, պետք է ուրախ լինենք, որ ունենք նավատորմիդին և արդյունաբերությանը մեծ նշանակություն տվող կայսր»:

Աշխարհամարտից դեռ քսան տարի առաջ Ռորբախը և Յեքը հատուկ հետաքրքրվում էին գերմանա-թուրքական քաղաքականությանը: Հատկապես 1908 թվից նրանք հափշտակվեցին նոր թուրքական մեծություններ Մախմուդ Շևքեթ փաշայով, Թալեաթով և Էնվերով: Դա, սակայն, չխանգարեց պարոն Ռորբախին 1914 թ. վճռորոշ օրերին բացարձակ անսքող արտահայտվելու, որ Գերմանիան ամեն գնով թուրքիայում պիտի գերիշխող լինի ու մնա: 1914 թ. գարնանը երկուսով հիմնեցին «Մեծ Գերմանիա» ամսագիրը՝ Ռորբախի խոսքերով ասած՝ «մեր հրապարակային կարծիքը անմիջականորեն պատերազմին նախապատրաստելու մտադրությամբ»: «Մեծ Գերմանիա» և Նաումանի «Օգնություն» ամսագրերում Ռորբախը 1914 թ. գետեղեց հողվածների մի շարք, որոնք նույն հաջողությամբ կարող էին գրված լինել կոմս Ռեննթլոյի կողմից:

Դեռևս 1913 թ. «Պրուսական տարեգրքերում» նա ասում էր.

*«Պետք չէ կասկածել, որ մենք բավական դրամ ունենք, իսկ տասը կամ քսան տարուց դեռ ավելին կունենանք՝ բանակ և նավատորմիդ պահելու համար, որով մեր իսկական դաշնակիցների միությունը դժվարին պահին սարսափի մեջ կպահի ամբողջ Եվրոպան»:*

Նույն հողվածում.

*«Մենք չենք ուզում զավթել Թուրքիան, բայց մենք պիտի այն պահենք իր ներկայիս տարածքով՝ որպես գործունեության ասպարեզ մեր ազգային խնդիրների համար»:*

Ռորբախի համար թուրքիան պետք է լիներ ապագա գերմանական գաղութային տարածք, որպես փոխհատուցում այն բռնակցումների, որոնց հաշվին իրենց գաղութային աշխարհին ընդարձակեցին Անգլիան ու Ֆրանսիան: 1913 թ. նա խանդավառությամբ բացականչում է.

*«Հերիք ու բոլ եղավ, ինչ Անգլիան ու Ֆրանսիան և Ռուսաստանը զավթեցին վերջին տասնամյակների ընթացքում: Եղածի համար մենք պահանջում ենք վնասների արդար հա-*

*տուցում և թույլ չենք տա հետագա բռնություններ մեր շահերի նկատմամբ, այլապես կբացվեն Յանուսի տաճարի դռները»:*

1914 թ. օգոստոսի 11-ին Ռորբախը գրում է. «Մեծ Գերմանիա» պարբերականում.

*«Հիմա, երբ ամեն ինչ փոխվել է, կարելի է հանգիստ ասել, որ Արևելքում և Աֆրիկայում մեր շահերի ոլորտների սահմանազատման վերաբերյալ Անգլիայի հետ պայմանագրերը պատրաստ էին ու ստորագրված, և բանակցություններ էին տարվում միայն նրանց հրապարակման շուրջը: Աֆրիկայում մեզ անսպասելիորեն ընդառաջեց Անգլիայի քաղաքականությունը: Թուրքիայում լայնորեն հաշվի առնվեց գերմանական տեսակետը ոչ միայն Բաղդադի երկաթուղու հարցում: Դրա հետ առնչվող գործերը՝ Միջագետքի նավթադաշտերի շահագործումը և Տիգրիս գետով նավագնացությունը, որ մեն-մենակ տնօրինում էր Անգլիան, նույնպես կարգավորվեցին գերմանական կողմի մասնակցությամբ»:*

Դեմոկրատի սրտից ասես ծանր քար է ընկնում, որ պատերազմի բռնկումով պատռվում է գերմանա-անգլիական այդ պայմանագիրը: Չէ՞ որ այն կսահմանափակեր Գերմանիայի բաղձալի միահեծանությունը Առաջավոր Արևելքում: Երբ Թուրքիան մտավ պատերազմի մեջ, թուրքերը պարոն դոկտորի կողմից յուրահատուկ գովեստի արժանացան.

*«Թուրքերը, ինչպես արդեն Բիսմարկն ու Մոլթեն են արտահայտվել նրանց մասին, այստեղ փաստորեն իրենց ցույց տվեցին որպես Արևելքի ազնվայրեր»:*

Եվ նրանք այդպիսին մնացին պարոն Ռորբախի համար այնքան ժամանակ, քանի դեռ նա հավատացած էր, որ Թուրքիայի այն ժամանակվա ղեկավարներն այնքան բթամիտ էին, որ պարզորոշ չէին տեսնում թուրքերի գերմանացի բարեկամների անտակտ խորամանկությունները: Թալեաթն ու Էնվերը հանցագործ էին, բայց, միանգամայն ստույգ, ոչ տխմար:

## ԹԵ ԻՆՉՊԵՍ ԽԱԲՎԵՑԻՆԵ

Սարդիկ դիմանում են սարսափելի ոճիրներին, բայց ճշմարտությունը տանել չեն կարողանում: Մի բրահման մի անգամ ասել է մի գիտնականի, որ ինքը երբեք կենդանի էակ չի սպանել, երբեք |

միս չի կերել: Գիտնականը նրան մանրադիտակով զննել է տվել մի փոքրիկ կտոր պանիր: Ի՞նչ է արել մեր բրահմանը: Նա ջարդել է մանրադիտակը: Աստղագետ Քրեմոնինին ժխտում էր Յուպիտերի լուսինների առկայությունը: Երբ գիտությունն անհերքելիորեն ապացուցեց Յուպիտերի լուսինների գոյությունը, Քրեմոնինին այլևս աստղադիտակին չմոտեցավ: Քաղաքականության մեջ եղել են և կան այդպիսի բրահմաններ ու քրեմոնինիներ առավել շատ, քան ժողովուրդներին պետք է: Այսօր մարդիկ խուսափում են սխալվելուց, խաբված լինելուց, թեև դրանց ապացույցները հազարապատիկ կուտակվում են: Իսկ դա մեր դժբախտությունն է, քանզի եղած մոլորությունների և հանցագործությունների թերագնահատման մեջ է ընկած ապագա աղետների սաղմը:

Երբ 1914 թ. աշնանը Թուրքիան միացավ կենտրոնական եվրոպայի տերություններին, մի ցնծություն անցավ պատերազմի դատարկախոսության ծխով մշուշապատված Գերմանիայով: Գերմանացին ռոմանտիկ է անգամ քաղաքական հարցերում: Նրա չարաբաստիկ հակումը ֆանտաստիկայի նկատմամբ, հատկապես գերմանա-թուրքական դաշնակցային եղբայրության տեսանկյունից, չար խաղ խաղաց իր իսկ գլխին: Ես պնդում եմ, որ մարդիկ Գերմանիայում ամբողջ պատերազմի ընթացքում երբեք էլ պարզ պատկերացում չունեցան այն մասնակցության մասին, որ ուներ Թուրքիան ընդհանուր հաշվարկում: Նախագծվեցին ու վառ գույներով ներկայացվեցին հեքիաթային պատկերներ: Մեր մամուլը, ամբողջ գրագրությունը փայփայում էին Ալադինի կախարդական լամպի հրաշագործության նկատմամբ տածած հույսը: Էնվերից սարքեցին Ջիգֆրիդ, Թալեաթից՝ մի տեսակ Բիսմարկ, իսկ թուրքերը մեզ համար բնութագրվեցին որպես մի ժողովուրդ, որը դեռ աշխարհի արարումից ի վեր չի ունեցել առավել կրթոտ ցանկություն, քան գերմանացի ժողովրդի հետ ուսուսի մարտի գնալը: Դեռ 1908 թ. Յեքը գրել էր. «Ամեն մի գերմանացի, ում հետ ես այնտեղ հանդիպել եմ ու խոսել, փորձառությամբ ու ապրումներով դարձել է թուրքոֆիլ (թ ու ը ա մ ե տ)»: Այն ժամանակ գերմանացի դեսպանը գերմանացի ինչ-որ իշխանի հանձնարարությամբ սուլթանին էր մատուցում առաջնել նորածնի սպիտակեղեն երկու ծծկերների համար, որոնք ծնվելու էին խորեմում: Հնարավոր է պատկերացնել երկու ժողովուրդների միջև եղած ավելի մեծ սրտակցություն: 1914 թ. սեպտեմբերի 10-ին Յեքը մարզարեաբար գրում է.

«Կգա այն օրը, երբ Գերմանիան Կոստանդնուպոլսում կկարողանա շարժման մեջ դնել իսլամական զանգվածային թափի թուրքական լծակը..., թվում է՝ օրը մոտենում է: Միայն այդ ժամանակ գերմանական պատերազմը կվերածի համաշխարհային պատերազմի»:

1909 թ. մի թուրք գեներալ նրան ասել էր.

«Գերմանական ռազմական նավերը կառուցվելու են նաև Թուրքիայի համար»:

Եվ ապա (20-ը օգոստոսի 1914 թ.) Յեքը մեզ հայտնում է, թե ի՞նչ ասես որ չէր սպասվում թուրքերից.

«Թուրքիան կարող էր Գերմանիայի կողմից ինչ-որ ժամանակ մատակարարված ռազմական նավերով հաղթել ու ոչնչացնել ռուսական սև ծովյան նավատորմիդը: Որից հետո ողջ հարավային Ռուսաստանը՝ ռուսական իմպերիայի տրնտեսապես ամենակարևոր տարածքը (հիշենք Օդեսան) լոկ մի ռազմերթի քմահաճույքին կմատնվեր: Թուրքական ջոկատները կկարողանային ծովից ու ցամաքից պաշարել Ռուսաստանը և, որպես ազատարարներ, Կովկասից մինչև Դրիմ գրկաբաց կընդունվեին մահմեդական բնակչության կողմից»:

1914 թ. սեպտեմբերի 10-ին նախշուն գույներով մեզ էին հրամցվում Սրբազան պատերազմի տեսարանները.

«Արյունառ իսլամն ականջալուր է Հերկուլեսի սյուներից մինչև Չինական պարիսպ ու դեռ անդին»:

Այնուհետև.

«Պարսկաստանն սպասում է իր տասը միլիոնանոց մահմեդականներով, որոնք կարող են շրջվել Ռուսաստանի և Անգլիայի դեմ: Ռուսաստանը կառավարում է ավելի քան քսան միլիոն մահմեդականների, իսկ Անգլիան՝ ավելի քան հարյուր միլիոնի՝ Աֆրիկայում և Ասիայում, ավելի քան վաթսուս միլիոնի՝ Հնդկաստանում: Իսլամն աղոթում է հանուն նման շրջադարձի և հանուն գերմանական զենքի հաղթանակի»:

1914 թ. նոյեմբերի 5-ին.

«Եվ լոկ պատահականություն չէ, եթե հիմա Եգիպտոսի մզկիթներում կայսր Վիլհելմը ներգրավվում է հավատացյալների աղոթքի մեջ որպես հաջի Մուհամմեդ, որպես Սուրբ երկրի ուխտավոր»:

Այս ամենին հավատում էին և կարևորություն տալիս: Դար-

դանելը, Կովկասը, Սուեզի ջրանցքը... սրանք գերմանացի ժողովրդի համար այնպիսի հասկացություններ էին, որոնք ավելի էին բորբոքում երևակայությունը, քան կբորբոքեր Արևելքի և Արևմուտքի մոլեզնությունը: Դարդանելի փակումն ու պաշտպանությունն անկասկած տարիներով հետաձգեցին պատերազմի վերաբերյալ որոշումը: Բայց այն հրաշքը, ինչ սպասվում էր Սուեզի և Կովկասի հանդեպ, չերևաց և չպետք է կատարվեր, քանզի այնտեղ բացակայում էր հաղթանակի ամեն մի նախադրյալ: Կովկասում թուրքական կողմի **տասնյակ հազարավոր զինվորներ սովամահ եղան ու սառեցին**. 1914-15 թթ. ծնունդն այնտեղ գետնի երեսից լրիվ չբացավ մի ամբողջ բանակ: Եզներով լծված սայլերը, որոնք գրեթե միակ կապն էին համարվում թիկունքի և բանակի միջև, խրված մնում էին անանց ճանապարհների ցեխի մեջ, եթե իհարկե դրանք առհասարակ ուղարկվում էին, այսինքն՝ որքանով դրանք թուրքական վարչական հիմնարկների կամ թիկունքի սպաների կողմից գողացված և այլ ուղղությամբ տարված չէին լինում: Թուրքական բանակին Արևելյան Անատոլիայում վիճակված էր նույն բախտը, ինչ նապոլեոնականին 1812 թ., իսկ գերմանական ժողովուրդը դրա մասին պիտի նույնքան քիչ իմանար, որքան Մառնի ափին եղած աղետի մասին: Ջորջի առաջխաղացումը դեպի Սուեզի ջրանցք պետք է որ Նաումանը տեսած լիներ: Դա երաժշտական երգիծախաղի բացօթյա ներկայացում էր, ռազմական դիմակահանդես՝ աշխույժ վրանաշարժով: Ա՛յ թե բան կլիներ դա Բեռնարդ Շոուի համար:

## ԹՈՒՐՔԱԿԱՆ ԽԵՂԵ ԶԻՆՎՈՐԸ

«Ջիհադի» սրբազան պատերազմի վրա դրված հույսը հոգեբանական ճիվաղություն էր: 150 տարուց ի վեր «Ջիհադը» երբեք չէր հայտարարվել, այնպես որ իսկույն էեք անհմար էր տալ կոչի ենթադրվող ազդեցության գնահատականը: Իսլամը, առավել քան մեզ է հայտնի, մարդկային առողջ բանականության կրոն է: Իր սուննիական մեծամասնության մեջ նա չի ճանաչում անհանդուրժողականություն, որը մեզ մոտ հարյուրամյակներ շարունակ բորբոքում էր ինկվիզիցիային ու խարոյկները: Իսլամը շատ ողջամիտ կրոն է՝ բարքերի սուր արտահայտված ուսմունքով: Կախվածությունը հոգևորականներից ավելի աննշան է, քան նույնիսկ

բողոքականների մոտ: Բոլոր հավատացյալների համար խիստ թույլ կապի միջոցը Արաբիայի սրբություններն են, սակայն թուրքական սուլթանը երբեք խալիֆ չի եղել: Մուսուլմանները հաստատ գիտեն, որ սուլթաններն իրենց հոգևոր առաջնորդ լինելու հատկանիշը միշտ չարաշահել են միայն թուրքական պետական իշխանությունն ընդլայնելու և պահելու նպատակով: Դա նրանց դարձրել է կասկածոտ ու ծանրալուր: Մարգարեների կանաչ դրոշի ծածանումը Եյուբի մզկիթում, օրինակ, եղավ մի դատարկ ու ծիծաղելի ցուցադրում: Բայց եթե նույնիսկ սրբազան պատերազմի կոչը իսլամական աշխարհի ժողովուրդների մեջ արծագանք գտներ, ապա դա Գերմանիայի համար օրհնություն և չէր լինի, քանզի այդ դեպքում բոլոր անհավատների՝ բոլոր քրիստոնյաների, ուրեմն նաև գերմանացիների համար կոշիկը պետք է որ ունենար նույն նշանակությունը, ինչ անգլիացիների, ռուսների և ֆրանսիացիների համար:

Եվ այսպես, պատերազմական գործողության ողջ ծանրությունը Թուրքիայում ընկած էր միայն թուրքական խեղճ զինվորի ուսերին, որը հենց նոր էր տուն դարձել բալկանյան երկու արյունալի պատերազմներից: Դա գյուղացին էր՝ 14-րդ դարի առաջին թալանչիական պատերազմներից ի վեր թուրքական իմպերիալիզմի տանջված ու կեղեքված բանող կենդանին, թշվառ արիեստավորը, նվաստ ժողովուրդը, որը միշտ, լինի հաղթանակ թե պարտություն, պիտի տառապեր ու արյուն թափեր:

Թուրքական զինվորը միլիտարիզմի ամենախղճուկ ստրուկն էր: Անգետ ու հնազանդ ի վերուստ սահմանված ճակատագրին՝ երթաքայլում էր նա, քանզի նրան ծեծով դուրս էին քշում հյուղականներից ու զորանոցներից: Թե ուր էր տանում ռազմերթը, այդ մասին նա չէր էլ մտածում. մտածելն առավել մեծ հանցանք էր թուրքական բանակում, քան գերմանական:

Տարիներ շարունակ Թուրքիայում եղածու ժամանակ ես երբեք այլ տպավորություն չեմ ունեցել, քան հեղձուցիչ հուսահատության տպավորությունը. ինչ-որ ոգևորության մասին, որը համակում էր սրտերը, կարող էին գրել միայն գերմանացի ռազմական թղթակիցները: Այն երբեք առկա չի եղել: **Թուրքական զինվորը ծեծվում էր, ինչպես անասունը**. նրա ընտանիքը կարող էր սովահար լինել: Քրջերը հագին, մասամբ ոտաբորիկ, մասամբ ոտքերը փալասով փաթաթած՝ նա իրեն տեսնում էր բուժօգնությունից զրկված, աղտոտությունից ու աղքատությունից առաջացող

տիֆ, խոլերա, ծաղկախտ և մալարիա հիվանդությունների քմահաճույքին մատնված: Որպես հոսպիտալի հիվանդ, ես Դամասկոսում տեսել եմ, թե ինչպես հարևան շենքերում օրական տասնյակներով մեռնում էին անտերունջ զինվորները: Շատ վատ էին կերակրում, քանի որ ավելի արժեքավոր մթերքը գողանում էին համբարակներն ու սպաները: **Չհաշված լավահամբավ որոշ զորամասեր՝ թուրքական բանակն ամբողջ պատերազմի ընթացքում սովամահ է եղել:** Թուրքական բանակն ունեցավ երկու միլիոն զոհ, որոնցից ռազմաճակատում հնարավոր է զոհված լինեին ամենաշատը 500000-ը:

Միլիոնների շան օրվան հակադրվում էր շատերի, հատկապես բարձրաստիճան սպաների շվայտ կյանքը: Այդ սուր հակադրությունն, այնուհանդերձ, այնքան համբերատար գերմանացիներին կմղեր զոհաբեր բախումների և մարդասպանության: Ինքնըստինքյան հասկանալի էր, որ սպաները պիտի գողանային, մանավանդ որ նրանք հաճախ ամիսներով ստիպված էին լինում սպասել իրենց աշխատավարձին: Թուրքական բանակը տոկոսային հարաբերությամբ ավելի շատ սպաներ ուներ, քան գերմանականը: Իսկ այդ պարոնները, բնականաբար, ուզում էին հնարավորին չափ հաճելի կյանք վարել: Եվ գերակշիռ դեր էր խաղում կաշառքը՝ բ ա ք շ ի շ ը, հատկապես վերին ատյաններում: Աշխարհամարտի ընթացքում Դամասկոսում լինում էին ամենաանհավատալի կաշառակերության խայտառակություններ: Դամասկոսի ռազմական պարետության ղեկավարությունը առնվազն կես տարին մեկ փոխում էր իր տնօրենին: Այդ կարճ ժամանակահատվածում տվյալ ղեկավարը «վաստակած էր լինում» իր կարողությունը: Դամասկոսի վաճառականներն այդ մասին կարող էին զարմանահրաշ բաներ պատմել, թե ինչ գումարներ էին խլվում իրենցից այդ կարճ ժամանակի ընթացքում:

Իսկ զորանոցներից լսվում էին այն խեղճ մարդկանց ցավագին գոռոցները, որոնք աննշան օրինազանցության դիմաց ստանում էին իրենց բասթոնադը՝ հարվածներ մերկ ներբաններին՝ մինչև որ պայթում էր մաշկը: Արդեն 1915 թ. փողոցներում կարելի էր տեսնել բութ հայացքով մարդկանց պարաններով իրար կապած խմբեր, որոնց բռնել էին որպես դասալիքներ և զորանոցում ենթարկում էին մշակման, ինչին յուրահատուկ վարպետությամբ տիրապետում էին «Արևելքի ազնվայրերը» ... Խոշտանգում և սով:

Աշխարհամարտի առաջին տարում արդեն կային հարյուր հազարավոր դասալիքներ: Ով կարողանում էր վճարել 47 ֆունտ, դրանով ազատվում էր մարտական ծառայությունից: Սակայն խեղճ մարդը, հատկապես եթե նա քրիստոնյա էր, պետք է ընտրություն կատարեր զորամասի անասնական վերաբերմունքի և թաքնվելու փորձի միջև: Երկրի միակ տեղը, ուր հարթ էր ընթանում զորահավաքը, Անատոլիայի զուտ թուրքական շրջաններն էին: Հակառակ դրան, Միջագետքում և Սիրիայում արդեն 1916 թ. իրարանցումն այնքան մեծ էր, որ փոխարքա Ջեմալ փաշան մի օր հրաման արձակեց՝ մահապատժի ենթարկել բոլոր բռնված դասալիքներից յուրաքանչյուր տասներորդին: Մի օր ես Դամասկոսի փողոցներում ու հրապարակներում իրոք տեսա 24 կախաղան, որոնցից դասալիքներ էին կախված: Եվ համարյա ամեն օր մեր ծուլագործարանի կողքով մի սայլ էր անցնում, որից ծորում էր գնդակահարված դասալիք-դավաճանների արյունը:

Թղթակիցները դա մեզ չէին պատմում: Գրաքննության անհաշիվ ատյանների համար, որոնք Գերմանիայում հասարակական կարծիք էին ստեղծում, պիտի ամեն ինչ կատարյալ ներկայանար:

## ԹՈՒՐԹ ՓԱՇԱՆԵՐԸ ԵՎ ԳԵՐՄԱՆԱՅԻ ՄՈՒԿԱՐՆԵՐԸ

Անկարան այս օրերին հրաժարվեց փաշայի տիտղոսից և դրանով հերթական մի կտոր ռոմանտիկա շարտեց պատմության աղբադուլի մեջ, մի կտոր արյունաշաղախ, ահավոր, մեզ՝ արևմուտքցիներիս համար առասպելական դարձած իշխանության կատարելությունից, որն անհատներին թույլ էր տալիս ամեն տեսակ, թեկուզ և այնքան խելահեղ տրամադրության գոհացում: Վիլհելմ II-ը սիրով կզլխատեր իր պալատականներին: Դա պիտի բարի ցանկություն մնար: Նրա բարեկամ Աբդուլ Համիդը կարող էր նաև կտրած գլուխներն իր ոտքերի մոտ գլորել տալ: Ի՞նչ բախտի կարժանանային սոցիալ-դեմոկրատները, եթե Վիլհելմը կարողանար վարվել այնպես, ինչպես ինքն էր ուզում: Երբ Աբդուլ Համիդի երևակայությունն առանձնապես գրգռված էր լինում ֆրանսիական հեղափոխության զարհուրելի պատմությունների ընթերցումով, նա ի վիճակի էր լինում դեռ հայերի ջարդի

ուղղակի հրաման արձակել, և հաջորդ օրն իսկ Ստամբուլի ու Ադանայի փողոցները սփռված էին լինում սպանվածների դիակներով: Մեր որոշ գեներալներ, անշուշտ, գոռոզամուս էին Բելգիայում և Լեհաստանում, բայց այնուամենայնիվ նպատակահարմար էին համարում իրենց համար վերցնել ղեկավարի մի տեսակ վկայական՝ 93 զիտնականի ստորագրությամբ: Թուրք տիրակալների համար արգելքի հետքն իսկ գոյություն չուներ: Սահուն գերմաներեն և ֆրանսերեն խոսող այս աղաները պատերազմի ընթացքում սեփական երկրում իրենց ավելի վատ էին պահում, քան անգլիացիները՝ Տրանսպալում: **Էնվեր փաշան սպաներին ապտակում էր հավաքված շարքային կազմի ներկայությամբ:** Որպես Սիրիայի փոխարքա, Ջեմալ փաշան պահանջ զգաց գեղեցկացնել իր աթոռանիստ Դամասկոս քաղաքը: Նրա համար փողոցները բավարար չափով լայն չէին: Դրա համար էլ նա մի օր երկար փողոցի բնակիչներին սփններով քշել տվեց տներին և զինվորների ուժերով քանդել տվեց շենքերը: Անօթևան դարձած մարդիկ եկել և ուզում էին գտնել իրենց ապրած տեղը ... բայց փողոցն ավելի էր լայնացել: Երբ 1915 թ. վտանգ կար, որ Դարդանելը չէր դիմակայի դաշնակիցների հարձակումներին, սուլթանն ստիպված էր իր արքունիքով տեղափոխվել Էսքի-Շեհիր: Այնտեղ, տների մի ամբողջ շարք վերացվեց մի ժամվա ընթացքում: Բնակիչները պառկած էին տառացիորեն փողոցում: Բայց թեև Մեհմեդ Ռեշադ V-ը կարողացավ մնալ Ստամբուլում, այնուամենայնիվ, փողոց շարտվածներին մինչև պատերազմի ավարտը իրենց բնակարանը չվերադարձվեց: 1917 թ. ամառային մի վաղ առավոտ Դամասկոսի շուկայի հրապարակում ես տեսա **յոթ կախաղան:** Դրանցից կախված էին սիրիական երևելի ու հարուստ ընտանիքների գլխավորները: Այդ նույն ժամին կախաղան հանվեցին Բեյրութում՝ քսանհինգ, Երուսաղեմում՝ յոթ, Հալեպում՝ յոթ, Հոմսում՝ չորս բարձրաստիճան անձինք: Ջեմալ փաշան կարգադրեց հաղորդել ապշած հասարակայնությանը, որ մահապատժի ենթարկվածները գերդավաճաններ են եղել: Նրանց ամբողջ ունեցվածքը բռնագրավվեց պետության կողմից: Եվ դա, ամենյան հավանականությամբ, ահավոր ոճիրի գլխավոր նպատակն էր:

Ջեմալ փաշան Էնվերի ամենաաչքի ընկնող մրցակիցն էր: Թեև Ջեմալը ռազմածովային նախարար էր, բայց ամբողջ պատերազմի ընթացքում գլխավոր հրամանատար էր Սիրիայում: Ու-

րենն Էնվերն էր միահեծան վճիռ կայացնողը ռազմական բոլոր հարցերում: Նրա կարծիքով Ջեմալը երբեք էլ բավական վճռականություն չի ցուցաբերել: Այնուհանդերձ, Ջեմալի ենթակայության տարածքում այնքան շատ բռնություններ էին ծավալվում բնակչության դեմ, որ դրանց նկարագրության համար հատորներ են պետք: Երևի թե դրա գլխավոր մեղսակիորը ևս համակարգն էր, բայց գերմանացի պատասխանատու անձանց չէր կարող անտարբեր թողնել այն, որ Սուեզի ջրանցքի թուրքական ռազմածակատում չափանիշ ծառայող այրը հանրության կարծիքով ոչ միայն անկարող էր ռազմական առումով, այլև առավել շատ համակրում էր Անտանտին, քան Կենտրոնական Եվրոպայի երկրներին: Բայց բեռլինցիների համար ըստ երևույթին բավական էր, որ փաշաները նրանց թույլ էին տալիս հենց Թուրքիայում անընդհատ ձեռնարկել երևակայական պլաններ: Բաղդադն ու Դամասկոսը դարձան ելման կետեր գերարկածային և ամենաանհմաստ արշավախմբերի համար: Ջինված տոզած քսակներով՝ նրանք ձգվում էին դեպի Պարսկաստան և նույնիսկ դեպի Աֆղանստան (Հնդկաստան տանող ուղին)՝ առանց գաղափար իսկ ունենալու, թե մարդիկ, ի դեպ, ի՞նչ էին ուզում այդ երկրներում: Փաշաներն էլ սկսեցին կասկածել, որ Բեռլինում կորցրել են բանականությունը: Դամասկոսից Հեջազի և Կարմիր ծովի վրայով մի գորայուն ձգվեց դեպի Հաբեշտան՝ այնտեղի կայսերը հանձնելու Գերմանիայի կայսեր անձնական ձեռագիր նամակը: Դժբախտաբար Հաբեշտանի կայսր Նեգեսթին չիրագործեց Վիլհելմ II-ի գայթակղիչ պլանը՝ հենց Կենտրոնական Աֆրիկայից ոտնատակ տալ եգիպտոսը: Դա շողշողուն ժամանակ էր բոլոր հնարավոր արկածախնդիրների համար: Ամենախայտաբղետ ֆիզուրը ծերունի շեյխ Աբդուլլահն էր, որն իր գորայսյան հետ Կարմիր ծովի ափին հետ էր շարտվել բեղվիների կողմից և մեծ չարչարանքով կրկին հաղթահարում էր Դամասկոս տանող ճանապարհը: Աբդուլլահը ծագումով գերմանացի էր, և իսկական անունն էր Քարլ Նոյֆելդ: Ութսունական թվականներին նա գերեվարվեց Վերին Եգիպտոսում Մախդիի՝ նոր մարգարեի կողմից և բանտարկվեց յոթ տարի, մինչև որ նրան ազատեց Քիչիները՝ Օմդուրմանի դահիճը: Նոյֆելդը, որն ի դեպ իր տառապալի ժամանակաշրջանի մասին շատ ընթերցվող մի գիրք էր գրել՝ «Խալիֆի շրթաներով կապկապած», քառասուն տարուց ի վեր մահմեդական էր, արաբերենի հիմնավոր գիտակ, բայց մուլագար, բացարձակ անընդունակ լըր-

ջորեն կատարելու որևէ հանձնարարություն: Նա ապրում էր Դամասկոսում, իմ անմիջական հարևանությամբ, հեքիաթային իշխանի նման և անտարակույս կդառնար Վիլհելմի դեսպանը սենուսիների մոտ, եթե չլիներ նրա վերահաս մահը 1918 թ. ամռանը, Բեռլինի մոտ գտնվող Բուխ քաղաքի հիվանդանոցներից մեկում:

Այնչափով, որչափով փաշաները գիտակցեցին այն անպլանայնությունն ու անվճռականությունը, որով գերմանացիները հանդես էին գալիս թուրքիայում, իրենք փրվեցին իրենց ինքնիշխանությամբ: Այդքան հարմարավետ նրանք դեռ երբեք չէին կարողացել կառավարել: Պատերազմական դրությունն սկսվելուն պես՝ նրանց համար վերացավ արտաքին աշխարհի որևէ կարծիք հաշվի առնելու ամեն մի հիմնավորում: Հեծյալ գունդը ցամաքում ոչ մի արգելք չէր ընդունում: Դաշնակիցն ամեն օր իրեն կոտորում էր սիրո բացատրության մեջ հանուն այն ամենի, ինչ թուրքական էր: Նախարարները հաղթական ընդունելության էին արժանանում Գերմանիայում: Գերմանիան դրանից զատ ստանձնեց թուրքական ռազմական ապարատի ֆինանսավորումը: 10900 միլիոն ոսկեմարկ, դրանից 3900 միլիոնը զուտ ոսկով, ուղարկվեց Կոստանդնուպոլիս ու Սոֆիա: Նման գահավեժ հոսքի մեջ ֆունտը, ֆրանկը և ռուբլին երբեք այնպես չեն գալարվել, ինչպես ահա մարկն էր գալարվում: Բեռլինը երազում էր ոչինչ բաց չթողնել՝ թուրքական տեսանկյունից իրականացնելու հաղթանակի նախադրյալները: Գործի անցան թալեաթն ու էնվերը: Նրանք մարտադաշտը տեղափոխեցին իրենց երկրի ներսը և այնտեղ հաղթեցին իրենց թշնամուն այնպիսի հիմնավորվածությամբ, որը իրավունք է տալիս նրանց անունները թվարկելու ընդամենը պատմության ամենահայտնի դահիճների շարքում:

## ԹՈՒՐԶԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ավելի քան մեկ միլիոն անպաշտպան հայերի կոտորածը կարելի է հնարավոր համարել միայն, եթե պատկերացնենք թուրքական կայսրության կազմավորման ընթացքը: Պատմության այս հատվածը սարսափներով ու ոճիրներով գերազանցում է համաշխարհային պատմության յուրաքանչյուր այլ դարագլխի: Աներևակայելի է թվում, թե որչափով կարող էր հանդարտվել օսմանյան կայսրության մեծերի՝ մինչև նորագույն ժամանակներս շա-

րունակվող կամայականությունը դաշույնի, թույնի, խեղդամահ անելու և անամոթ գողության ուղեկցությամբ: Հիշենք, որ Աբդուլ Համիդի արյունալի ոճրագործությունները մեծ մասամբ կատարվում էին հենց մեր դարում: Բայց դա չէր խանգարում Գերմանիայի կայսրին լինելու դարանակալ մարդասպանի բարեկամը, ինչպես պարսիկ հրեշ Նասրեդդինի դահճությունը հետ չէր պահում եվրոպացի գերիշխաններին այնպես հանդիսավոր մեծարելու արյունարբու շահին, ինչպես հիմա՝ պարոն Ամանուլլահին:

Բ ո ճ ո լ թ յ ո լ ն, **բռնություն** և դարձյալ **բռնություն**. սա է թուրքական պատմության խորհրդանիշը: Այդ նույնը չի՞ կարելի ասել նաև համարյա բոլոր ժողովուրդների պատմության վերաբերյալ: Անշուշտ, սակայն աշխարհի չափանիշ ծառայող ոչ մի մասում կործանարար ուժերն պյնպիսի բացառիկությամբ չեն իշխել, սուրն իրավունք չի ունեցել այնպես ճնշել հոգևոր, վերակառուցող ուժերին, ինչպես թուրքիայում:

*200 մեծ վեզիրներից 76-ը մահացել են ոչ բնական մահով: Սպանվել է բոլոր սուլթանների մեկ երրորդը:*

Այն բանից ի վեր, երբ Չինգիզ խանի հորդան Սուլեյմանի թուրքական մի փոքրաքանակ բազմությունը քչեց բերեց և ստիպեց բնակություն հաստատել Անատոլիայում, թուրքերն ապրել են միայն թրի եկամտոտով: Նրանք իսկույն դարձան ռազմածորտերը այն սելջուկների, որոնց հողը իրենք արագությամբ յուրացրին և փառահեղ շինությունները կործանեցին: Դեռևս Օսմանը՝ այն ցեղապետը, որի անունով կոչվեց թուրքերի դինաստիան, երազում էր համաշխարհային տիրապետության մասին: Նա փառաբանվում է հատկապես նրանով, որ նետահարել է իր 90-ամյա հորեղբորը, որն ուզեցել է խանգարել նրան՝ նվաճելու ինչ-որ մի ամրոց: Նրա որդին՝ Օրխանը (1326-1359 թթ.), ստեղծողն էր եմիլիներին գործափափորման, որն իր արարքներով եվրոպան ու Ասիան շուտով պիտի լցներ ահուսարսափով: Դա մեկն էր այն ամենաարտասովոր մշտական բանակներից, որ հայտնի է ռազմական պատմությանը: Այն համալրվում էր քրիստոնյա տղաներով, որոնց ավարում էին ռազմարշավների ժամանակ կամ քաշում տանում էին Փոքր Ասիայի հույն և հայ ընտանիքներից: Արդեն տասը տարեկանից սկսվում էր ռազմատենչ կրթությունը: Մնուցումը պարզապես արտակարգ էր: Դրան տրվում էր այնպիսի նշանակություն, որ մսի կաթսան դարձավ գնդի խորհրդանիշը, իսկ գնդապետը կրում էր չ ո ռ բ ք ի տիտղոսը: Մասնագի-

տացած զինվորների այս շփացած պրետորյան գվարդիայով առաջին սուլթանները գերազանցում էին իրենց ժամանակի յուրաքանչյուր այլ ռազմատենչ տերության:

Կոնստանդինոպոլիսի մոտ ընկած Անգելֆելդ կոչվող ռազմի դաշտում տարած հաղթանակով, որտեղ 1389 թ. ջախջախվեց Սերբիայի պետական իշխանությունը, Սուրադ I-ը թուրքական կայսրությունը դարձրեց աշխարհահռչակ տերություն: Ճակատամարտում Սուրադը ընկավ սերբի դաշույնից: Նրա որդի Բայազիդ I-ն իր իշխելու գործունեությունն սկսեց եղբորը խեղդելով և դրանով մտցրեց զարհուրելի մի սովորույթ. համարյա յուրաքանչյուր գահակալություն ուղեկցվում էր **եղբոր և ազգականի** սպանությամբ: Սուլթանը III-ը (1595-1603) այդպես քառասյուն գահի առաջ **թուրգի նման իրար վրա կիտել տվեց իր տասնյոթ եղբայրների գլուխները**: Գահաժառանգները քշվում էին **արքայազնականակի** մեջ, ուր հաճախ անցկացնում էին իրենց կես կյանքը՝ նյարդայնացումը փարատելով ալկոհոլով ու կանանցով, այնպես որ «կալանավորները», հասնելով իշխանության, մեծ մասամբ տհաս էին լինում պատասխանատվության համար: Օսման մեծ նվաճողների համար ընդունելի էր միայն, որ իրենց տերությանը կցեին ընդարձակ հողային տարածություններ, ավար վերցնեին ու ժողովուրդներին շահագործեին: Թուրքիան հաճախ անվանել են «Արևելքի Պրուսիա»: Եթե վայրագ բռնությունը պիտի լիներ պրուսականության առանձնահատուկ հատկանիշը, ապա թուրքերը, համենայն դեպս, դեռ ավելի շուտ և առավել հաջողությամբ պրուսացիներ կլինեին, քան Գոհենցուլերների հպատակները: Սակայն երկուսին էլ հատուկ է բարոյապես նվաճելու անկարողությունը:

Սուլթանի պալատը պիտի որ հսկա տերություն սնուցող կենտրոն լիներ. սակայն նա գնալով դառնում էր լափող ուռուցք, որ կասեցնում էր օրգանիզմի աճը և ուժասպառ անում նրան: Եսքի - պալատը, որի անհամար սենյակների խառնափնթորությունը այսօրվա դիտորդի համար լի է անթաքույց սարսուռով, ինչ-որ ժամանակ, Սուլեյման Մեծի (1520-1566 թթ.) բառերով ասած, եղել է **աշխարհի կենտրոնակետը**: Բուղապեշտից մինչև Պարսկաստան և Թունիս ընկած տարածության տիրակալներն այստեղ ունեին իրենց աշխարհը, մի առկայծող աշխարհ, մի հեքիաթ հազար ու մի գիշերից՝ ստեղծված բոլոր դժոխքներով ու դրախտներով: Մի աշխարհ, որն իր ամենափայլուն ժամանակներում նե-

րառում էր բոլոր ժողովուրդների **հազար ամենագեղեցիկ կանանց և քսան հազար պալատականների**, որոնց ծառայական պարտականությունները ամփոփված են հիսուն հատորներում: Այստեղ իրենց տեղն են ունեցել Կլավդիոսի, Կալիգուլայի, Ներոնի, Դոմիցիանի բոլոր մոլեգնությունները, ինչպես նաև Ալեքսանդրի ու Կեսարի՝ իշխանությամբ արբեցումը: Այստեղ կարող էր որևէ բռնակալի ճակատի կնճռոտումը հարյուր հազարավորների համար մահ նշանակել. այստեղ պետք է եվրոպական երկրների դիվանագիտական ներկայացուցիչները խոնարհվեին սուլթանի առաջ այն բանից հետո, երբ նրանք ժամերով հլու-հնազանդ սպասել էին, և պալատականները խուզարկել էին նրանց գրպանները: Թուրքիան իր փայլուն ժամանակներում դեսպաններ չէր ուղարկում օտար երկրներ: Ստամբուլը՝ սուլթանի ապարանքը, աշխարհի կենտրոնն էր: Եվ այնտեղ իշխում էր սարսափը: Ինչպես առասպելական Թուրանդոթ արքայադստեր ամրոցում՝ պալատի սրահներում մահապատիժներ էին ի կատար ածվում: Եվ այն մախարարները, որոնք դեռ հենց նոր իրենց աչքի առաջ գլխատել կամ խեղդամահ էին անել տալիս որևէ ամբաստանյալի, պիտի ակնկալեին, որ որևէ որոշակի դարպաս մտնելուն պես իրենք պիտի բռնվեին և տեղնուտեղը մահապատիժ ենթարկվեին: Քանզի ամեն ինչից վեր էր մեծ տիրակալի քմահաճույքը, իսկ երբեմն դրանից էլ վեր էր երջանկության թե դժբախտության պահերին համերաշխ ենդիչերիների կամքը: Պալատի մախարակում ենդիչերիների չինարի ծառն էր, որի տակ զինվորականությունը կտրում էր այն բարձրաստիճան պաշտոնյաների գլուխները, որոնք դուր չէին գալիս թուրքական կայսրության զինված ուժերին: Գլխավոր դարպասի մոտ (Բաբ ի Գունայուն) դեռ կարելի է տեսնել այն որմնախորշերը, որոնցում, կեռ մեխերին ամրացված, ժողովուրդներին ի ցույց էին դրվում գլխատվածների գլուխները: Անկումը աստվածակերպությունից դեպի ոչնչություն միայն մի քայլ էր, ճիշտ այնպես, ինչպես միայն մի քայլ էր անընդունակ ստրուկից մեծ վեզիր դառնալը, եթե նա ակնթարթի բարեհաճությամբ դուր գար սուլթանին:

Առաջին սուլթանները զինվորական կայսրերն էին, ինչպես Ասորեստանի տիրակալները: Նրանք իրենց իսկ զորապետներն էին. նրանցից մի քանիսը, ինչպես Սուրադ I-ը, Բայազիդ I-ը և Սուլեյման II-ը ընկան ռազմի դաշտում: Նրանց գործողությունները դաժան էին, հաճախ՝ բարբարոս, բայց ամենայն անսահման



ամբարտավանության դեպքում էլ նրանք, այնուհանդերձ, ունեին պատասխանատվության ու վեհության մի աննշմար շող: Դրանք ուժեղ խառնվածքով անձինք էին: Բայց խելացնորությունը պիտի շուտով բոլոր ձևերով ցնցեր օսմանի տունը: Ինչը Հարսբուրգների, Վիթելսբախների և Յոհենցուլերների մոտ կործանվեց ազգակիցների բազմացումով, պիտի սուլթանների մոտ ընթանար սանձարծակ **անբարոյականությամբ**: Յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր թագադիր վիժվածքը: Օսմանների մոտ կարելի է գտնել **նույն** հերթականությամբ, **նույն** գահի վրա, **նույն** ժողովրդի վրա բաց թողնված խեղկատակներ, հանցագործներ ու անառակներ, ինչպիսիք են Իվան Ահեղը, Ֆիլիպ II-ը, Ալեքսանդր VI պապը, Էյուդովիկոս XV-ը, Ֆրիդրիխ Վիլհելմ I-ը և II-ը: Եվ չի կարելի զարմանալ, որ գերազանց կազմակերպված ենիչերիները առավել հաճախակի էին կարողանում պետության ներսում պետություն ստեղծել և անօրինակ ազդեցություն ունենալ: Նրանք սուլթաններին հղիացնում ու կատաղեցնում էին, փաշաներին՝ պետությանը խաբել տալիս: Կուսակալները կարող էին գավառները սարսափելի տանջանքի ենթարկել, բայց վա՛յ այն սուլթանին կամ մեծ վեզիրին, ով կհանդգներ նվազեցնել ենիչերիների արտոնություններից մեկնումեկը: Նրա կտրված գլուխը հաջորդ առավոտն իսկ կգարդարեր Բաբ ի Հումայունի կողքի որմնախորշերից մեկը: Այդպես իրենց վախճանն ունեցան երկու սուլթան և քսաներկու մեծ վեզիր: Եվ թուրքիան դեռ հարյուր տարի առաջ կփլուզվեր ենիչերիների բռնակալական իշխանությունից, եթե 1828 թ. Մահմուդ II-ին չհաջողվեր Հուսեյն փաշայի ջանքերով Կոստանդնուպոլսի ձիու շուկայում **գնդակոծությամբ վերացնել այդ անհնազանդ տղաներից** 40000-ին:

Եթե մարդ այսօր ինքն իրեն զարմացած հարց տա, թե առհասարակ ինչպե՞ս հնարավոր եղավ, որ գերմանական հզոր տերության ղեկավարությունը համաշխարհային պատերազմի ժամանակ այնքան թուլական գտնվեց երիտթուրքերի հանդեպ, ապա ինքը դա չի կարողանա բացատրել միայն այն անտարբերությամբ, որը պատերազմի ընթացքում գոյություն ուներ ընդհանուր առմամբ ամենազարհուրելի արյան խրախճանքների հանդեպ: Ո՛չ, բոլոր տեսակյուններից երիտթուրքերը նախորդ թուրքերի ժառանգորդներն էին: Այս նորելուկները համակված էին իշխանության հասնելու դիվային կամքով: Նրանք համաձայն էին թուրքիային կրկին հսկայի կերպարանք տալու ամեն մի միջոցի,

որպիսին նա երբեմնի եղել էր, որպեսզի իրենք մյուս տերությունների հետ վարվեին այնպիսի վայրագությամբ, ինչը նրանք հարյուրամյակներ շարունակ համբերությամբ հանդուրժել էին: Պատերազմի ժամանակ թուրքիայում ապրող ոչ բոլոր գերմանացիներին են դարձել «թուրքոֆիլ», ինչպես ուզում է մեզ ներկայացնել պարոն Յեքը, ոչ, նա պարտավոր էր միայն ներթափանցող հայացքով նայել էֆենդիների շողոքոթ դիմակի միջով, լսել, թե ինչ էին խոսում մարդիկ՝ միայն տեսնելու, թե ինչպես մենք յուրաքանչյուր քայլափոխի խաբվում էինք և կողոպտվում, այդ դեպքում նա կիմանար, որ մենք լուկ միջոց էինք նպատակի համար, գործոն՝ ինչ-որ հաշվարկի մեջ, ինչը միայն իրենց ու իրենց կլիկի համար մտադիր էին կատարել պարոնայք Թալեաթը և Էնվերը:

Կայսր Ֆերդինանդը 1528 թ. հունգար Հաբերդանաչին դեսպան ուղարկեց Ստամբուլ: Երբ նա կայսեր հանձնարարությամբ պահանջեց մերձդանուբյան որոշ վայրերի վերադարձումը, ինն ամսով բանտարկվեց: Ռուսական ցար Վասիլի Իվանովիչը երկու դեսպան ուղարկեց դեպի Բելգրադ ճամփա բռնած ռազմական ճամբար՝ սուլթան Սուլեյման II-ի մոտ: Երկուսն էլ այլևս չվերադարձան: Երբ մի վեներտիկցի դիվանագետ 1572 թ. Լեպանոյի ծովային ճակատամարտում թուրքիայի կրած պարտությունից հետո եկավ Ստամբուլ՝ սուլթանի հետ հաշտություն կնքելու, ստացավ «թուրքական» պատասխան. **նրան ցույց էին տվել Կիպրոսի պաշտպանի՝ ողջ-ողջ մորթազերծ արված վեներտիկցի Բրազադինոյի դաբաղած կաշին**: 1632 թ. թուրքերը կողոպտել էին ֆրանսիական մի նավ: Դեսպանորդը իր թարգմանի միջոցով սուլթանին էր հանձնել մի բողոք: Ի՞նչ արեց սուլթանը: Սուրադ IV-ը, որը լավագույն սուլթաններից մեկի համբավ ուներ, իր աչքի առաջ դժբախտին ողջ-ողջ ցցի հանել տվեց: Բնականաբար, թուրք մեծավորները երկու հարյուր տարուց ի վեր այլևս չէին կարող նման իրեշավորություն թույլ տալ իրենց՝ ուրիշ տերությունների հանդեպ: Բայց որտեղ պատեհություն է եղել, նրանք բաց են թողել իրենց արյունարբության սանձերը: Դեռ հարյուր տարի առաջ, Հունաստանի ազատագրության պայքարում, նրանք Քիոսում և Փսարայում մորթեցին 50000 տղամարդ, կին ու երեխա, իսկ 50000 հոգու էլ վաճառեցին ստրկության: Դելաքրուան դա պատկերել է իր կտավի վրա, որը պահվում է Լուվրում: Վերջին տասնամյակներին հայերի սպանությունները գնալով դարձան

ասվելի հաճախակի և առավել զարհուրելի: Արդեն որոշ բաներ ասվել են այն ահաբեկումների մասին, որոնք տեղի ունեցան դեռևս մեր ժամանակներում՝ Աբդուլ Յամիդի իշխանության ներքո: Սակայն թուրքական պատմության բ ո լ ո Ր սարսափների պատկեր 1915 թ. կովկասյան ցեղասպանությունն էր:

\* \* \*

Թուրք ժողովուրդը մշակույթ ունեցող ժողովուրդ է՝ բառիս լայն իմաստով: Նրա լեզուն կանգնած է նեգրական իդոմի մակարդակի վրա, բայց նորակոչիկների վարժեցման համար նմանը չունեցող լեզու է: Գրականության մասին հազիվ թե խոսք կարող է լինել. ինչ ստեղծվել է այդ բնագավառում, մասամբ շատ վիճելի պատճենումներ են՝ վերցրած պարսկական և արաբական մատենագրության մեծ գանձարանից: Բացի դրանից, թուրք գրողներն օգտվում էին այն, այսպես կոչված, մտավորական լեզվից, որն իր վերամբարձությամբ ոչ մի հասարակ թուրքի կողմից չի ընկալվում: Երբեք գոյություն չի ունեցել թուրքական ճարտարապետություն: Իրենք պարզապես կործանել են այն ամենը, ինչ ժառանգել են նախորդ ժամանակներից: Վիթխարի կառույցները ծագում են նախաթուրքական ժամանակներից (Այա Սոֆիան, Նեֆրիտե մզկիթը\*) կամ էլ կառուցված են սուլթանահպատակ քրիստոնյա ճարտարապետների կողմից: Գիտությունը տեղ չի ունեցել թուրքական հողում: Թուրքը կարողացել է ընդօրինակել, այն էլ խիստ մակերեսայնորեն, առանց սակայն հոգևոր որևէ բնագավառում իսկապես ստեղծագործաբար աշխատելու:

**Սակայն Թուրքիան վարել է պատերազմներ, պատերազմներ և դարձյալ պատերազմներ:** Նա եղել է երկրագնդի ամենառագմատենն չպետությունը: Որտեղ նժարի վրա պետք էր դնել բռունցքը, ահը, ավերումների կատաղությունը և ոչ թե ոգին ու գաղափարը, այնտեղ եղել է էֆենդիների ակտիվ գործունեության դաշտը: Գերմանիայի համար խայտառակություն է, որ ինքը դաշնակից դարձավ եվրոպական ձևով հարդարված այն հանցագործների հրոսակախմբին, որոնք սպասում էին միայն հարմար վայրկյանին՝ իրագործելու համաշխարհային պատմության ամենախոշոր ավազակային կոտորածը:

\* Իմա՝ Կապույտ մզկիթը:

## ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Հայերը, ինչպես և մյուս բոլոր ժողովուրդները, հրեշտակ չեն: Բոլորի նման նրանք էլ իրենց հատկանիշներով ձևավորվել են հարազատ եզերքի առանձնահատկությունների և մշտափոփոխ պատմության ընթացքի ազդեցությամբ: Հազարամյակներ ի վեր այս ժողովրդի բախտը որոշվել է Առաջավոր Ասիայի բոլոր մեծ տերությունների՝ հայկական լեռնանցքներին տիրելու կամքով: Ատրեստանցիները, պարսիկները, հռոմեացիք, պարթևները, արևելյան հռոմեացիք, թուրքմենները, մոնղոլները, սելջուկները, թուրքերը, նորպարսիկները և ռուսները գոտեմարտել են հանուն Կովկասի և մուգ կանաչագորշավուն հողագույն երկիրն անընդհատ ներկել են արյամբ, ստիպել, որ ձորերն արծազանքեն պատերազմի ֆուրիայի մոլեգնությունը և տանջահար մարդկանց վայնասունը: Ինչ էլ զգաս-Լոթարինգիան, Լեհաստանը, Իռլանդիան հանդուրժել են հարյուրամյակներ, Հայաստանը ստիպված է եղել տոկալ հազարամյակներ:

Հավանաբար, հայերն իրենց երկրի անդրենածիններն են: Դին հայերենը, որն այսօրվա խոսակցականից այնքան է տարբերվում, որքան Պերիկլեսի լեզուն այսօրվա հույների լեզվից, անկասկած հնդեվրոպական է:

Այս ժողովրդի համար տարակարգ դժբախտություն է եղել, որ ինքն իր երկիրը երբեք միայնակ չի բնակեցրել: Նա ապրում էր հովիտներում, մինչդեռ բարձրլեռնային վայրերում մոտ 4000 տարուց ի վեր մնում էին ք ո դ ե Ր ը, որոնք բեդվինների նման երբևէ նստակյաց չեն եղել, մնում էին կիսաքոչվոր և չէին ճնշվում որևէ նվաճողի կողմից: Քրդերն ու հայերը միշտ էլ ոխերիմ թշնամիներ են եղել: Հովիտներում ապրող հողագործ և առևտրով զբաղվող հայերը միշտ ենթարկվում էին քրդերի ավազակային հարձակումներին: Եվ բոլոր կոտորածներում, ինչպես նաև 1915 թվականին հայերին բնաջնջելու գործում, քրդերն աղետալի դեր են խաղացել:

Հայերը քրիստոնյա են: 301 թ. նրանց Տրդատ II թագավորը մկրտվեց Գրիգոր Առաքյալի կողմից: 451 և 491 թթ. եկեղեցական ժողովներում նրանք բաժանվեցին մեծ եկեղեցուց, կազմեցին սեփական եկեղեցական համայնք՝ Գրիգոր Լուսավորչի անունով: Հայ եկեղեցին իր սովորույթներով այնչափ թմրած է, որ օտարը, որ ներկա է լինում եկեղեցական ծիսակատարությանը, կարող է

ստանալ անհոգի տաղտկալի ձևականության տանջալից տպավորություն: Համենայն դեպս, հայկական մի հանդիսավոր հուղարկավորության ժամանակ ես չկարողացա հաղթահարել այդ զգացողությունը: Հայկական կրոնը, սակայն, եղել է ծավալուն գրականության երբեմնի աղբյուրը, որի մեծագույն բանաստեղծներն են եղել Եղիշեն ու Սովսես Խորենացին: Լուսավորչական եկեղեցու հոգևոր առաջնորդը էջմիածնի կաթողիկոսն է, որը գտնվում է ծայրագույն սրբության՝ Սուրբ Գրիգորի աջ ձեռքի հովանու տակ:

Հայ ժողովուրդը թուրքական պետության շրջանակներում բնականաբար վարել է որոշակի ինքնուրույն կյանք: Դա բխում էր նրա յուրահատկությունից, նրա գործելակերպի ոլորտի փակվածությունից: Այդ դեպքում ինչո՞ւ հայերը չէին հարմարվում երկրի տերերին: Եթե այս հարցը տանք լեհերին, չեխերին, ռուսիններին\*, խորվաթներին, այն տանք ամբողջ աշխարհի նախկին և այժմյան փոքրամասնություններին, միշտ ու ամենուրեք կատանանք այն պատասխանը, որ յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր կերպի պահպանման ու հոգացողության հիմնավոր իրավունքը, որքանով որ այդ ընթացքում չի ոտնահարվի մի այլ ժողովրդի նույն իրավունքը: Ո՞ւմ պիտի հարմարվեին հայերը: Թուրք էֆենդիները երկրագնդի ամենակաշառակեր պարոնների կաստան են: Թուրք ժողովուրդը... խեղճ, տանջված, բթացած գյուղացիների մի կարգ՝ կարդալուն ու գրելուն անտեղյակ, իշխող խավի համբերատար գրասուր... Բարեկիրթ ժողովրդի համար այստեղ որտե՞ղ կարող էին ընկած լինել շփման եզրերը: Բայց, այնուամենայնիվ, հայերը շփվեցին, որքանով դա միայն հնարավոր էր: **Հայոց լեզուն գնալով անհետանում էր, թուրքերենը դառնում էր առօրյա լեզու:** Ես չեմ ճանաչել որևէ հայի, որը թուրքերեն չխոսեր: Մոլթեքեն իր մորը հղած, հմտորեն գրված նամակներում փառաբանելով վեր է հանել հայերի ուղղակի մանկական վստահությունը սուլթանի արդարամտության նկատմամբ: Այն ժամանակ, մոտավորապես 1840 թ., հայերի սպանությունները դեռ այդքան սովորական չէին դարձել, և Գերմանիան էլ դեռ թուրքական շահագրգռվածություն չուներ: Բայց 1898 թ., երբ մի կողմից կոտորածները միայն մի քանի տասնամյակի ընթացքում հարյուր հազարավոր զոհեր էին պատճառել, մյուս կողմից, սակայն, գերմա-

\* Ռուսին = ուկրաինացի:

նական հասարակայնությունն արդեն սաստիկ հեղեղվում էր Թուրքիայում գերմանական հեռանկարների մասին վարդագույն նկարագրություններով, Ֆրիդրիխ Նաումանն էր, որ իր «Ասիա» գրքում հայերի նկատմամբ հենց նոր կատարված զանգվածային սպանությունների ազդեցության ներքո չարչրկված ժողովրդի ու նրա ճակատագրի մասին երկարավուն դատողություններ էր անում՝ ուղղակի վաստակավոր քծնողի շողոքորթությամբ:

Հայը հիմնականում ազնիվ աշխատող հողագործ է՝ առանձնապես ցայտուն արտահայտված հակումով դեպի ընտանիքը: Նա երեխասեր է: Եթե նա այդպիսին չլիներ, ապա վերջին տասնամյակների ջարդերը դեռ մինչև 1915 թ. այդ ժողովրդին արդեն արմատախիլ արած կլինեին: Լրիվ խաղաղ կյանքի ձգտումը, կապված շատ հայերի փայլուն բանիմացության հետ, նախադրյալ ստեղծեց այն բանի համար, որ Առաջավոր Ասիայի լավագույն ուսուցիչները, բժիշկները, թարգմանիչներն ու վաճառականները հայեր էին: Արևելյան Անատոլիայում նրանք ծաղկող գյուղատնտեսության ամուր ողնաշարն էին: Ամբողջ երկրի տարածքում, մինչև Սիրիա ու Պաղեստին, արհեստը մեծ մասամբ հայերի ձեռքին էր, ինչպես նաև առևտուրը, որը ծովափնյա շրջաններում, հասկանալի է, նրանք պետք է կիսեին հույների հետ:

Հայերին միշտ էլ երեսով են տվել առևտրական տեսանկյունից թուրքերի բթամտության ու ծուլության իրենց «չարաշահումը»: Ի՞նչ է՝ հայերը պիտի ջանային լինել նույնքան ծուլ ու տգետ, ինչպես թուրքե՞րը: Չէ՞ որ համաշխարհային հաղորդակցությունը չէր կարող կանգ առնել Թուրքիայի սահմանների առաջ: Հայերը կամուրջներ գցեցին դեպի եվրոպական առաջընթացը: Դա խիստ բնական, հարակից երևույթ էր, որը պետք է բխեր նրանց առևտրական գործունեությունից: Անշուշտ, նաև սեփական երկրի թերությունները և կառավարողների հանցանքներն ու սխալները պիտի պարզորոշ հառնեին այն առևտրականի աչքերի առաջ, ում արտաքին աշխարհի հետ համագործակցության մեջ քաջածանոթ էին ժամանակակից մտածողությունն ու ժամանակի ոգուն համապատասխանող մեթոդները: Որ որևէ հայ հարստանում էր, որ ամբողջ ժողովուրդը ձգտում էր ամրապնդել իր հոգևոր գերակշռությունը երիտասարդության՝ Եվրոպայի հետ ունեցած կապով, և որ կենդանանում էր այն միտքը, թե ինքը չպետք է լինի պարբերաբար կրկնվող ջարդերի մշտական օբյեկտը, դա հենց այն էր, ինչը երբեք չէր ների թուրքը: Վերջինս իր նեխած պե-

տությունը տեսնում էր երեքալիս և գլխի չէր ընկնում, որ կործանումը կարելի է կանխել միայն անցյալի մեթոդներից հրաժարվելով, միայն արմատական բարեփոխումներով: Թուրքը զգում էր կերտելու իր անկարողությունը, ինքը միշտ եղել էր բիրտ ուժով տիրող իշխանը, իսկ այնտեղ արդեն կար մի ժողովուրդ, որը իրավամբ ամբողջ աշխարհով մեկ գոռում էր, որ իր նկատմամբ անընդհատ վրդովեցուցիչ վայրագություններ են կատարվել:

Իսկ ի՞նչ կարող էր տեղի ունենալ: Պիտի զիջումներ անելն և հայերի հետ համերաշխ ապրել կարողանային: Կամ պիտի շարունակելն կոտորել, պիտի բնաջնջման ենթարկելն հայերին և թողնելն աշխարհի հայեցողությանը՝ վրդովվել նողկալի արարքների հանդեպ կամ էլ «ըմբռնողություն» հանդես բերել դրանց համար: Պարոն Նաումանը կողմ էր վրդովմունքին ու ըմբռնողությանը:

## ՊԱՍՏՈՐ ՆԱՌԻՄԱՆԸ

1878 թ. Բեռլինյան պայմանագրով Թուրքիան ստիպված էր տերությունների ճնշմամբ հանդիսավոր պարտավորվել՝ անցկացնելու ներքին բարեփոխումներ և հատկապես երաշխիքներ տալու ժողովրդի քրիստոնյա հատվածի կյանքի համար: Բազում կոտորածները կյանքի էին կոչել մի միասնական ճակատ՝ ընդդեմ Աբդուլ Չամիդի դահիճ կառավարության: Թուրքիան ամեն ինչ ստորագրեց ու ոչինչ չարեց: Դրան լրիվ հավանություն տվեց պարոն Նաումանը: Այդ ընթացքում թեև կրկին սարքվել էին արյան բազում բաղնիքներ, նա 1898 թ. գրում էր.

*«Նրանց (ռուսների և անգլիացիների) միջամտությամբ Բեռլինի կոնգրեսում քսան տարի առաջ հայերի համար հաստատվեցին բարեփոխումներ, որոնց ամենակարևոր կետը մեր աչքերում հայերի տոկոսային մասնակցությունն է պետական կառավարման գործերին՝ թուրքերի ըմբռնումով՝ պետությունը հեղաշրջող մի պահանջ: Եթե իրագործվի այդ պահանջը, ապա տրամաբանական ուժով պիտի որ հայերը հակաթուրք դառնան, եթե նույնիսկ այսօր նրանց մեծամասնությունը սուլթանի ազնիվ, քնած և վճարունակ հպատակներն են: Ուստի Բ ա ղ ը թ ե ն ստիպված էր միացյալ Եվրոպայի առաջ խոստումներ տալ, բայց, իհարկե, միայն խոստումներ, որոնք, ինչպես Բիսմարկն է ասում, այնքան են*

*տևում, որքան այն իրադրությունը, որի մեջ դրանք ծնվում են»:*

Ինչպես երևում է, պարոն պաստորի համար «թուրքական ըմբռնումներն» ավելի վեր էին կանգնած, քան հարյուր հազարավորների վտանգված կյանքն ու միջազգային իրավունքը: Դեռ երեսուն տարի առաջ այդպես ուսուցանվեց «թղթի ծվենի» մասին բարոյականությունը:

Իսկ հիմա եկեք խոսքը տանք 1898 թ. Նաումանին՝ իր քաղաքական բարոյագիտության հետաքրքիր մի բաժինը շարադրելու համար.

*«Ինչ մեզ է ներկայացնում Լեփսիուսը խոշտանգումների մասին, գերազանցում է այն ամենը, ինչ մենք սովորաբար գիտենք: Ուրեմն ի՞նչն է մեզ խանգարում բռնել թուրքի ձեռքը և ասել. «Կորիք, սրիկա»: Մի բան կխանգարի մեզ, եթե թուրքը պատասխանի. «Ես էլ իմ կյանքի համար եմ պայքարում»: Եվ ... որ մենք նրան կհավատանք: Մ ե ն ք կընդունենք համընդհանուր թշնամության պայմաններում թուրքերի արյունահեղ, մահմեդական բարբարոսության անհրաժեշտությունը, քանի որ հայկական հարցը և հայերի կոտորածը մենք առաջին հերթին կդիտենք որպես ներթուրքական քաղաքական խնդիր, որպես մի կտոր հին մեծ տերության հոգեվարքից, որը չի ուզում, որ իրեն սպանեն՝ առանց այս վերջին արյունահեղ փրկության փորձերը կատարելու»:*

Այս «քրիստոնեական» խոսքերը պարոնը գրում էր դեպի Սուրբ գերեզման կատարած իր մի ճամփորդության ժամանակ: Նա գիտեր, որ 1895 թ. Ծննդյան տոների առաջին օրը Ուրֆայի Մայր տաճարում ողջ-ողջ հրկիզել էին 1200 հայերի:

Հիմա էլ լսենք համաշխարհային քաղաքագետի տեսակետներից մեկը.

*«Արևելքում տարվող մեր քաղաքականությունը շատ վաղուց է որոշված, մենք պատկանում ենք Թուրքիային հովանավորողների խմբին, մենք պիտի հաշվի նստենք դրա հետ: Մեր սեփական պետական ուժը կլինի այն, որը կօժանդակի մարելու հայերի քրիստոնեական և հումանիստական վերելքի բուլոր հնարավոր հաջողությունները: Այլ են անգլիացի քրիստոնյաները: Եթե վերջիններիս կրոնական ձգտումները հաջողություն են ունենում, ապա պետական գործիչները գնում են նրանց հետևից, քանի որ Անգլիայում թուրքական սադրանքի*

*մեթոդը ներքևից է: Ինչո՞ւ մենք չունենանք այդ մեթոդը: Առավել գեղեցիկ ու ազնիվ չէ՞ր լինի, եթե մենք էլ ջանալիք սաղորել թուրք ամբոխին: Ով ճնշվածների կողմն է այստեղ, պետք է այդպիսին լինի նաև այնտեղ: Ուրեմն ինչո՞ւ ոչ հանուն ազատության, առաջընթացի, արդարամտության բուն Հայաստանում: Հին նեխած թուրքական պետությունը մե՞զ ինչ: Այստեղ սկսվում են մանրամասն բացատրությունները, որոնք դուրս են հայկական հարցից, այսինքն՝ քննարկումներն այն մասին, թե ինչո՞ւ Գերմանիան իր այժմյան զորային անձնակազմով էլ չի կարող վարել անգլիացիների տիպի քաղաքականություն: Նրանք կարող են հեղաշրջում կատարել, քանի որ ի վիճակի են զավթել: Աճելու և կազմավորվելու համար մեզ ժամանակ է պետք: Այդ մեր ժամանակի գիտակցումն ու սպասումը ինքնին նույնպես նշանակում է կատարել աստծո կամքը»:*

Կատարել աստծո կամքը՝ այդ «աստծո մարդու» կարծիքով ուրեմն նշանակում է մտածել հետևյալ կերպ. Հարյուր հազարավոր մարդիկ են վայրագորեն կոտորվում, դրա դիմաց դու պետք է քո պարտականության համաձայն վրդովվես: Այնտեղ սպանվողները քրիստոնյա են: Հենց այն է՝ պետք է դրա համար տխրել և մարդասպանների վրա մի քիչ զայրանալ, քանի որ նման սպանությունը... դե իհարկե ... սիրուն բան հո չէ՞: Եվ, վերջապես, նրանք էլ չէ՞ որ այնուամենայնիվ ուղղամիտ քրիստոնյա մարդիկ են ... բայց ... դա համապատասխանում է աստծո հատուկ ցանկությանը, որ ... գերմանական բանկը Ֆինանսավորի Բաղդադի երկաթուղին: Աստված բավական բարեկիրթ եղավ ընդունելու, որ թուրքական պետությունը թեև լքված աղբակույտ է, բայց հատուկ կոչված է լինելու գործունեության ասպարեզ գերմանական ռազմական ներկայացուցչությունների համար: Թուրքերը աստծո կամքը կատարում էին նրանով, որ իրենք սրիկա էին, խոշտանգող ստրուկ, բարբարոս և տգետ, այնպես, ինչպես գերմանացիները նախախնամության կամքը հասկանում էին բանաստեղծ, մտածող, գեներալ, պաստոր և պանգերմանական դեմոկրատ դառնալով: Սրանից կարելի է միայն եզրակացնել, որ Թուրքիան իրավունք չունի այսօր կործանվելու, այլ վաղը պիտի բաժին ընկնի գերմանացիներին: Իսկ եթե մինչ այդ հարյուր հազարավոր անմեղ մարդիկ են սպանվելո՞ւ ... Ափսո՛ս, ափսո՛ս... Բայց չէ՞ որ դա պիտի լինի աստծո՞ կամքով ...

Մետաֆիզիկա, դու ես դարձել բռնության սպասուհին:

Քանի դեռ Աբդուլ Համիդը ղեկավարում էր իր արյունալի իշխանությունը, հայերը պետք է ամեն օր հաշվի նստեին նոր կոռուստների հետ: Եթե ներքաղաքական դժվարություններն այնքան մեծ էին, որ երկրի առանձին մասերում պետք էր հաշվի նրստել ապստամբությունների հետ, ուրեմն եղեռնը այն կափույրն էր, որով կառավարությունը ջանում էր թուլացնել լարվածությունը: Դա նման էր Ռուսաստանում եղածին, որտեղ հրեաների ջարդերով փորձ էր արվում բթացնել ժողովրդի՝ քաղաքական ու տղնտեսական պահանջների նկատմամբ տածած շահագրգռվածությունը: Ինչպես Բիսմարկին հաջողվեց 1878 թ. Հյոդելի և Նոբիլինգի մահափորձերի տպավորության ներքո իրագործել սոցիալիստների դեմ ուղղված օրենքը, նույն ձևով էլ Թուրքիայում անհատների նկատմամբ դավադրություններն օգտագործվեցին իր կյանքի համար դողացող սուլթանին դրդելու սպանության հրամաններ արձակել և մահմեդական ժողովրդին կատաղեցնել ընդդեմ հայերի, որոնց շարքերից իբրև թե ինչ-որ չարագործություններ էին կատարվել: Երիտթուրքերը, քանի դեռ իշխանության գլուխ չէին անցել, կշտամբում էին սուլթանին, որ նրա իշխանության ներքո սպանդի է ենթարկվել 500.000 մարդ:

1908 թ. հուլիսին Սալոնիկից սկիզբ առավ թուրքական հեղափոխությունը: Դեռ տարիներ ի վեր խլրտում էր այն զգացումը, որ միայն արմատական փոփոխություններով, լուրջ բարեփոխումներով կարող է Թուրքիան պաշտպանվել ինքն իր մեջ փլուզվելու և իր փլատակների կոտորտաքմերով մեծ տերություններին թեթև ավար դառնալու ճակատագրից: Ընդարձակված կայսրության հատկապես արաբական մասում զգացվում էին անջատումի ձգտումները: Թրակիայում և Ալբանիայում բռնկումներ էին լինում: Ֆինանսական մեխանիզմը խճճվել էր, և Աբդուլ Համիդը շարունակում էր փորձեր կատարել՝ լրտեսների բանակով ու սարսափով լարվածության մեջ պահելու երկիրը: Եկել էր այն ակնթարթը, երբ ավարտվելու էր օսմանյան սուլթանների բռնապետությունը:

Երիտասարդ սպաները, որոնք մասամբ կամավոր, մասամբ էլ որպես քսորյալներ ապրում էին Մակեդոնիայում, դարձան պատմության ամենաարտասովոր զինվորական խռովություններից մեկի շարժիչ ուժը: Երիտասարդ մայրը էնվերն ու իր ընկեր-

ները սուլթանից պահանջեցին երեք տասնամյակ ի վեր խեղդված սահմանադրությունը: Ապստամբները քաշվեցին լեռները և սպառնում էին այնտեղից ռազմերթ կատարել Կոստանդնուպոլսի վրա: Բազմաթիվ գեներալներ, ինչպես նաև հոգևորականությունը, միացան հեղափոխականների պահանջին: Արդուլ Չամիդը վերափոխվեց և ... կանգնեց հեղափոխական կոմիտեի գլուխ ... Կյանքի կոչվեց սահմանադրությունը: Սուլթանն ինքն արդեն գործածում էր մինչ այդ մահապատժի սպառնալիքով արգելված «հայրենիք» բառը, նա կարգադրեց իր հսկայական եկամուտներից գերմանական և անգլիական բանկերում ավանդներ ներդնել պետության ֆինանսական գործերի բարելավման համար: Մախարարներից բռնագրավվեց գողացված մի քանի միլիոն, ազատ արձակվեցին քաղաքական բանտարկյալները, որոշ տեղերում քրեական հանցագործների հետ միասին: Ոգևորության մի ալիք էր գալարվում երկրով մեկ ... Ազատություն, առաջադիմություն, հայրենիք ... սա հնչում էր փողոցներում բարձրաձայն: Թուրքերը, հայերն ու հույները եղբայրանում էին բոցավառ ոգևորությամբ լի հանրահավաքներում: Յեղափոխություն՝ արյունարբու սուլթանի գլխավորությամբ:

Խիստ հազվադեպ է որևէ տիրակալ առանց պայքարի զիջել իր տեղը: Երեք քառորդ տարի անց Արդուլ Չամիդն իր իսկ հսկայական միջոցներով երկիրը ոտքի հանեց երիտթուրքերի դեմ: Միայն ասիացի ճիվաղին հատուկ միջոցներով նա փորձում էր նոր ուղին վարկաբեկել արտասահմանի առաջ: Նրա կողմից արձակվեց հայերի մի մեծ եղեռնի հրաման, որով կանխորոշված էր 200000 մարդկանց մահը: Ադանայում միայն մի քանի օրում արդեն սպանվել էին 25000 հայեր: Մյուս տեղերում էլ պիտի նույնը կատարվեր: Երիտթուրքերի առաջնորդները ստիպված էին փախչել: Մեհմեդ Շևքեթ փաշայի ղեկավարած բանակն էր, որ փրկեց երկիրը: Նա ռազմերթով գնաց Կոստանդնուպոլսի վրա, գրավեց քաղաքը, պաշարեց սուլթանի պալատը: Շեյխ ուլ Իսլամի՝ գերագույն հոգևոր երևելու հրամանով Արդուլ Չամիդն իր եղբայր Մեհմեդ Ռեշադի օգտին գահընկեց արվեց և աքսորվեց Սալոնիկ:

Երիտթուրքերի ուղին ազատ էր: «Միություն և առաջադիմություն» կոմիտեն պետք է շուտով երկրում ձեռք բերեր անսահմանափակ իշխանություն: Եկա՞վ առաջադիմությունը: Պիտի պարզվե՞ր քաղաքավարության ու մարդասիրության դրոշը: Մենք

կտեսնենք, որ օսմանյան արնագույն դրոշը մի ամբողջ ժողովրդի համար պատան պիտի դառնար, և նոր տիրակալները միայն ավարտեցին վտարված մարդասպանի արյունալի գործը:

## ԽԱՐՎԱԾ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ

Ճակատագրի սարսափելի հարվածները, որ կրել էր հայ ժողովուրդը Արդուլ Չամիդի օրոք, առիթ եղան Չայ Յեղափոխական Ղաշնակցություն կուսակցության կազմավորման համար, որը ղեկավարվում էր բացառապես դեմոկրատական միտումներով: Դրանով ժողովուրդը կունենար առնվազն մի մարմին, որով կկարողանար աշխարհի ուշադրությունը հրավիրել իր նկատմամբ կատարված ոճրագործությունների վրա: Այդ կուսակցության առաջնորդները եղբայրաբար համագործակցում էին երիտթուրքերի հետ, քանզի երիտթուրքերի ծրագիրն իր՝ կայսրության դեմոկրատական վերափոխման և իրենց թվային կազմի հարաբերությամբ տարբեր ժողովուրդների իրավահավասարության պահանջներով միանգամայն համապատասխանում էր հայերի ցանկություններին: Երիտթուրքերի և հայերի առաջնորդների միջև սերտ մտերմություն կար: Թշվառ փառամուլներին ամեն կերպ աջակցում էին բարձրակիրք և մասամբ ունևոր հայ ղեկավարները: Եվ երբ 1909 թ. ապրիլին երիտթուրքերի առաջնորդները հետապնդվում էին Արդուլ Չամիդի ոստիկանների կողմից, ղաշնակցական առաջնորդները թաքցնում էին նրանց՝ վտանգելով իրենց կյանքը: Չայ առաջնորդներն իսկական ղաշնակիցներ էին այն պայրերի համար, ովքեր ձևացնում էին, թե ուզում են գիծ քաշել արյունալի անցյալի վրա: Երբ հաղթեց հեղափոխությունը, ժողովրդական զանգվածները, ղեկավարվելով մահմեդական և հայ հոգևորականների կողմից, անցան Ստամբուլի փողոցներով, և մի հայկական եկեղեցում տեղի ունեցավ համատեղ զոհերի ողբի հուզիչ մի արարողություն: Թվում էր, թե վրա է հասել ներողամտության, համատեղ երջանկության ժամը:

Եթե այսօր հետադարձ հայացք նետենք իրադարձությունների վրա, ապա հայ առաջնորդները հանդես կգան որպես զոհեր իրենց իսկ տածած հավատարմության և վստահության այն մի խումբ մարդկանց հանդեպ, ովքեր շուտով ցույց տվեցին իրենց իսկական դեմքը: Դիմացան նույնիսկ այն խեղդող սարսափին, ո-

ըը սփռեց Ադանայի սպանդը: Այնտեղ տղամարդկանց կտոր-կտոր արեցին և նետեցին շների առաջ: Հարյուրավոր հայեր, որ փախել - մտել էին եկեղեցի, ողջ-ողջ հրկիզվեցին: Մի գերեզմանատան տարածքում մարդկանց որսում էին քանց որսի կենդանիներ և մորթում շիրիմների վրա: Երիտթուրքերը ցուցաբերեցին սառցե անտարբերություն: Թվում էր, թե նրանք վախենում էին միայն արտասահմանի վրա ազդող, իրենց համար աննպաստ ներգործությունից, մինչդեռ իրենց համար ոճիրն ինքը, որպես այդպիսին, ցանկալի էր երևում: 1911 թ. երիտթուրքերը հայերին խաբեցին պառլամենտի տասը տեղի հարցում: Խաբվածները կուլ տվեցին զայրույթը: Ի՞նչ անեին: Նրանք շարունակում էին հուսալ, նոր ռեժիմին կրկին ու կրկին ապացուցում իրենց հավատարմությունը, հատկապես Բալկանյան պատերազմի ժամանակ, երբ պետությունը ճարճատում էր բոլոր ազույցներում: Երբ 1914 թ. նոյեմբերին Թուրքիան մտավ աշխարհամարտի մեջ, հայկական կուսակցությունն ամենայն ջերմությամբ իրեն հայտարարեց թուրքական «հայրենիքի» պաշտպանության կողմնակից:

Հույս էին դնում ... ինչի՞ վրա: Առնվազն հույս ունեին, որ այն գեղեցիկը, ինչ միասին վերապրել էին արյունաբեր սուլթանի դեմ մղած պայքարում, անհետ անցած չի լինի նրանց կողքով, ում ձեռքին հիմա իշխանությունն էր: Հույս էին դնում համաշխարհային կարծիքի, աշխարհի առաջադիմության վրա: Չէին հավատում այն հնարավորությանը, որ կառավարությունը կարող է այնքան բութ լինել, որ ժողովրդի ամենակտիվ մասի բնաջնջումով ավելի թշվառացնի ամբողջ երկիրը: Հավատում էին, հույս տածում ... Երիտթուրքական կառավարությունն ուներ առանձնահատուկ հաշվարկ: Եվ նա գործում էր դրա համաձայն: Նա 1915 թ. սառնասրտորեն սպանել տվեց այն բարեկամներին, ովքեր 1909 թ. փրկել էին երիտթուրքերին:

## ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՆ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԸ

Երիտթուրքական տիրապետությունն առաջին իսկ օրվանից կանգնած էր դիկտատուրայի խորհրդանշի տակ: «Հյուրիքի վե իթթիհատ» («Միություն և առաջադիմություն») կոմիտեն ուներ մի այնպիսի լիակատար իշխանություն, ինչպիսին տնօրինում էր

Ֆրանսիական հեղափոխության բարեգործական հանձնաժողովը՝ առանց սակայն իր միջուկում ունենալու Ռոբեսպիեռի պես անկաշառ և Սեն Ժյուստի նման կրքոտ իդեալիստ անհատակա-նություններ: Թուրքական հեղափոխությանը պակասում էր հանուն զաղափարների պայքարը, Քրոմվելի, Միրաբոյի, Դանտոնի, Լենինի նման գերիշխան հանճարների ազդեցությունը. չկար գոտեմարտ հանուն ժողովրդի, իրար չէին բախվում կարծիքները, բացակայում էր Բաստիլիայի գրոհի Թերմիդորի 9-ի ամպրոպային շառաչունը: Խոսքը նոր լինելիության մասին չէր, ոչ էլ ժողովրդի փառաբանության մասին, այլ անհատ մարդկանց իշխանատենչության գոհացման մասին, որոնց համար ժողովուրդը ոչինչ էր, ինքնագերագնահատումը սակայն՝ ամեն ինչ: Սարսափի բոլոր հարցերում վարպետորեն կողմնորոշվող բռնապետի տեղը գրավեց սրճարանային գրականագետների և սպաների սարսափազդու իշխանությունը, որոնց համար Նապոլեոնի կենսագրությունը ծառայում էր որպես գործածության հրահանգ, որին ենթարկվելը, ըստ նրանց, բավական էր Նապոլեոն լինելու համար: Էնվերի մասին ասում են, որ նրա գրասեղանի վերևում կախված էին Ֆրիդրիխ II-ի և Նապոլեոնի նկարները, իսկ դրանց արանքում իր էնվերի նկարը այն կեցվածքով, որն այսօր էլ կարելի է տեսնել գերմանական գլանակատուփերի վրա:

Առաջին իսկ օրվանից կոմիտեն բաղկացած էր միայն թուրք անդամներից: Ոչ մի արաբ, հույն կամ անգամ հայ իրավունք չուներ իմանալու, թե ինչ էր կատարվում կոմիտեում: Դրանով ի սկզբանե խափանվում էր այն հնարավորությունը, որ ընդհանուր բնակչության երկու երրորդը կկարողանար ձեռք բերել որևէ ազդեցություն երկրի պատմության վրա: Դա զուտ ազգային իշխանություն էր, մի դիկտատուրա, որի դիլետանտությունը լավագույնս կերևա՝ վկայակոչելով ամործատված կառավարության 1920 թ. արարքները: Անշուշտ չէին պակասում պլանները, որ Բեռլինում ու Փարիզում մարդիկ տեսել էին Կոստանդնուպոլիս փոխադրելիս: Բայց դրանց մեծ մասը չէր գործում առաջին իսկ փորձերից, թեև արդեն նախօրոք շոայլորեն տարփողվել էր պլանավորված նորամուծության օրհնությունը: Թե ինչ են պատմել մեզ գերմանա-թուրքական եղբայրության մարգարեներից սերած երիտթուրքերի բարենորոգչական եռանդի մասին, իրենց աչքով էին տեսել այն մարդիկ, ովքեր ամեն գնով ուզում էին գերմանական մշտական հաճախորդների սեղանին «մատուցած» լինել գե-

ղեցիկ ու վսեմ բաներ: Փլուզումը շարունակվում էր, կոմիտեն պագել էր Աբդուլ Յամիդի ժամանակներից մնացած սնանկացած կարողության վրա, «հեղափոխականները» փաշաներից ստանում էին հսկայական չափերի հասնող հարկադրույք, էվերը դարձավ սուլթանի փեսան: Երեք տարի շարունակ Կոստանդնուպոլսում և Սիրիայում իմ մնալու ընթացքում ես պատեհություն եմ ունեցել հավաստիանալու, որ երիտթուրքերը վեց տարվա ընթացքում, մինչև համաշխարհային պատերազմի բռնկումը, նախանձելի վարպետությամբ տիրապետեցին հրամայելու արվեստին: Գերմանական ռազմական ներկայացուցչության շեֆը՝ գեներալ Լիման ֆոն Ջանդերսը, իր հուշագրության մեջ դառնորեն գանգատվում է փոխգեներալիսիմուս Էնվեր փաշայի ուղղակի տղայական որոշումներից: Մյուս բոլոր բնագավառներում, ըստ էության, ավելի բարվոք չէր: Ամսփոքար տեսք ունեին հանրային բոլոր ծեռնարկությունները: Կոստանդնուպոլսում գտնվող նավագնացության ու բանակի համար անչափ կարևոր զինապահեստը նմանը չունեցող մի հսկա ավերակույտ էր: Փլվել էին բոլոր մեքենասարահների տանիքները, հնոտիքն ու խարամը մի մետր բարձրությամբ ծածկել էին գետինը: Իսկ ավերակների մեջ նստում էր երիտասարդ սպաների նախիրն իր նարգիլե-ծխամորճերով՝ «կառավարելու» այդ քառու: Երբ ես մեր մետաղածուլական գործարանի համար մետաղի ջարդոն հայթայթելու հանձնարարություն ստացա, գտա դեռևս կաղապարների մեջ մնացած ծուլածո կտորներ՝ 20-30 հազար կիլո քաշով: Հարյուր հազարավոր մարկ էր ջուրը լցվել՝ անօգուտ վատնված: Մամլիչները, շոգեմուրճերը և հսկա կռունկները կորել էին ժանգի մեջ, աղուրներն այնքան լքված էին, որ ծանր բեռների փոխադրման համար ստիպված էին լինում փայտե գլաններ օգտագործել: Մի մեծ պողպատածուլական մարտենյան վառարան հենց վերջերս պարզապես սառեցրին: Բեսսեմերային մի ժամանակակից կոմվերտեր անտեր ընկած էր փոսի մեջ: Նուսի բազմաքանակ գլաններ թափված էին ջրի մեջ. մենք դրանք գլորելով դուրս հանեցինք, որպեսզի կարողանայինք ծուլել թանկարժեք մետաղը: Հալելու գործը չստացվեց. երբ նյութն արդեն պատրաստ էր օգտագործման համար, գիշերն այն գողացան: Ձինապահեստն ուներ հիմնարկությունների մի քանի տնօրեն, որոնք ո՛չ կարդալ գիտեին և ո՛չ էլ գրել: Գերմանական մի բացարձակ նոր ռանդոլ մեքենա, տասնութ մետր երկարությամբ, մենավոր կանգնած էր մի

սրահում, ուր միշտ անծրև էր խուժում: Շքեղ մեքենան. որ երբեք չէր գործարկվել, պիտի մետաղի ջարդոն դառնար:

Այսպիսի տեսք ուներ երկրի առաջնային արդյունաբերական արտադրամասը՝ ռազմական նախարարության աչքերի առաջ: Չմյուռնիայում, Բեյրութում ու Դամասկոսում առավել բարվոք չէր: Երիտթուրքերն անտարակույս նույնքան անկարող էին, որքան նախորդ թուրքերը:

## ԹՈՒՐԶԱԿԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄ

Որքան քիչ բան էր կատարվում գործնականում, այնքան ավելի շատ էին արբեցնում երիտթուրքերն իրենց մեծ տերության պլաններով: Առավել վտանգավոր մոլագարները երբեք չեն տիրել քաղաքական իշխանությանը: Դրանք, բառիս ամենավատ իմաստով, արյունարբու տգետներ էին: Իմպերիալիստական մի ցնորք էր համակել կոմիտեին՝ հօգուտ «Միություն և առաջադիմություն» կուսակցության: Դեռ դարավերջին Ջեմալեդդին անունով մի աֆղան դերվիշ փորձել էր հասկացնել արյունարբու սուլթանին, որ թուրքական քաղաքականությունը, առավել քան ցայժմ, պետք է ղեկավարվի պանիսլամական տեսանկյունից, քանի որ միայն այդ ճանապարհով թուրքիան կարող է իրեն պաշտպանել Անգլիայի և Ռուսաստանի կողմից ուժասպառ լինելուց: Չնայած Ջեմալեդդինի համոզելու հսկայական արվեստին, որը պետք է որ տիրապետեր ներշնչելու կարողությանը, ինչպես Ռասպուտինը, Աբդուլ Յամիդը բավական խելոք գտնվեց, որ հրաժարվեց այդ խաղից, ինչպես կրակից: Երիտթուրքերը որսացին աֆղանի մտքի սլացքը և այն ձևափոխեցին պանթուրքական գաղափարով: Դա այժմ ֆանատիկների համար հնարավորություն էր՝ անսահմանության մեջ ազատություն տալու իրենց երևակայությանը: Մենք՝ գերմանացիներս, չէ՞ որ գիտենք, թե ո՞ր վիժվածքներին կարող է հարմար լինել քաղաքականացված խելացնորությունը: Մեզ մնում է միայն հիշել Դանիել Ֆրայմանին, պրոֆեսոր Ռայմոնին և պանգերմանական մյուս բոլոր ջերմոցային բույսեր բուծողներին:

Երիտթուրքերի ուղեղներում իմպերիալիստական մի արբեցում շուտով գերիշխեց իրական քաղաքական նկատառմանը՝ ակնածությունը ներքին վերակառուցման և շինարարության ըն-



դարձակման աղաղակող անհրաժեշտության, ինչպես և այն արտաքին աշխարհից ունեցած վախի նկատմամբ, որը նույնիսկ դեռ Աբդուլ Յամինին էր խանգարել՝ հետևողականորեն սաստկացնելու հայ ժողովրդի հանդեպ գործադրած իր դահճային պրակտիկան:

1912 թ. Դանիել Ֆրայմանը գրեց իր լավագույն գիրքը՝ «Եթե ես կայսր լինեի»: Այստեղ այնպիսի անհավատալի ձեռնարկումներ էին պահանջվում, որ հատկապես Ֆրանսիայում խիստ ամրապնդվեց Գերմանիայի հանդեպ տածվող անվստահությունը. բոլոր այն դանիացիների արտաքսումը, ովքեր համախոհ չեն պրուսացիներին, լեհ պատգամավորներին ձայնի իրավունքից զրկելը, ժողովներում լեհերենի արգելումը, ֆրանսախոս էլզասացիների արտաքսումը, դիկտատուրան էլզաս-Լոթարինգիայում, Պրուսիայի կողմից Բելգիայի և Յուլանդիայի բռնակցումը, Ադրիատիկ տանող ճանապարհի բռնի բացումը, հրեաներին օտար իրավունքի տակ դնելը, սոցիալիստ բոլոր ղեկավարների և ագիտատորների արտաքսումը և այլն: Նման մի ոգի էր խլրտում նաև երիտթուրքերի գլխում: Բայց այն, ինչ Գերմանիայում մի թեև հզոր խմբի լույս մարտակոչ էր, թուրքիայում դարձավ կառավարության բոլոր ձեռնարկումների թելադրող ուժ: Այն շուտով գործի դրեց մի ազգային ահաբեկչական իշխանություն, որը երկրի սահմանների ներսում գործողություն էր ծավալում ոչ թուրքական ամեն ինչի դեմ անշրջահայաց պայքար մղելու համար, իսկ սահմաններից դուրս՝ սնունդ էր տալիս երկիրն անհավանական չափերով ընդարձակելու պլաններին:

Երբ Արևելքի գերմանական ներկայացուցչության նախագահը՝ դ-ր Լեփսիուսը, Գերմանիայի դեսպանի միջնորդությամբ և Գերմանիայի արտաքին գործոց նախարարության համաձայնությամբ 1915 թ. հուլիսին ռազմական նախարարությունում մտավ Էնվերի մոտ, խուսափեց հենց այդ պահին մոլեգնող հայկական սպանդի առնչությամբ զայրույթ առաջացնող մարդու մոտ բարոյական վրդովմունքի տոն վերցնել: Դրա փոխարեն, սակայն, նա հակադրվեց շատ գերմանացիների այդ կուռքի քաղաքական դատողությանը՝ առաջարկելով.

*«Առափնյա երկրներում հույների և ամբողջ Անատոլիայի ներսում հայերի ձեռքին է մեծածախ ու մանրածախ առևտուրը՝ համարյա առանց բացառության: Հայերը կայսրության ստամոքսն են: Դուք հիմա հանում եք ստամոքսը և կարծում,*

*որ մյուս անդամները՝ թուրքները, քրդերը, լազերը և չերքեզները, կստանձնեն նրա ֆունկցիան: Դա մոլորություն է»:* Էնվերը ժպտում էր.

*«Հնարավոր է, որ մենք մի քանի տարի պատերազմից հետո էլ ունենանք թույլ ստամոքս: Մենք կհանգստանանք: Հիշեցեք, որ թուրք ժողովուրդը հաշվվում է 40 միլիոն: Եթե նրանք ամփոփված լինեն մի պետության մեջ, ապա մենք Ասիայում կունենանք նույն կարևորությունը, ինչ Գերմանիան Եվրոպայում»:*

Դա թուրքիայի ամենազոր մարդու համոզմունքն էր: Պետք է համաձայնել, որ Էնվերը ցինիզմի մեծ վարպետներ թալեյրանի, Մեթերնիխի և Բիսմարկի արժանավոր աշակերտն էր: Օսմանյան կայսրության թուրք ժողովրդի հատվածը կազմում էր մոտ 9 միլիոն մարդ: Էնվերն, ուրեմն, մտադիր էր իբրև հավելում նվաճել ևս մի տարածք, որը կընդգրկեր մնացած 31 միլիոն թուրքերին: Թուրք Ալեքսանդրն, ուրեմն, պետք է որ մտադրություն ունենար իր նվաճողական արշավանքները ծավալել մոտավորապես մինչև Չինաստան:

Պատերազմի ընթացքում, ի դեպ, Գերմանիայի դպրոցներում գերմանական կողմի՝ պատերազմից սպասվող պահանջների կողքին թմբկահարվում էին նաև թուրքիայի ընդարձակման պլանները՝ Էնվերյան ոգով: Շրջանային դպրոցական տեսուչ Հաուֆթմանի «Պատերազմի նպատակները: Մեթոդական ձեռնարկ արդի ուսուցման համար» (Սյուլիաուզեն, էլզաս) գրքույլում գրված է.

*«Իսկ հիմա Պարսկաստանի խոր թիկունքը՝ Կենտրոնական Ասիան, Խիվան, Բուխարան, Թուրքեստանը ... Ինչպես մենք տեսանք, այստեղ էլ են մահմեդականներ ապրում: Դեռ ավելին, Թուրքիայի ու այս տերիտորիաների մահմեդականների միջև ինչ-որ բան է հյուսվում: Սա է թուրքերի նախահայրենիքը: Այստեղ է եղել նրանց նախահայրերի բնակատեղին: Այստեղից այդ հայրերի նժույզները վարգել են դեպի հարավ ու հարավ-արևմուտք: Երկար ժամանակ թուրքերը մոռացել էին դա: Նրանք այլևս չէին մտածում այն բանի մասին, ինչ երբևիցե եղել էր: Թվում էր՝ նրանց քաջությունը կոտորվել է: Պատառ առ պատառ հող են խլել նրանց թշնամիները հին թուրքական պետությունից: Թուրքիան դարձել է հիվանդ մարդ: Թուրքը կրկին հույս ունի, դարձյալ կարոտում է, նորից*

նպատակ է դրել իր առաջ ... Հատկապես ջերմորեն է բարախում, սակայն, թուրքի սիրտը այն ժամանակվա իր, իսկ հիմա Ռուսաստանի հողերի մասին մտածելիս: Դրանք հայրենիք, հայրենի երկիր են նրա համար: Ուսանավորներում այդ են երգում նրա բանաստեղծները, և բոլորը երգում են նրանց հետ.

Թուրքերի հայրենիքը լոկ թուրքիան չէ,  
Ոչ էլ Թուրքեստանն է,  
Այն լայնարձակ, հավերժի երկիր  
Ամբողջ Թուրանն է»:

Հնարավոր է, որ թուրքերի աչքերի առաջ թափառող կրակի նման տարուբերվել էր նաև արտաքին քաղաքականության նպատակը, բայց նրանք իրենց երկրում ազգային գործին հետամուտ եղան երկաթյա տրամաբանությամբ: Նրանք ուզում էին ստեղծել ազգային պետություն, որն անողոքաբար կմերժեր ամեն մի զիջում փոքրամասնություններին: Որ արաբներին երկար ժամանակ սանձահարել ու պահել չէր լինի, դրա հետ Ստամբուլում շատ թե քիչ հաշտվել էին: Բայց երկիրն արդեն պետք էր վերջապես մաքրագարդել քրիստոնյա ժողովրդական զանգվածներից, որպեսզի իրենց բուն պապենական հողում ոչ մի օտար մարմին չկարողանար կասեցնել ազգային նվաճողական երթը: 1914 թ. ի վեր աճող եռանդով վճռական միջոցներ էին ձեռք առնվում այն ամենի դեմ, ինչը թուրքական չէր: Բոլոր օտարները, նաև մըշտաբնակ գերմանացիք, ենթարկվում էին տուրքային անտանելի կամայականության: Կոստանդնուպոլսում՝ աշխարհի ամենաբազմալեզու այս քաղաքում, պետք է չքանային բոլոր եվրոպական, նաև բոլոր գերմանական ֆիրմաների ցուցանակները: Տուգանքներով ու արգելքներով գրեթե խեղդվում էր հայալեզու և հունալեզու մամուլը: Դրանք այն սոսկալի տույժերի նախագուշակներն էին, որոնք ուր որ է պիտի ձեռնարկվեին որպես երկրի «մաքրագարդան» միջոց: Առաջին հարվածն ուղղվեց հայերի դեմ: Վերջիններիս հետ հույս ունեին հեշտագույնս հաշիվները մաքրել, քանզի նրանք անպաշտպան էին: Հետո հերթը հասնելու էր հույներին ու իրեաներին: Եվ, հավանաբար, վերջում երկրից պիտի հալածվեին գերմանացիները, եթե պատերազմը շահեին Կենտրոնական Եվրոպայի երկրները և Թուրքիան:

Սեթեմիխը մի անգամ ասել է. «Մենք աշխարհին կզարմացնենք մեր ապերախտությամբ»: Պարոնայք Նաունանը, Յեքը,

Ռորբախը և Բաղդադի երկաթուղու Հելֆերիխը կուզենային հաղթական Թուրքիայի մասին զարմանահրաշ բաներ լսել: Եթե տանուլ տված թուրքերը պարտությունից մի քանի տարի անց աշխարհի աչքի առաջ դուրս մղեցին 1.5 միլիոն հույների, ապա կարելի է պատկերացնել, թե ինչ կլինեի, եթե էնվերն ու Թալեթը հաղթած լինեին: Քիչ է մնում կարեկցես, որ համաշխարհային պատմությունը խաբված տեսք ունի ինչ-որ բարձրակարգ սրամտությունից: Գերմանիան պատերազմում թուրքերի նկատմամբ բավական լավ էր տրամադրված՝ պահելու այն վարագույրը, որի հետևում կոտորվեցին ավելի քան մեկ միլիոն անմեղ տղամարդիկ, կանայք ու երեխաներ:

## ՆԱԽԾԻՐԻ ՈՒՐՎԱԿԱՆԸ

Աբդուլ Համիդի ժամանակ մի նախարար ասել է. «Հայկական հարցը կարելի է լավագույն ձևով վերացնել աշխարհի երեսից՝ հայերին աշխարհի երեսից վերացնելով»: Այս արտահայտությունն արժանանում է գյոթինգենցի աշխարհագրագետ Էվալդ Բանգեի հավանությանը: Իր «Թուրքիա» գրքում նա այն անվանում էր «ոչ լրիվ անհիմն նախադասություն»: Պարոն պրոֆեսորի համար դժվար կլինի փրկագնել այն խայտառակությունը, որով նա ծանրաբեռնեց գերմանական գիտությունը իր այդ նշումով:

Ասում են, որ մի թուրք նախարար պատերազմի ժամանակ հետևյալ խոսքն է ասել. «Պատերազմի վերջում ոչ մի քրիստոնյա այլևս չի մնալու Կոստանդնուպոլսում: Այն այնպիսի կատարելություն է մաքրագարդվելու քրիստոնյաներից, որ Կոստանդնուպոլիսը լինելու է քաաբայի նման» (իսլամի գերագույն սրբությունը):

Արդարադատության նախարարությունում մի բաժնի վարիչ ասել է մի հայի. «Այս կայսրությունում այլևս տեղ չկա մեզ ու Ձեզ համար, և անպատասխանատու թեթևամտություն կլինեի, եթե մենք չօգտագործեինք Ձեզ մաքրել-վերացնելու առիթը»:

«Առիթը» եղավ Գերմանիայի հետ դաշնակցած իրենց պատերազմը:

Իր «Հայ ժողովրդի մահվան ընթացքը» մեղադրական գրքում (Փոթոսդամ, «Թեմիլը» հրատարակչություն) Լեփսիուսը հրապարակում է հատվածներ հայ կուսակցական գրագրությունից: Կար-

դալիս ցնցվում ես, թե ինչպես հայերն այստեղ մինչև իսկ անընդ-  
հատ բարձրացող ծայրով ստիպված էին գոռալ աշխարհին, որ ի-  
րենք տեսնում են իրենց հույսերը կտոր առ կտոր փշրվելիս և մի  
ահագարհուր աղետ՝ իրենց գլխավերևում կուտակվելիս: Երկ-  
րում հայերին արդեն ասվում էր. «**Դուք՝ հայերը եք մեղավոր այս  
պատերազմի չարիքի հարցում, և մենք ձեզ ոչնչացնելու ենք**»:

Դեռ 1915 թ. մարտի 18-ին ռազմական դատարանի կողմից  
արգելվեց հայերի «Ազատամարտ» կենտրոնական օրգանը: Ար-  
դեն Կոստանդնուպոլիս են գալիս նախճիրի մասին առաջին լու-  
րերը: **1915 թ. ապրիլի 21-ին** պետք է որ թուրքական կառավարու-  
թյան կողմից որոշում ընդունված լինի հայ ժողովրդի բնաջնջման  
վերաբերյալ և համապատասխան հրամանը ուղարկված լինի  
ռազմական և քաղաքացիական ատյաններին: Թալեաթն ու էն-  
վերը հաղթանակ էին տարել փոքր-ինչ անվճռական մեծ վեզիրի՝  
Եգիպտոսի արքայազն Սայիդ Յալիմ փաշայի նկատմամբ: Կոս-  
տանդնուպոլիսում ձերբակալվեցին մոտ 600 հայ մտավորական և  
տեղափոխվեցին Անատոլիայի խորքը: Այսպես ժողովրդին զրկե-  
ցին իր ղեկավարներից:

Պատգամավոր Վարդգեսը, որն առանձնահատուկ մտերիմ  
հարաբերության մեջ էր երիտթուրքական ղեկավարների հետ, իր  
բարեկամների ձերբակալումից հետո մտնում է ոստիկանապետ  
Բեդրի բեյի մոտ՝ հավանաբար իր հին բարեկամ Բեդրի բեյից մի  
մխիթարական խոսք լսելու փոքրիկ հույսով:

*Վարդգես.- Ես օրը հասցրիք:*

*Բեդրի.- Ձանրմ, մենք ի՞նչ ենք արել:*

*Վարդգես.- Դուք ձգտում եք գրգռել մեր ժողովրդին և  
մղել հուսահատության:*

*Բեդրի.- Ես քեզ տալիս եմ երեք օր ժամանակ՝ թողնելու  
Կոստանդնուպոլիսը:*

*Վարդգես.- Իմ կինը հիվանդ է, ինձ անհրաժեշտ է առ-  
նվազն տասը օր:*

*Բեդրի.- Իմ ասածն ասած է:*

Վարդգեսն ու Ակնունին գնում են իրենց վաղեմի մարտական  
ընկեր Թալեաթի մոտ՝ հարցնելու նրան, թե ինչո՞ւ են անմեղները  
ձերբակալվել: Թալեաթը պատասխանում է. «**Ես դա արգելել չէի  
կարող**»:

1915 թ. մայիսի 12-ին Թալեաթն ասում է Վարդգեսին.

*«Մեր թույլ օրերին Դուք չոքեցիք մեր կոկորդին և բարձ-*

*րացրիք հայկական բարեփոխումների հարցը: Դրա համար էլ  
մենք մեր ներկայիս դրության բարեհաճությունն օգտագոր-  
ծելու ենք այնպես շաղ տալու Ձեր ժողովրդին, որ Դուք հի-  
տուն տարով Ձեր գլխից հանեք բարեփոխումների գաղափա-  
րը»:*

**Վարդգես.- Ուրեմն մտադրություն կա չարունակե՞լ Աբդուլ  
Յամիդի գործը:**

**Թալեաթ.- Հա:**

Դիմակը պատռվել էր. հայտնության զայրույթի յոթ թասերը  
դատարկվեցին մի խեղճ ժողովրդի գլխին: Մի քանի շաբաթ անց  
պատգամավոր Վարդգեսին գազանաբար սպանեցին Քեմալի  
կիրճուն: Մարդասպանը էնվեր փաշայի փեսայի թիկնապահն էր:  
Վարդգեսի կինը կառավարությունից տեղեկություն ստացավ, որ  
իր ամուսինն ինքնասպան է եղել աքսորավայրում:

Կոստանդնուպոլիսից վտարված ղեկավարներն աքսորավայ-  
րից Թալեաթին հղեցին հետևյալ հեռագիրը.

*«Կազմակերպությունը, որն իր բոլոր ջանքերը միավորել  
էր Ձերի հետ՝ գործելու երկրի բարօրության ու առաջադիմու-  
թյան համար, այսօր գտնվում է այնպիսի տարօրինակ և ան-  
ըմբռնելի դրության մեջ, որ միմիայն այդ փաստն իսկ պետք  
է որ Ձեզ համար բավական լինե՞ր վերջ դնելու այս անոթալի  
վիճակին: Պետք է հաշվի առնել, որ հայ ժողովրդի ներկայա-  
ցուցչության նկատմամբ թուրքական կառավարության նմա-  
նօրինակ վերաբերմունքը պետք է որ խախտի երկու ազգերի  
միջև եղած փոխհարաբերությունները և իրար դեմ գժտեցնի  
երկու ժողովուրդների տարրերին: Երբեք մեր մտքով անգամ  
չէր անցնի, որ մեր համատեղ աշխատանքից հետո հար-  
կադրված պիտի լինեինք՝ այստեղից Ձեզ հետ բանակցելու  
հեռագրով:*

**Ակնունի, Ջարդարյան, դ-ր Փաշայան»:**

Խեղճ մարդիկ դեռ հույս էին տածում: Նրանց մահը վաղուց  
վճռված էր: Կոստանդնուպոլիսի 600 անհատականություններից  
մոտավորապես 590-ը սպանվեցին:

Յամալի այն կարծիքն է հայտնվել, որ ավելի քան մեկ միլիոն  
հայերի սպանությունն ավելի քիչ պետք է վերագրվի կանխա-  
մտածված, պլանավորված սպանությանը, քան ինչ-որ չարաբա-  
ստիկ հանգամանքների, որոնք չէին կարող կանխատեսվել կառա-  
վարության կողմից: Թալեաթի ի կատար ածվող հրամաններից

աներկբայորեն հետևում է, որ կառավարությունն ուզեցել է հայերի ոչ թե վերաբնակեցումը, այլ **բնաջնջումը**: Այդ հրամանները, որոնք 1915 թ. սեպտեմբերից մինչև 1916 թ. մարտը ուղարկվում էին Հալեպի կառավարող հիմնարկներին, Թեհլերյանի դատավարության ժամանակ մասամբ ներկայացվեցին բնագրով:

Դեռ 1915 թ. մարտին մարդկայնորեն մտածող թուրքերը Էրզրումի հայերի ուշադրությունը հրավիրեցին առաջիկա մեծ եղեռնի վրա:

Սզկիթներում մուլաները (հոգևորականները) հավատացյալներին գրգռում էին քրիստոնյաների դեմ՝ վկայակոչելով սրբազան պատերազմը: Որոշ տեղերում նույնիսկ հավատացնում էին, որ **ջարդերը իբր տեղի էին ունենում Գերմանիայի կառավարության կարգադրության համաձայն**:

Արժե ընդգծել, որ կային նաև թուրք բարձրաստիճան պետական պաշտոնյաներ, ովքեր անհողողոյ հրաժարվում էին արյունահեղությանը մասնակցելուց: Այդ պատվարժան այրերի թվին պետք է դասել հատկապես Հալեպի և Էրզրումի վալիներին (նահանգների քաղաքացիական-վարչական գործերի կառավարիչներ): Իրենց մարդկայնության դիմաց երկուսին էլ Թալեաթ փաշան պաշտոնանկ արեց:

## ՇՐՋՈՒՄ Է ՍԱՀՎԱՆ ԳՐԵՇՏԱԿԸ

1915 թ. հունիսին Թալեաթ փաշան ցուցում էր տվել քաղաքացիական ատյաններին՝ ձեռնամուխ լինել հայերի «տարագրությանը»: Ամպրոպի շառաչն սկսվեց շշմեցնող ուժով այն բանից հետո, երբ չարիքի ամպերն արդեն ամիսներ շարունակ կուտակվել էին մահվան դատապարտված ժողովրդի գլխավերևում: Դեռ հունվարից սկսած՝ արևելյան Անատոլիայի վիլայեթներում շատ հայերի դեմ միջոցներ էին ձեռնարկվում թուրքական կառավարման արվեստի բոլոր սարսափներով: Լրտեսության մեջ մեղադրանքը կամ առանց թույլտվության զենք ունենալը մեծ մասամբ պատրվակ էր ծառայում՝ ընտանիքներից ահռելի գումար շորթելու համար: Հազարավորների նկատմամբ բանտերում դատական գործ հարուցվեց, որը պետական պաշտոնյաներին և ոստիկաններին առիթ էր ընձեռում՝ բանտարկյալներին տանջելու ամենաբարբարոս խոշտանգումներով: Ամբողջ բնակչությունն ա-

վելի ու ավելի էր բորբոքվում այն հանցագործությունների լուրերից, որոնք իբր կատարվել էին հայերի կողմից:

Ահա և Ստամբուլից եկավ յաթաղանի հրամանը: Թալեաթ ու Էնվերն իհարկե գիտեին, թե ինչ էր նշանակում՝ «բոլոր ոչ լրիվ անբասիր ընտանիքներին վերաբնակեցնել Միջագետքում»: Նախ և առաջ Միջագետքն այնպիսի ողբալի աղքատ երկիր էր, որ այնտեղ հնարավոր չէր հանկարծակի վերաբնակեցնել 1.5 միլիոն մարդ, մանավանդ որ նվազագույն իսկ նախապատրաստական աշխատանք չէր տարվել՝ մարդկանց այդպիսի զանգված ընդունելու համար: Վերաբնակեցումը կնշանակեր Միջագետքի բնակչության կրկնապատկում: Եվ հետո պետք է պատկերացնել, թե ինչ է նշանակում մի ամբողջ ժողովուրդ, կանանցով ու երեխաներով, պոկել այն հողից, ուր բնակվել են հայերը հազարամյակներ շարունակ, մարդկանց մեծ հոսքեր թեժ ամռանը անօգնական քշել անհյուրընկալ լեռնոտ երկրով, հարյուրավոր կիլոմետրեր հեռու՝ առանց որևէ հնարավորության՝ դիմակայելու սովի, ծարավի, հիվանդությունների սարսափներին: Հարյուր հազարավոր մարդիկ՝ ամիսներով անօթևան, առանց բուժօգնության, առանց հիգիենայի - հենց միայն սա արդեն նշանակում էր մահվան դատավճիռ տասնյակ հազարավորների համար:

Պետական գերատեսչությունները պետք է որ արդեն ամիսներ ի վեր նախապատրաստված լինեին այն ահազարհուր հանձնարարությանը, որ նախանշվել էր իրենց համար: Քանզի երբ Ստամբուլից տրվեց հրամանը, Սադայելի գործը բոլոր տեղերում սկսվեց սահմուկեցուցիչ բժախնդրությամբ:

Ընդհանուր առմամբ շրջապատվում էին քաղաքներն ու գյուղերը և տղամարդկանցից պահանջվում էր հանձնել զենքերը: Միայն քչերը զենք ունեին, իսկ դրանք էլ մեծ մասամբ գալիս էին հեղաշրջման ժամանակներից, երբ երիտթուրքերը դրանք տալիս էին հայերին, որ սրանք նեցուկ կանգնեին նոր վարչակարգին: Ով բռնվում էր զենք ունենալու մեջ, տեղնուտեղը գնդակահարվում էր կամ սպանվում ավելի նողկալի ձևերով: Տղամարդկանց պարանով կապում էին իրար և հաճախ հենց բնակավայրի մոտերքում սպանում: Սպանվողների հարազատներն էլ թերևս դեռ մխիթարվում էին՝ լսելով նրանց մահվան ճիշդ: Այնուհետև կանանցից ու երեխաներից պահանջում էին՝ մի քանի ժամվա, հաճախ էլ միայն մի քանի րոպեի ընթացքում պատրաստ լինել տարագրման:

Ձեյթուն քաղաքից այդ ձևով հեռացվեցին մոտ 20000 հոգի: Միայն վեց արիեստավոր իրավունք ստացան մնալ տեղում: Մյուսները՝ Նրանք ստիպված էին թողնել իրենց ունեցվածքը, որ գողանում էին ոստիկաններն ու խաժամուժ ամբոխը, կամ էլ տե-րերը հապշտապ վաճառում էին չնչին գնով: Սահվան դատա-պարտվածները հետո քշվեցին Մարաշ, այստեղից էլ՝ Տավրոսի վրայով մինչև Ղարաբունար, որտեղ էլ իբր թե պիտի գաղութ հիմ-նեին: Ես հաճախ եմ եղել Ղարաբունարում և գիտեմ, որ այն Անա-տոլիայի ամենաթշվառ և ամենավատառոզ վայրերից մեկն է: Այնտեղ էին ժամանել հավանաբար մոտ 6000-8000 մարդ, որոն-ցից հարյուր և ավելի հոգու բժավոր տիֆը քաղեց - տարավ մի քանի օրում: Իսկ ճանապարհի՞ն ինչ էր եղել: Դ-ր Լեփսիուսն այդ մասին բերում է ականատեսի հետևյալ հաղորդումը.

*«Ծեր կանայք թուլացած ընկնում էին ու կրկին վեր էին կենում, երբ զապօհան մոտենում էր բարձրացրած գավազա-նով: Մյուսներին առաջ էին հրում ավանակների մման: Ես տեսա, թե ինչպես մի ջահել կին ընկավ, զապօհան երկու-ե-րեք հարված իջեցրեց, և կինը տանջանքով նորից ոտքի կանգնեց: Նրա ամուսինը քայլում էր իր առջևից՝ երկու-երեք տարեկան երեխան թևին: Մի քիչ հեռու մի պառավ սայթաքեց ու ընկավ ցեխի մեջ: Ոստիկանը կոպալով երկու-երեք անգամ բռթեց նրան: Նա չէր շարժվում: Այնուհետև ոստիկանը երկու թե երեք անգամ քացով խփեց նրան: Բայց պառավը մնում էր անշարժ պառկած: Ապա թուրքը նրան էլ ավելի ուժեղ խփեց քացով, այնպես որ պառավը գլորվեց ճանապարհի փոսի մեջ: Ես համոզված եմ, որ նա մեռած էր... Ինձ տեղեկություն տվողը պատմեց, որ Գոնիայից Ղարաբունար տանող ճանա-պարհին մի ջահել հայուհի իր նորածին մանկանը, որին ինքն այլևս կերակրել չէր կարող, գցել է ջրհորը: Մեկ ուրիշը իր մանկանը դուրս էր շարտել գնացքի պատուհանից»:*

Նույն ականատեսը.

*«Ձեյթունցի երբեմնի հարուստ մի հայ իր հետ տանում էր իր ունեցվածքի բեկոր երկու այծը: Մոտենում է մի ոստիկան և ձեռքը գցում կապերին: Հայը խնդրում է նրան, որ նա դրանք իրեն թողնի, առանց այն էլ ինքն այլևս ոչինչ չունի, ինչով կկարողանար ապրել: Պատասխանի փոխարեն թուր-քը նրան այնքան է ծեծում, մինչև որ հայը գալարվում է փո-շու մեջ, իսկ փոշին վերածվում է արնաշաղախ ցեխի»:*

Հազարավորներն այսպես տանջամահ արվեցին: Նորածին-ներով կանանց և հղիության վերջին օրերին հասած հարսներին տավարի նման մտրակներով քշում էին առաջ... Բռնաբարու-թյուններ էին կատարվում օրը ցերեկով: Ոստիկանության սպա-ները բազմության միջից զոռով հանում էին կանանց և բաշխում միջակա բնակավայրերի տղամարդկանց ցանկացած ձևով օգ-տագործելու համար: Դադար առնելու տեղերում ոստիկանների համար առանձնահատուկ հաճույք էր տղամարդկանց, հաճախ իրենց մերձավորների ներկայությամբ, զազանաբար տանջելը: Նրանք հայերին վառում էին շիկացած երկաթներով, պոկում էին նրանց եղունգներն ու մազերը և հատկապես կիրարկում էին խոշտանգումների զուտ թուրքական մեթոդը, որը սովորական երևույթ էր նաև բանակում, բասթոնադը՝ ճիպոտահարում մերկ ներբաններին, մինչև որ դրանք տրաքվում էին:

Տրապիզոնում դատարկվեց հայերի մոտավորապես հազար տուն: Այնտեղ կիրարկվում էր սպանության մի ձև, որը փորձարկ-վել էր ֆրանսիական հեղափոխության ժամանակ՝ «Noyade» ան-վան տակ. տղամարդկանց լցնում էին նավերը, որոնք մի քանի ժամ անց վերադառնում էին ... դատարկ: Տրապիզոնում երիտ-թուրքական կոմիտեի անդամները ջոկում էին որբանոցների ա-մենագեղեցիկ հայ խնամակալուհիներին՝ նրանց չարաշահելու իրենց զեխությունների համար:

Երզրումում, վալիի կամքին հակառակ, կազմավորվեցին բանդաներ, որոնք զարհուրելի կտտանքների էին ենթարկում այն հայերին, որոնց մոտ իրենք գենքի առկայություն էին ենթադրում: Ոստիկանները նույնպես օգտվում էին այդ մեթոդից՝ թաքցրած գենքերի վերաբերյալ խոստովանություններ կորզելու նպատա-կով: Այդ ձևով Հնայակ անունով մի մարդու այնքան ծեծեցին, մինչև որ նա այլևս քայլել չէր կարողանում: Հետո բանտում փե-տեցին նրա մազերը և աքցանով հանեցին ատամները: Ամեն ան-գամ, երբ խոշտանգվողը ուշագնաց էր լինում, նրան կրկին ուշքի էին բերում սառը ջրով:

Մերվածիկ գյուղում ոստիկանության ավագ լեյտենանտ Սու-լեյմանը քաղաքագլուխ Աբդուլ էֆենդու հետ միասին գյուղացի-ներին կտտանքների ենթարկելուց հետո ստիպեց գենք գնել թուրք հարևաններից: Արկան\* գյուղում մտրակով այնքան ծեծե-

\* Ինձ՝ Արկնի, Արդնի, Արդան:

ցին կանանց ու տղամարդկանց, որ շատ կանայք ուշագնաց եղան: Մոլլա գյուղի բնակիչներին ծեծեցին, դեմքերին կղկղանք քսեցին, իսկ տղամարդկանց զցեցին գետը: Եկեղեցում պարտադրեցին ընդհատել պատարագը և կտտանքների ենթարկեցին քահանային: Մախմուդ Բեքրի գյուղում Սուլեյմանը և նրա հանցակիցները երեք գյուղացու ծեծեցին մինչև ուշագնացություն, սառը ջրով կրկին սթափեցրին և դարձյալ շարունակեցին տանջել: Պոկեցին մի գյուղացու երկու մատները: Երբ գյուղացիք ի վիճակի չէին լինում տալ հայ ժողովրդական կուսակցության անդամների անունները և տվյալներ հաղորդել զենքի թաքստոցների մասին, կանանց բռնաբարում էին:

## ՍԱՏԱՆԱՅԻ ԿԻՐՃԸ

Տրապիզոնի և Էրզրումի վիլայեթների տարագիրները Եփրատի ձորով քշվեցին մինչև Քեմախի կիրճը: Սա արտակարգ խոր, շեշտակի իջնող կտրվածք է լեռների մեջ, որտեղ ջուրը հեղեղատի է վերածվում: Թե ինչ է կատարվել այստեղ բազում հազարավոր մարդկանց հետ, աներևակայելի դաժանության ու վայրագության մի պատկեր է, որ կարելի է կարծել, թե մի անգամ ևս կուտակվել է հազարամյակների խելագարությունը, նզովյալ երկրագնդի այս կտորի վրա վեր է ձգվել մի հսկա հրեշ՝ հունիսյան կիզիչ արևին ընդդեմ հաղթական գոռալու, որ ամենայն մշակույթ լոկ այնպիսի շղարշ է, որ ամեն օր կարող է պատառոտվել երկուտանի զազանի վայրագությունից:

Գրող Ֆ. Ռ. Նորդն իր «Սիր-Անուշ» վեպում (գերմաներեն հրատարակության վայրը՝ Շթուբգարթ) ուրվագծել է Քեմախի ոճրագործության մի պատկեր, որն իր ահասարսուռ սոսկալիությանը ավելի շատ հնարավոր է համարել որպես հրեշայնության հասնող երևակայության խելագար, մտացածին գաղափար, քան տառացիորեն ճշմարիտ եղելության բանաստեղծական ձևակերպում: Է. Ա. Փոյի և Է. Թ. Ա. Յոֆմանի պատկերավորման կարողության արդյունք գարիուրանքները կսփրթնեին այն բանից, ինչ կատարվեց 1915 թ. Վիլհելմ II-ի դաշնակիցների կողմից:

Հունիսի 8-ին, 9-ին և 10-ին հայ ժողովրդական զանգվածները թողեցին Երզնկա քաղաքը՝ ուղեկցվելով զինվորական մի պահակախմբի կողմից, որը, թվում էր՝ հետիոտներից ու բազմահարյուր

սայլերից բաղկացած փոխադրամիջոցների երկար շարասյան համար պիտի երաշխավորեր որոշակի կանոնավորություն: Գնում էին դեպի Քեմախ՝ մոտակա գավառական քաղաքը: Եփրատի այս ձորով տարվող տասնյակ հազարավորներից միայն մի մասնիկ հասավ ակնկալվող վայրը: Կապանում անպաշտպան մարդիկ զինվորների և շրջակայքից այստեղ շտապող արնածարավ քրդերի կողմից հարձակման էին ենթարկվում, թալանվում և ապա մորթվում էին արյունռուշտ կատաղության անասելի պոռթկումով: Մարդասպան ճիվաղների վայրագ գոռոցների ներքո դիակների ու կիսանեռ մարդկանց լեռներ էին շարտվում հորանջող վիհը: Մարդկանց ջախջախվող մարմինների դրմբոցն արծազանքում էր ուղղաբերձ ժայռերի արանքում՝ միախառնված այնտեղ՝ վերևում մահվան ցավերի մեջ գալարվող զոհերի խելակորույս վայնասունին: Տղամարդիկ ու կանայք տեսնում էին իրենց երեխաներին ու ամուսիններին կտրատված, փորոտիքները բացված, արյունաքամ, նրանց դիակները ժայռերի կողերին ջնջիված: Դժոխսային խառնափնթորության այս տեսարանից խելագարված մայրերն իրենց երեխաների ու ամուսինների հետևից նետվում էին մահաբեր խորխորատները: Հուսակտուր մարդկային էակները ծնկի էին չոքում արյունահեղ զազանների առաջ և աղերսում էին, որ արագ սպանեն իրենց: Մյուսները կարեկցանք էին մուրում կամ իրենց երեխաներին անձամբ էին շարտում գետը, որի ափերի մոտերքում, իրար վրա կիտվելով, արգելապատնեշ էին կազմում դիակները: Սրընթաց ջրերը ճողփում էին անկենդան մարմինների անկումից: Եվ դա ոչ թե մեկ ժամվա, ո՛չ, երեք երկար ու ծիգ օրերի դիվային գործ էր. ժամերով շարունակվում էին մորթելու և խեղդելու գործողությունները: Արյան գետ էր ծուլորեն ծորում ապառաժներն ի վար և միախառնվում շառաչող հեղեղին: Երեք օր շարունակ ... Եվ արևը չէր խավարում. Ստամբուլի շքեղ պարտեզներում սոսկումի ոչ մի մրրկաբեր հողմ չէր սրբում այն սեղանները, որոնց շուրջ իրար կենաց էին խմում գերմանացի և թուրք դաշնակիցների գերմանացիների մշտական սեղանների մոտ, որտեղ քաղքենիների բաժակներում հառնում էին արևելյան կախարդական պատկերներ, սպանվող մանկան մահվան ոչ մի խռխուրդ չէր վանում ալկոհոլի ծնած կեղծ պատրանքները: Եվ գիշերային ոչ մի ձայն ոչ մի գերմանացի քաղաքական գործչի չկարողացավ ստիպել՝ Բոսֆորի ափին գտնվող իրենց գործընկերների ակամջին գոռալու, որ նրանք ճիվաղներ են, որոնց պետք է շղթայել: Նրանց

խիղճը հանգիստ էր: Դեսպան Վանգենհայմը մայիսի 31-ին հաղորդել էր Բեռլին, որ ... «Թուրքիայի քաղաքական և ռազմական դրության պայմաններում հիշատակված ձեռնարկումներից ղրժ-բախտաբար խուսափել չստացվեց»... Ի՞նչ հրաշալի բառ է այդ «ղժբախտաբարը»:

Երե՞ք օր: Եփրատին կույ գնացածների ունեցած-չունեցածն առևանգվեց անտեր մնացած սայլերով: Եվ չորրորդ օրը 86-րդ հեծելազորային բրիգադի ջոկատներն ուղարկվեցին Քեմախի կիրճ՝ իբր թե պատժելու մարդասպան քրդերին: Այս «ազնիվ» ջոկատը պսակեց արյունալի ոճրագործությունը՝ սակավաթիվ ողջ մնացածներին անմնացորդ ոչնչացնելով: Լանջերն ու ժայռերը ցանված էին ուռած դիակներով, որոնք օդը լցնում էին անտանելի գարշահոտությամբ:

Երզնկացի երկու բուժքույրեր հաղորդում են մի ոստիկանի մասին, որը գլուխ էր գովում, որ ինքը օրական տասից տասներկու տղամարդ է սպանել և նետել գետը: Որ ինքը ջարդել է այն երեխաների գանգերը, ովքեր չէին կարողացել փախչել: Որ յուրաքանչյուր գյուղի մոտերքում նորովի են պղծվել կանայք: Յետո շարունակում են.

*«Հաջորդ օրը վաղ առավոտյան մենք լսեցինք մահվան դատապարտվածներին մեր կողքով անցնելիս ... Հեծածանքն աննկարագրելի էր: Դա մի ստվար բազմություն էր: Շատերը գոռում էին. «Փրկեցե՞ք մեզ, մենք մուսուլման կղառնանք կամ գերմանացի, կամ՝ ինչ դուք կուզեք, միայն թե փրկեցե՞ք մեզ: Հիմա նրանք մեզ կտանեն Քեմախ և կկտրեն մեր վզները...»: Երբ մենք մոտեցանք քաղաքին, շատ թուրքեր ծիարչավ եկան և տարան երեխաներին ու դեռատի աղջիկներին: Քաղաքի մուտքի մոտ, որտեղ նաև գերմանացի բժիշկների տունն էր, բազմությունը մի վայրկյան կանգ առավ՝ նախքան դեպի Քեմախ ճանապարհ բռնելը: Այստեղ իսկական ստրուկների շուկա էր, միայն թե ոչինչ չէին վճարում: Մայրերը կարծես հոժարական տալիս էին իրենց երեխաներին. դիմադրությունն էլ ոչնչով չէր օգնի»:*

Երբ կարմիր խաչի երկու բուժքույրեր հունիսի 21-ին հեռանում էին Երզնկայից, նրանք ճանապարհին էլ ավելին տեսան տարագիրների ճակատագրից ... «Անձայն ձգվում էին նրանք՝ փոքրերն ու մեծերը՝ մինչև ամենածեր կինը, որին մեծ դժվարությամբ էին կարողանում պահել ավանակի վրա, բոլորը, բոլորը: Քշում

էին, որպեսզի նրանց, իրար կապած, բարձր ժայռից զցեին Եփրատի հեղեղատը, նզովքի այն ծորում Քեմախ-բողազում: Մի հույն կառապան մեզ պատմում էր, թե ինչպես են դա արել: Մարդու սիրտ էր կանգնում... Մեր ոստիկանը հաղորդեց, որ նա հենց նոր 3000 կանանցից ու երեխաներից բաղկացած այդպիսի մի թափոր է բերել Մանախաթունից\* Քեմախ: «Հեփ գիթդի բիթդի - բոլորն էլ մեռան գնացին», - ասաց նա: Մենք թե. «Եթե ուզում եք նրանց սպանել, ինչո՞ւ դա գյուղերում չեք անում: Ի՞նչ կարիք կանախապես նման աննկարագրելի ձևով ստորացնել նրանց»: «Իսկ ո՞ր պիտի թաղեինք դիակները, չէ՞ որ նրանք կենիսեին», - եղավ պատասխանը:

Մի վայրկյան դադար տանք: Հազար տարի առաջ բուլղարների դահիճ Բարսեղ II-ը\*\* հանել տվեց 15000 մարդկանց աչքերը: 150-ը իրավունք ստացան պահպանելու մի աչքը, որպեսզի իրենց միանգամայն անօգնական եղբայրներին կարողանային ուղեկցել հետ՝ Բուլղարիայի կայսր Սիմեոնի մոտ: Ասում են, որ 978 թ. ռուս ցեղապետ Սվյատոսլավը Ադրիանապոլսի մոտ ցցի է հանել տվել 40000 հոգու: Սպարտակի խռովարարներից հազարավորները Կրասսի կողմից խաչին զամվեցին: Թիթուսը դաժանորեն մոլեգնում էր իր նվաճած Երուսաղեմում: Գերմանացի իշխանները սարսափելի վրեժ էին լուծում պարտված գյուղացիներից Ֆրանքենհաուզենի մոտ ընկած Արյան դաշտում: Բայց դրանք եղել են 2000, 1000, 400 տարի սրանից առաջ, դա եղել է հաղթողի վրեժը պարտվողի նկատմամբ, եղել է հաշվեհարդար պատերազմի դաժան հաշվարկում, եղել է այն, ինչ մյուսն էլ հավանաբար սիրով կաներ, եթե ինքը հաղթած լիներ: Դրանք պատերազմական ժամանակներ էին, երբ հենց դահիճ լինելով կամ զոհ դառնալով՝ «դեռ ինչ-որ արժեք ուներ տղամարդը»՝ պատերազմի ստրուկը, զինվորը, հպատակը, հայրենիքի պաշտպան տղամարդը: Սակայն մի անբողջ ժողովրդի բնաջնջումը կանանց ու երեխաների գիտակցված սպանողով - այս առաջադիմության համար բարբարոս անցյալը հավանաբար չէր «հասունացել»: Այստեղ արդեն պետք է խորհել Պերուում Պիզարրոյի կատարած ոճրագործությունների մասին, կարմիր ռասայի նկատմամբ սպիտակների վարած բնաջինջ պատերազմի մասին, Թասմանիա-

\* Ճիշտը Մանախաթուն:

\*\* Բարսեղ II-ը նույն ինքը՝ Բագիլեսու Բուլղարասպանն է:

յում, Նոր Ջեւանդիայում «քրիստոնյա» անգլիացիների կատարած մարդաորսի մասին, բուրերի պատերազմում նրանց գործած վայրագությունների մասին, խորհել տոչորոզ ծարավից մեռնելու մասին, ինչին մղում էին գերմանացիները հերերոսներին միայն կռահել կարողանալու համար, թե ինչ է պատահել 1915 թ. Քենսիի մոտակայքում: Բոլոր մեկնաբանությունների փորձերի դեպքում, սպանության հաճույքի, թալանի տենչի, կրոնական ատելության, իշխանասիրության և բթամտության գործոնների գործարկման դեպքում դեռ այնքան անըմբռնելի բան է մնում, որ մեզ համար 1915 թ. ողբերգությունը պիտի ներկայանա որպես պատմության բոլոր հանելուկներից ամենարյունահեղը և ամենասահմանելուցիչը: Այստեղ որպես մնացորդ հավիտյանս հավիտենից կմնա տարրական, մակերեսային խորիմաստությունը, որն անտանելի է:

## ՍՈՒԵՆՈՒՄ Է ՖՈՒՐԻԱՆ

Մերսիվանի\* (Սվազի վիլայեթ) քուլեջի մի ամերիկացի միսիոներ հաղորդում է, որ հունիսի սկզբին իշխանության մարմինները կտտանքների ենթարկել տվեցին մի քանի հայի և նրանցից խոստովանություն կորզեցին, որ հայերի ձեռքին մեծ քանակությամբ զենք կա: Ցուցմունքները ստիպողաբար վերցրին բասթոնադի, կրակի և գուցե նաև աչքերը հանելու մեթոդների կիրառումով: Խոստովանությունները տարածվեցին՝ թուրք բնակչության զայրույթը խստագույնս սաստկացնելու նպատակով: Քշեցին, մի տեղ հավաքեցին Մերսիվանի տղամարդկանց և այն էլ բոլոր տարիքի ու դիրքի տղամարդկանց, նաև հիվանդներին, որոնց քաշում հանում էին անկողնուց: 30-150 հոգուց բաղկացած խմբերով, երբ արդեն հափշտակվել էին նրանց ոտնամանները, նրանք ոտքով բռնեցին աքսորի ճամփան: Այս տղամարդիկ ճանապարհին անմնացորդ սպանվեցին: Դրան հետևեց կանանց ու երեխաների տեղահանումը, որոնց թուլատրվել էր իրենց հետ վերցնել մի օրով առտելու պաշար: Նաև հայ ուսուցչուհիներն ու աշակերտուհիները, որոնց մնալը թալեաթ փաշան երաշխավորել էր դպրոցի ամերիկացի տնօրենի խնդրանքով, ստիպված էին բռնել մահվան

\* Իմա՝ Մարսվան, Մարզվան:

ճամփան: **Քաղաքի 12000 հայ բնակիչներից միայն մի քանի հարյուրը մազապուրծ եղան կոտորածից:**

Ձիլեցի մի վիրավոր հայ զինվոր հայտնում է, որ երբ ինքը ռազմաճակատից վերադարձել է իր հայրենի տունը, տեսել է, թե ինչպես Սվազի **եպիսկոպոսի մերկ ոտքերը պայտել էին ձիու նման:** Վալին այդ տանջամքը հիմնավորել էր նրանով, թե **իրենք եպիսկոպոսին հո չէ՛ին թողնի ոտաբորիկ քայլելու...** Ձիլեի տղամարդկանց կապկպեցին իրար, քաղաքից դուրս հանեցին և սպանեցին: Կանանց ստիպեցին ընդունել իսլամը: Երբ նրանք հրաժարվեցին, մայրերին խողխողեցին իրենց երեխաների աչքի առաջ:

Քարպութի\* ամերիկյան դպրոցի ուսուցիչները մահապատժից առաջ սոսկալի տանջանքների էին ենթարկվում: Բանտում փետում էին պրոֆեսորներ թենեքեջյանի և Բուզիգանյանի մազերն ու մորուքները ստիպելով նրանց խոստովանությունների, և օր ու գիշեր պահում էին ձեռքերից կախված վիճակում: Մեկ այլ պրոֆեսոր խելագարվեց, երբ հարկադրաբար սեփական աչքերով տեսավ, թե ինչպես տանջամահ արեցին մի քանի հայի: Դրոֆեսոր Լյուլեջյանի կտտանքներին մասնակցում էր նույնիսկ վալին: Նահանգի պարոն կառավարիչն այնքան խփեց, մինչև որ հոգնեց ու վրա բերեց. **«Ով սիրում է իր կրոնն ու իր ժողովրդին, թող նա էլ շարունակի ծեծել»:**

Դիարբեքիում վարվում էին նույն ձևով, ինչպես Տրապիզոնում: Ամենից առաջ բանտում սպանվեցին քսանվեց հայ երևելիներ, այդ թվում նաև քահանա Ալփիարը. քահանայի ջահել կինը բռնաբարվեց տասը ոստիկանների կողմից և համարյա տանջամահ արվեց: Դետո 674 տղամարդկանց տեղավորեցին լաստերի վրա, ընթացքի ժամանակ զցեցին եփրատի ջրերը, ժանդարմները գնդակոծեցին լողալ փորձողներին: Դինգ քահանայի մերկացրին, լղոզեցին ծյուրով և ման ածեցին Դիարբեքիի փողոցներով: Մի ենթասպա պարծենում էր, որ ինքը հինգ ոստիկանների հետ Դիարբեքիի և Ուրֆայի արանքում ընկած ճանապարհին գնդակահարել է 700 անպաշտպան հայի: Լիճեի գավառապետը, որը չէր կատարել վալիի հայերին ոչնչացնելու բանավոր հրամանը, պաշտոնանկ արվեց և սպանվեց Դիարբեքի տանող ճանապարհին:

\* Իմա՝ Խարբեք:



Սասունի տարածքից 3000 տղամարդ փոխադրեցին Քարպուք և կոտորեցին բոլորին՝ բացի երեք հոգուց:

## ՏԻԿԻՆ ԹԵՐԶԻԲԱՇՅԱՆԻ ՑՈՒՑՍՈՒՆՔԸ ԹԵՂԵՐՅԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Թեհլերյանի դատավարության ժամանակ մի հայ եպիսկոպոսի ցուցմունքին զուգընթաց տիկին Թերզիբաշյանի ցուցմունքն այնպիսի ազդեցություն գործեց դատարանի վրա, որ կարելի էր այլևս հաշվի չառնել սովորականի նման դեռ գոյություն ունեցող նյութի վերաբերյալ զեկուցումը: Մենք բառացի վերարտադրում ենք այդ վկայությունը դատական արձանագրությունից.

Վկա - Ես երզրումում եմ եղել:

Նախ.- Դա Ձեր հայրենի՞քն է:

Վկա - Այո:

Նախ.- Այնտեղ տեղահանություններ կատարվե՞լ են:

Վկա - 1915 թ. հուլիսին այնտեղի բնակիչները հավաքվեցին, և ասվեց, որ քաղաքը պետք է թողնել հեռանալ:

Նախ.- Քաղաքում երևացի՞ն ազդագրեր, որ հայերը պետք է արտագաղթեն:

Վկա - Ոստիկանների ու պետական պաշտոնյաների միջոցով նախ տեղյակ պահեցին քաղաքի հարուստներին և հետո ասացին, որ մենք պիտի դուրս գանք քաղաքից, քանի որ այն մտնում է ռազմական գոտու մեջ, և քաղաքացիական բնակչությունը պետք է հեռացվի: Քաղաքի հարուստները տեղեկացվել էին դրանից ութ օր առաջ, մյուսները՝ տեղահանությունից մի ժամ առաջ: Դրանից հետո իմացվեց, որ դա խաբեություն է եղել, և որ միայն հայ բնակչությանն են հարկադրել դուրս գալ:

Նախ.- Ի՞նչ է, ամբողջ բնակչությունը միանգամի՞ց դուրս քրշվեց քաղաքից:

Վկա - Չորս անգամից:

Նախ.- Չորս խմբո՞վ:

Վկա - Չորս բազմություն՝ ութ օրվա ընթացքում:

Նախ.- Հետ մնացածները տեղեկություն ունեի՞ն, թե ինչ է եղել առջևի շարասյունների հետ:

Վկա - Ոչ:

Նախ.- Որոշակի նպատակակետ մատնանշվե՞լ էր:

Վկա - Մենք պետք է նախ երզնկա գնայինք:

Նախ.- Դուք ո՞ր խմբի հետ պիտի դուրս գայիք:

Վկա - Երկրորդ:

Նախ.- Նկարագրեցե՞ք՝ քանի՞ մարդու էր ուղեկցում պահակախումբը, ինչպե՞ս եղավ, մինչև ո՞ր հասար և ի՞նչ պատահեց:

Վկա. - Մեր ընտանիքը բաղկացած էր քսանմեկ հոգուց: **Նրանցից միայն երեքն են մնացել:**

Նախ.- Որքա՞ն էր ամբողջ բազմությունը:

Վկա - 500 ընտանիք:

Նախ.- Իսկ ինչպե՞ս մեռան Ձեր հարազատները:

Վկա - Մեր ընտանիքը բաղկացած էր քսանմեկ շնչից: Մենք վարձել էինք եզներով լծված երկու սայլ և մեզ հետ վերցրել այն ամենը, ինչ կարողացանք տեղավորել: Ուտելիք և փող: Մենք կարծում էինք, որ գնալու ենք Երզնկա: Մեզ հետ էին իմ հայրն ու մայրը, երեք եղբայրներս (ավագը՝ երեսուն տարեկան), երեք տղա (փոքրիկը վեց ամսական էր), ամուսնացած քույրս իր ամուսնու հետ, վեց երեխա (ավագը՝ քսաներկու տարեկան): Սեփական աչքերով ես տեսա բոլորի կորուստը, միայն երեքս մնացինք ու փրկվեցինք: Ես երդվում եմ, որ նրանք Կոստանդնուպոլսի հրամանով սպանվեցին:

Նախ.- Ի՞նչ եղանակով:

Վկա - Երբ մենք դուրս էինք եկել քաղաքից և երզրում անրոցի դարպասների առջևում էինք, եկան ոստիկանները և զենք էին փնտրում: Մեզանից վերցրին դանակները, հովանոցները և այլ բաներ: Երզրումից մենք եկանք Բայբուրթ\*: Երբ մենք անցնում էինք այդ քաղաքի կողքով, **կույտերով դիակներ տեսանք, և ես ստիպված էի ոտաբորիկ քայլել անցնել դիակների վրայով, այնպես որ ոտքերս արնոտվեցին:**

Նախ.- Դրանք դիակներ էին նախո՞րդ բազմությունից, որ դուրս էին եկել Երզրումից:

Վկա - Ոչ, դրանք Բայբուրթից էին: ... Հետո հասանք Երզնկա: Մեզ խոստացել էին բնակարան տալ, բայց բնակվելու իրավունք չտվին, մեզ նաև չէին թույլատրում ջուր խմել: Մեզ պարտադրեցին նույնիսկ եզները հանձնել. սրանց քշեցին սարերը:

Նախ.- Իսկ ինչպե՞ս բանը հասավ այդ ջարդերին, որոնց ժամանակ սպանվեցին Ձեր մերձավորները:

\* Իմա՝ Բայբուրդ, Բաբերդ:

Վկա - Երբ մենք շարունակեցինք ճանապարհը, բազմության միջից ջոկեցին հանեցին 500 երիտասարդների: Նաև իմ եղբայրներից մեկին: Սակայն նրան հաջողվեց փախչել և գալ ինձ մոտ: Ես նրան աղջկա շորեր հագցրի, այնպես որ նա կարող էր մնալ ինձ մոտ: Մնացած երիտասարդներին քչեցին հավաքեցին մի տեղ:

Նախ.- Ի՞նչ եղավ ջոկվածների հետ:

Վկա - **Բոլորին խառնիխուռն իրար կապկպեցին ու գցեցին ջուրը:**

Նախ.- Որտեղի՞ց գիտեք դա:

Վկա - Ես իմ սեփական աչքերով տեսա:

Նախ.- Որ նրանց գցեցին գե՞տը:

Վկա - Հա, նրանց գցեցին գետը, և հոսանքն այնքան սրընթաց էր, որ նրանց բոլորին, ում ջուրն էին նետում, հոսանքն առազ խլում տանում էր:

Նախ.- Ի՞նչ եղավ հետ մնացողների հետ:

Վկա - Մենք գոռում էինք, լաց լինում և չգիտեինք՝ ի՞նչ անել: **Բայց մեզ նույնիսկ լաց լինել թույլ չէին տալիս, այլ սվիններով բզելով՝ քշում էին առաջ:**

Նախ.- Ովքե՞ր էին դրանք:

Վկա - Երեսուն ոստիկան ու զինվորների մի ջոկատ:

Նախ.- Նրանք այդ ընթացքում ծեծո՞ւմ էին:

Վկա - Այո:

Նախ.- Հետո ի՞նչ պատահեց Ձեր ազգականներին:

Վկա - Այն ամենով, ինչ մենք կարող էինք տանել շալակով, եկանք Մալաթիա, այնտեղ մեզ տարան սարը և տղամարդկանց բաժանեցին կանանցից: Կանայք մոտավորապես տասը մետր հեռու էին տղամարդկանցից և կարող էին սեփական աչքերով տեսնել այն, ինչ կատարվում էր տղամարդկանց հետ:

Նախ.- Ի՞նչ էր կատարվում տղամարդկանց հետ:

Վկա - Ն ր ա մ ց սպանում էին կացիներով և հրում ջուրը:

Նախ.- Կանայք ու տղամարդիկ իսկապե՞ս այդ եղանակով ջարդվեցին:

Վկա - Միայն տղամարդիկ այդ ձևով մեռան: Երբ արդեն մի քիչ մութ էր, ոստիկանները եկան և ջոկեցին ամենագեղեցիկ կանանց ու աղջիկներին, տարան իրենց կնության: Մի ոստիկան էլ եկավ ինձ մոտ և ուզում էր ինձ իր կինը դարձնել: Ն ր ա մ ց, ովքեր չէին ուզում հնազանդվել, սվինահարում էին և ճղճղում

սրունքները: Նույնիսկ կտրում էին հղի կանանց կողերը և դուրս հանում երեխային ու դեն շարտում: (Խիստ վրդովմունք դահլիճում): (Վկան բարձրացնում է ձեռքը): Երդվում եմ:

Նախ.- Դուք ինչպե՞ս փրկվեցիք:

Վկա.- Նաև իմ եղբոր գլուխը կտրեցին: Երբ մայրս դա տեսավ, փլվեց գետնին ու տեղն ու տեղը մեռավ: Դրանից հետո էլի մի թուրք եկավ ինձ մոտ և ուզում էր ինձ իրեն կնության վերցնել, և քանի որ ես դրան չհամաձայնեցի, նա իմ ձեռքից վերցրեց իմ երեխային ու դեն շարտեց:

Նախ.- Բա Դուք հետո ինչպե՞ս դուրս պրծաք այդտեղից:

Վկա - Ես նկատեցի, որ հեռվում ծուխ էր բարձրանում ու փախա այդ ծխի ուղղությամբ, և այնտեղ ես գտա իմ եղբորն ու եղբորս կնոջը, որ հղի էր և ազատվելու վրա էր: Այնտեղ ասացին, որ մենք նույն երեկոյան իսկ պետք է թողնենք այդ վայրը. մենք ստիպված էինք այդտեղ թողնել եղբորս կնոջը, որովհետև նա պատճառավոր էր:

Նախ.- Հետո Դուք հասաք Սամսե՞ք\*: Իսկ քանի՞ հոգի կային այնտեղ:

Վկա - Շուրջ 600:

Նախ.- Իսկ Ձեր ընտանիքի՞ց:

Վկա - Հայրս, երկու եղբայրս և ես:

Նախ.- Ուրեմն Դուք ինքնե՞րդ եկաք մինչև Սամսեք:

Վկա - Այո: Այնտեղ հայրս հիվանդացավ, և ապա հրաման եկավ, որ հիվանդներին տանել չի թույլատրվում, այլ պետք է նրանց ջուրը նետել: Հետո հորս հանեցին վրանից: Դրանից հետո, սակայն, եղբայրս նրան նորից հետ բերեց, բայց հայրս նույն երեկոյան մեռավ:

Նախ.- Իսկ երկու եղբայրնե՞րդ:

Վկա - Նրանք ողջ մնացին:

Նախ.- Եվ այս ամենը իսկապե՞ս ճշմարիտ է: Դա հորինվածք չէ՞:

Վկա - Ինչ ես պատմեցի, դեռ շատ ավելի քիչ է, քան իրականությունը: Դրանից էլ վատթար էր:

Նախ.- Այդ պահից Դուք մնացիք Սամսեքո՞ւմ:

Վկա - Ես չէի կարող մնալ Սամսեքում: Մենք պիտի գնայինք Սուրիջ\*: Վերջապես մեզ բոլորիս քչեցին մի սարի վրա և մեզմից խլեցին այն ամենավերջինը, ինչ ունեինք:

\* Ենթադրվում է Սամոսատ, Շամուշատ:

\*\* Իմա՝ Սրուջ, Սուրուջ, Սյուրուջ:

Նախ.- Այն ժամանակ ո՞ւմ էին մեղավոր համարում այդ սուկալի բաների համար:

Վկա - **Դա կատարվում էր էնվեր փաշայի հրամանով, իսկ զինվորները հալածվողներին ստիպում էին ծնկի չոքել ու բացականջել՝ «Կեցցե՛ փաշան»:** Քանի որ փաշան նրանց կյանք էր պարզևել: (Վրդովմունք դահլիճում):

## ԷՆՎԵՐ ՓԱՇԱՅԻ ՓԵՍԱՆ՝ ԵՂԵՌՆԱԳՈՐԾ

Վանի վալին Ջևդեթ բեյն էր էնվեր փաշայի քեռայրը: Նրա հրամանատարության տիրույթում կառավարության որոշումներն իրագործվում էին ամենաբժախնդիր ձևով: Դեռ 1915 թ. փետրվարին թուրքերի մի համաժողովում նա ասել էր. «Մենք Ադրբեջանը սրբեցինք հայերից ու ասորացիներից. հայերի հետ մենք նույնը պիտի անենք Վանում»: Վան քաղաքի բնակչությունը մերժեց հնազանդվել թուրք մարդասպանների հրոսակախմբին և մի ամբողջ ամիս հուսահատ դիմադրություն էր ցույց տալիս, որի ընթացքում իրենց մահը գտան տ ա ս ն ու թ թուրք: Սակայն Բեռլինում թուրքական դեսպանն աշխարհին հայտնեց, որ Վանի վիլայեթում 150000 թուրք է սպանվել հայերի կողմից: Վանի պաշարման ընթացքում Ջևդեթ բեյը ավերել տվեց 200 գյուղ և կոտորել տվեց 26000 բնակիչ: Վանը փրկվեց ռուսների հանկարծակի հարձակումից:

Վենետուելացի Ռաֆայել Նոգալես ի Մենդեզը, որը համաշխարհային պատերազմի ժամանակ թուրքիայում էր, իր «Չորս տարի կիսալուսնի տակ» գրքում նկարագրում է իր տպավորությունները Ջևդեթ բեյի ճամբարում: Նա էնվերի փեսային համարում է փարիզյան նորաձևության վերջին ճիչով հագնված, սիրալիր, մեծահոգի, եթե այդպես էր պահանջվում, «բայց և՛ մարդկային կերպարանքով վագր»: Պալատում Նոգալեսը նըստում էր գեներալ-նահանգապետի դիմաց: Նրա ծախ կողմում նստում էր Ռաշիդ բեյը՝ թիկնապահը՝ իր վայելուչ համազգեստով: «Նրա բարեկիրթ վարվելաձևը ընկերակցության մեջ հեշտորեն թույլ չէր տալիս պատկերացնել, որ նրա լավ փայփայված մատներին իր տասնյակ զոհերի արյունն էր կպած»: Նրա աջ թևի մոտ նստում էր Ախմեդ բեյը, որը հետագայում կառավարության հրամանով Սատանայի կիրճում վայրագորեն սպանեց

հայ պատգամավորներ Ջոհրապին, Վարդգեսին և Տաղավարյանին:

Նոգալեսը գրում է.

*«Շատ տհաճ բաների թվում, որ ես ստիպված եմ եղել ականատես լինել, նաև մի երթ էր՝ ոստիկանների զորախմբի գլխավորությամբ, որն ուղեկցում էր մի պատվարժան ծերունու: Նրա սև փարաջան և թթագույն անբոլորք գլխարկը հուշում էին, որ գործ ունենք նեստորական եպիսկոպոսի հետ: Ծակատի վերջից արյան կաթիլներ էին թափվում ցած, որոնք նրա գունատ այտերի վրայով ծորալիս կարծես վերածվում էին մարտիրոսի արցունքների: Երբ նա անցնում էր մեր կողքով, հայացքը զամեց վրաս, կարծես զգում էր, որ ես էլ եմ քրիստոնյա. հետո նա շարունակեց քայլել մի բլրի ուղղությամբ, որտեղ նա խաչված թևերով, իր հոտի մեջտեղում, որը մահվան ճանապարհին քայլում էր նրա առջևից, կանգ առավ և ... վայր ընկավ՝ իր դահիճների թրերով ծվատված»:*

Մի այլ հաղորդման մեջ ասվում է. «Չասթևանում\* ու Սալմասում\*\* ջրհորերից հանվեցին 850 դիակ՝ այն էլ անգլուխ: Ինչո՞ւ: Թուրքական ջոկատների ավագ հրամանատարը յուրաքանչյուր քրիստոնյայի գլխի համար պարզևատրվել է դրամական որոշ գումարով: Ջրհորերը լցվել էին քրիստոնյաների արյունով: Միայն Չասթևանից դեպի Սաուջբուլաղ քրդերին ուղարկվեցին ավելի քան 500 կին ու աղջիկ... Հարյուրավոր կանայք փախսան ընկան խոր գետը, երբ տեսան, թե ինչպես իրենց բախտակից թույրերը օրը ցերեկով բռնաբարվում էին հրոսակների կողմից: Վանեցի մի ուսուցիչ գրում է.

*«Ապրիլի կեսին թուրքերը մոխրի վերածեցին տունս և մեր ամբողջ փողոցը. մեր տան մեջ կային 250 կին ու երեխա՝ Վանի շրջակայքի գյուղերից և հիսուն հոգի էլ քաղաքից. նրանք բոլորը վառվեցին տան հետ միասին... Գյուղերում, որոնք լրիվ ամայացել էին, այլևս կենդանի չունչ չէր մնացել, բացի շներից, որոնք լափում էին դիակները»:*

\* Ենթադրվում է Հավթվան:

\*\* Իմա՝ Սաղամաս, Սալմաստ:

## ԹԱԼԵԱԹԻ ՓԵՍԱՆ՝ ՆՈՒՅՆՊԵՍ ԵՂԵՌՆԱԳՈՐԾ

Մուսթաֆա խալիլը՝ Թալեաթի փեսան, հրամանատար էր Բիթլիսում: 1915 թ. հունիսյան մի կոտորածի ժամանակ հայ տղամարդկանց սպանեցին, 900 կանանց ու երեխաների փոխադրեցին Դիարբեքրի ուղղությամբ և նետեցին Տիգրիսը:

Մուշուն քաղաքը զավթեցին թմրամոթներով: Հայերը փախչում էին մի թաղամասից մյուսը: Վերջապես տղամարդկանց այնպես քշեցին սեղմեցին մի տեղ, որ նրանք կարողանային տեսնել, թե ինչպես են իրենց կանայք բռնաբարվում: Շատ տղամարդիկ իրենք սպանեցին իրենց կանանց: Մի մեծ ընտանիք համատեղ մեռավ թույնով:

Անգորայի մոտերքում 500 մարդկանց սպանեցին այն բանից հետո, երբ շատ շատերի քթերն ու ականջները կտրել էին և աչքերը համել:

\* \* \*

Ժողովրդի խղճուկ մնացորդները, որ դիմացան այդ դժոխքին, ցրվեցին Հյուսիսային Սիրիայի, Սիրիայի և Պաղեստինի կողմերը: Աշխատունակ տղամարդիկ մասամբ զբաղմունք գտան Բաղդադի երկաթուղու մեծ ձեռնարկությունում, որն այն ժամանակ տենդորեն ջանում էր ավարտել թունելների անցկացումը Տավրոսով: Այնտեղ մարդիկ հաճախ աշխատում էին այն տեղերում, որոնք միայն մի քանի շաբաթ առաջ սարսափելի կոտորածների թատերաբեմ էին եղել: Երբ 1916 թ. փետրվարին ես գնացի լեռները, մի հայ բանվոր Օսմանիեի մոտերքում ինձ ցույց տվեց մի դաշտ, որտեղ դրանից կարճ ժամանակ առաջ թաղվել էին 1000 տղամարդ, կին ու երեխա: Գերմանացի մասնագետների և զինվորների ժամանումով այլևս հնարավոր չէր կատարել նման զազանություններ: Ամոթի մի թեթև մնացորդ, գուցե նաև խոհեմություն, դեռ շատ բան է արգելում, երբ ամենավատթարն արդեն կատարվել էր: Սակայն հազիվ թե կարիք լինի ասելու, որ թուրք սադրիչները բանվորների հետ վարվում էին բարբարոսաբար, հենց որ մնում էին առանց հսկողության: Լեռները քշված հարյուր հազարավորներից տասնյակ հազարավորները հարթավայրում զոհ գնացին բռնկված համաճարակին, հատկապես բժավոր տիֆին: Ֆ. Ռ. Նորդը ցնցող հարորդում է տալիս Հալեպի մոտակայքի մի այգում բռնկված

ժանտախտի մասին: Իսլահիեի մոտերքում ես տեսա կանանց ու երեխաների բազմություններ, որոնք ճանճերի պարսերի նման հարձակվում էին մեր գնացքի վրա: Դրանք քրջերով կախտոված կմախքներ էին: Գազանային վայրենությունը, խելացնորությունը վառվում էին նրանց աչքերում: Մինչև հարավ հասնող Երուսաղեմ և մինչև արևելքում ընկած Մոսուլ թափվում ողողում էր չարչրկվածների հեղեղը: Ես գիտեմ, որ Դամասկոսում մի առավոտ նեղլիկ փողոցներում հավաքեցին սովամահ եղած երեխաների հիսուն կմախք և սայլակներով տարան թաղելու: Եփրատի ափին ընկած Մեսքենեի մոտերքում (Հալեպից արևելք) կար մի մեծ համակենտրոնացման ճամբար, որտեղ սովամահ էին անում հայերին: Թուրքերի կարծիքով, պետք է որ այնտեղ թաղված լինեին 55000 մարդ: Դեյր էզ Ջորի անապատ քշված 60000 հայերից համարյա ոչ ոք կենդանի չմնաց: Ջոհերին մի քանի հարյուր հոգիանոց խմբերով հեռացնում էին ու սպանում: Բաբում երկուսուկես օրվա ընթացքում սովամահ եղան 1029 հայ:

## ԾԵՐ ՄԱՐՇԱԼԸ

«Die deutsche Allgemeine» («Գերմանացի հանրությունը») թերթը 28.4.1927 թ. հրապարակում է գեներալ-ֆելդմարշալ ֆոն դեր Գոլցի 22.11.1915 թ. Հալեպից ուղարկված նամակը: Այնտեղ մարշալը գրում է.

«... Գլխավոր թունելը գործարկվեց հաջորդ առավոտյան, և ապա անցան ցած՝ դեպի Հյուսիս-Սիրիական հարթավայրը: Այստեղ մենք տեսանք փախստական հայերի թախծոտ հայացքը, ուլքեր հարկադրված էին վերաբնակվել Տավրոսի հարավային ստորոտում և, բնականաբար, անսահման թըշվառության մեջ էին գտնվում, քանի որ մարդկային հոգացողությունը նման մեծ զանգվածների առկայության դեպքում ի վիճակի չէ ավելին անել: Ազգային սոսկալի ողբերգություն: Առանց սննդի, առանց մատակարարման, անպաշտպան ծրգվում էին հազար հազարավորները անհայտ նպատակին ընդառաջ: Շատերը մեռան ճանապարհի եզրերին և երկար ժամանակ մնում էին անթաղ ընկած: Մարդ հոգու խորքում կարեկցանք էր զգում, բայց ոչնչով օգնել չէր կարողանում: Թե

ինչ ողբերգություններ է արդեն ծնել այս աղետալի պատերազմը, հազիվ թե հնարավոր լինի թվարկել, և քանի՞սն էլ այն դեռ պիտի ծնի»:

Մարշալ ֆոն դեր Գուլցը՝ «թուրքական բանակի հայրը», որ մի ամբողջ կյանք ծառայել է կիսալուսնին, ամենայն հավանականությամբ ինքն է դարձել իր «հավատարիմ» աշակերտների անմարդկայնության զոհը: Այդ զառամյալ ծերունուն ես տեսել եմ 1915 թ. ամռան կեսին, Կոստանդնուպոլսում, սգո թափորի մեջ, Գերմանիայի դեսպան Վանգենհայմի հուղարկավորության ժամանակ: Ենվերը և մի այլ գեներալ իրենց ուժեղ թևերով ոտքի վրա էին պահում ակնհայտորեն տառապյալ մարշալին: Գերմանա-թուրքական զինակցության ինչպիսի՞ հուզիչ պատկեր:

Ֆոն դեր Գուլցը հանկարծամահ եղավ 1917 թ. Քուր էլ Ամարայի մոտ: Նոգալես ի Մենդեզն իր գրքում հաստատում է, որ Հալիլ պաշան ամենամաքիմ ձևով կոպիտ է վարվել այդ անօգնական մարդու հետ: Նոգալեսը գրում է.

*«Երբ ես հետո, Քուր էլ Ամարայի մոտ, հայացքս սահեցրի ճամբարի վրայով, նկատեցի, որ, չնայած Բաղդադից մեր մեկնելու պահին փոխզնդապետ Դ-ի՝ թուրքական զլխավոր շտաբի բազմաթիվ սպաներին արած նախագգուշացմանը, որ մարշալը ոչնչից չպետք է զուրկ մնա, սրանք նրան տեղավորել էին մի փոքրիկ, կեղտոտ վրանում, ուր հնարավոր էր մտնել միայն կռացած: Իրենք անձամբ տեղավորվել էին բոլոր հարմարություններով շքեղ, անջրանցիկ առազաստալաթով վրաններում, որոնք պերճանքի այլ առարկաների կողքին բաժին էին ընկել նրանց Կտեսիփոնի\* ճակատամարտից հետո անզլիացիների կողմից լքված ճամբարում: Թշվառ վրանում ես հանդիպեցի մարշալին՝ դաշտային ողորմելի մի անկողնում պռոկած: Երբ ես նրան նայեցի, իսկույն հասկացա, որ սոված էր: Ինքնըստինքյան հասկանալի է, որ ես կանչեցի մի սպասավորի և կարգադրեցի՝ նորին գերազանցության համար բերել մի կտոր հաց և սարդիմաձկան մի պահածոյատուփ, որը ես, համենայնդեպս, պահում էի թամբիս գրդպանում: Ես նստեցի դաշտային թշվառ անկողնու վրա և մասնակցեցի համեստ ընթրիքին...»:*

Մի քանի օր անց մարշալը մեռավ: Վեներուելացին հաստա-

տում է այն, ինչ ենթադրում էր Թուրքիայում ապրող գերմանացիների մեծ մասը:

Մեր «դաշնակիցները»:

## ԲԱՎԱԿԱՆ Է

Մենք նայեցինք մարդակերպ գազանի առկայծող աչքերի մեջ: Եվ եթե նույնիսկ մեզնից մեկը ուզենար տեղի տալ այն կասկածին, թե արդյո՞ք ամբողջ պայքարն իզուր չէր, մենք իրավունք չունենք կասկածելու: Ո՛չ, մենք իրավունք չունենք: Մենք այսօր իրավունք չունենք կասկածելու բարուն, որը պիտի լինի, որին մենք պիտի հասնենք և այն հզորացնենք, որպեսզի վաղը նորից սատանան նոր զգեստով մեր առաջ, մեր գլխավերևում չպարի իր հաղթական շուրջպարը: Բայց մենք պարտավոր ենք իմանալ, որ ամբողջ աշխատանքը միայն նոր ենք սկսելու: Այստեղ խոսքասերները շաղակրատում են Հեքուբայի և Նիոբեի մասին: Այդտեղ կուռքերը ցնցված են իրենց նահատակների դժբախտ ճակատագրից: Այնտեղ մռայլ Գոյունեվալը խաչվածի մարտիրոսությունը տեղափոխում է Իզենհայմի զոհասեղանի կտավի վրա: Բնությունը շունչը պահած դիտում է բոլոր զարհուրանքների այդ կուտակումը: Պատմության մեծագույն Գողգոթայի ողբերգությունը երբևիցե կզտնի՞ իրեն կերտողին, իր արվեստագետին, բանաստեղծին, որը գալիք դարերի մարդկանց հայացքը սևեռի այս ժամանակի վրա, խելագարության վրա, դժոխային խրախճանքի վրա, որ գոհունակները, վախկոտներն ու հիմարները անվանում են համաշխարհային կարգուկանոն: Մի աշխարհ, որն ընդունակ չէ ամաչելու նման կարգուկանոնից, պետք է խեղդվի իր կեղծավորության ճահճուտում: Այնտեղ բռնաբարել են, մորթազերծ են արել, խլել են մոր փորի մեջ եղած երեխայի կյանքը, իննսունամյա ծերունու կյանքը, երբ յուրաքանչյուր նորակառույց մանկատուն ու ծերանոց դրվատվում էր որպես մշակութային առաջադիմություն: Մարդն արդեն օգտվում էր տարերքի ամենագորությունից՝ հատիկ առ հատիկ: Հեռախոս, ռադիո, ավիացիա թռան-անցան երկրների սահմանները, հեռադիտակը հաղթահարեց տիեզերական տարածությունները, մանրադիտակը զարմացող աչքին հնարավորություն տվեց թափանցելու փոքրագույնի աշխարհը: Այնտեղ մարդիկ ճառախոսեցին, աղաղակեցին, աղոթե-

\* Իմա Տիզբոն:

ցին, լաց եղան, իրենց պահեցին ինտերնացիոնալիստի նման, պայքարեցին հանուն միջազգային իրավունքի և մարդասիրության: Այնտեղ 1900 տարուց ի վեր կար Քրիստոսի ոգին: Այնտեղ արդեն մի սերունդ գոյություն ունեցող սոցիալիզմի ազատագրական գաղափարը պոկեց դռների երեկվա ժամգոտ ծխնիները: Թվում էր՝ ճաք է տվել անցյալի խարամ զրահը, մարդն արթնացել է մարդկության համար՝ գալիք համատեղ երջանկության հաղթանակի զգացումով՝ արհամարհելով երկրների գծանոցային ցանկապատերը...

Բայց, այնուամենայնիվ, մի անգամ ևս եկավ այն ժամանակը, երբ ատելության դաժան եղյամը ցրտահարեց այն, ինչը սնում էր հույսը: Հայրերը թաղեցին իրենց զավակներին, տկարները՝ առողջներին: Այգին դարձավ գերեզման, ծաղիկը՝ հանգուցյալի պսակ, բարին՝ ատելություն, մարդը՝ մարդատյաց թշնամի: Եվ երբ Շեքսպիրի, Վոլտերի ու Գյոթեի աշխարհամասուն արյան մշուշը կուրացրել էր աչքերը, այնտեղ ինչ-որ տեղ, ժայռոտ մի երկրում, հանգավ մի ամբողջ ժողովուրդ: Մարդիկ դա մոռացան:

Մարդկությունը մոռանում է իր խայտառակությունը: Մեծ և փոքրոգի մոռացումը այն պաշտպանական պատենշն է, որի հետևում մարդասպաններն իրենց արտում վիշապի ատամներ են ցանում: Մենք իրավունք չունենք մասնակից լինելու այդ մոռացումին: Ամեն ոք պարտավոր է անձամբ իր իսկ ներսը լուսավորել, լսելով քննել իր հոգին այն կեղծ հնչյուններից հետո, որոնք վաղը կրկին կարող են դառնալ պատերազմի շեփորագո, որին վաղը չէ մյուս օրը այնուհետ կհետևեն սգո երգերը: **Լինել պատերազմի հակառակորդ, թե՛ մահվան կավատ** - սա՛ է վճռելի հարցը բոլորիս համար:

## ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԵՂՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հայերի ողբերգության գերմանացի գիտակների մեծ մասը անզուսպ դատապարտում է պատասխանատու թուրք հանցագործներին: Սակայն հենց որ փորձ է արվում կայսերական Գերմանիային բաժին հանել Կովկասում կատարված նախճիրի իր մեղսակցությունը, բարի գերմանացիները թույլ են տալիս միևնույն սխալը, որ նրանք առհասարակ կատարում են պատե-

րազմի մեջ մեղավոր լինելու հարցում: Բոլոր ուժերով հակառակվում են խոստովանել իրն համակարգի մեղքերը, կարծես երեկվանների խայտառակությունը կարող է այսօրվանների անպատվությունը լինել, եթե վերջիններս կամենան վարել առավել մարդկային քաղաքականություն: Գերմանացիների ցավալի թուլությունն այն է, որ նրանք չեն ուզում դասեր քաղել անցյալի սարսափելի խառնաշփոթությունից, որ նրանք ամաչում են ներկայից, փոխանակ ամբողջ աշխարհի առաջ խայտառակության արժանի խարանը դրոշմելու նախկին այն համակարգի վրա, որը մեր ժողովրդին զցեց ամենախոր թշվառության մեջ: Պատմության ամենազարմանալի երևույթներից մեկն այն է, որ այս ժողովուրդը մեծ մտքի բոլոր բնագավառներում ցուցաբերած իր փառահեղ խիզախության կողքին քաղաքական բնագավառում հաճախ հանդես է բերում բարբարոս հետամնացության նշաններ: Հազիվ թե երկրագնդի որևէ ժողովուրդ մարդկությանը տված լինի կարկառուն փիլիսոփա - մտածողների մի այսպիսի հարուստ ընտրանի: Գյոթեն ու Յոլդերիլինը հասան բանաստեղծական գեղեցկության գագաթն ու խորքը, իսկ Բեթհովենի հերոսական հոգուց հորդեցին հնչյուններ, որոնց կախարդական դողանքն ու վեհությունը լցնում են աշխարհը: Ե՞րբ է գալու այն օրը, երբ այս մեծ ժողովուրդը եվրոպայի սրտում, երես թեթելով թրայչքեի ոգուց, հաղթահարելով պետության ու համազգեստի իր երկրպագությունը, կապացուցի իր իսկական հերոսների ոգուն իր արժանի լինելը: Միայն ճշմարտության աներեր տենչը կհասցնի այդ ուղուն:

*Հնարավոր չէ բավական հնչեղությամբ բացականչել.*

*«Այն բոլոր հիմարություններն, որոնք կատարում էին Վիլհելմ II-ը, դիվանագետներն ու ռազմական ղեկավարությունը, այն լեռնաբերծ հանցանքին, որն իրենց վրա էին բարդում գերմանացի հերոսատրատները, գումարվում է նաև 1915 թ. փոքրոգի ոճրագործության հանդեպ գերմանական պատերազմող կառավարության հավասար պատասխանատվությունը:*

1915 թ. ամռանը ամբողջ աշխարհով մեկ վրդովմունքի մի աղաղակ անցավ Կովկասում կատարված նողկալի արարքի հանդեպ: Մարդկությունը սարսափով տեսավ, որ հնարավոր է էլ առավել զարհուրելի, քան հենց ռազմաճակատներում եղած արյունահեղությունը: Չեզոք երկրներում տեղի մշտաբնակ հայերը հասարակական կարծիքը հեղեղեցին իրենց հուսակտուր օգնու-

թյան կանչերով իրենց մեռնող ժողովրդի համար, և բարի կամքի բոլոր մարդիկ սարսափած ականջ էին դնում: Ամերիկայում այն ժամանակ Գերմանիայի համար հսկայական բան էր դրված խաղաքարտի վրա: Ուիլսոնի կառավարությունը Կոստանդնուպոլսի իր դեսպան Մորգենթաուի միջոցով և հյուպատոսության հաղորդումներով տեղյակ էր ահասարսուռ ողբերգության բոլոր մանրամասներին, և Անտանտի մամուլը բաց չէր թողնում առիթը ԱՄՆ-ում սաստկացնելու զայրույթը Գերմանիայի հանդեպ, որն էլ անթափանց լռություն էր պահպանում:

Կարո՞ղ է պատահել, որ գերմանական կառավարությունը համաձայն է եղել իր դաշնակցի ոճրագործությունների հետ: Միանգամայն ստույգ՝ ոչ:

Պետք է որոշակի ընդգծել, որ Թուրքիայում պաշտոնատար գերմանացիները փորձել են պաշտպանել հայերին և օգնել նրանց, որտեղ միայն կարողացել են: Այստեղ պետք է հիշատակվեն Հալեպի հյուպատոս Ռյուլերի և Դամասկոսի հյուպատոս Լոյթվեդի անունները: Գեներալ Լիման ֆոն Չանդերսը Չմյուռնիայում սպառնում էր գնդակահարել տալ թուրք ոստիկաններին, եթե սրանք հանգիստ չթողնեին սպառնալիքի տակ գտնվող հայերին. դրանով նա կարողացավ փրկել մարդկային կյանքեր: Մարշալ ֆոն դեր Գուլցը իր հրաժարականի սպառնալիքով եական մեղմացումների հասավ Էնվեր փաշայի միջազեպայան հրամանատարության տիրույթում: Անկասկած է նաև, որ դեսպան ֆոն Վանգենհայմի հաջորդողը՝ կոմս Մեթերնիխը, անդադար բողոք էր հղում թուրքական կառավարությանը:

Բայց ի՞նչ էր անում Բեռլինը: Գերմանական կառավարությունը, որը պարտավոր էր ճշգրիտ իմանալ, որ մի ամբողջ ժողովրդի եղեռնի հարց կար, Բարձր դռան մոտ անհրաժեշտ շեշտով նպաստե՞լ է Ամերիկայի դեսպան Մորգենթաուի՝ հայերին Ամերիկա տեղափոխելու առաջարկին: Այդ հարցը այսօր էլ դեռ բաց է:

Հաստատ է, որ գերմանական ըշխանությունները երբեք էլ նկատի չեն ունեցել հրաժարվելու Ստամբուլի մարդասպանների հետ կնքած դաշինքից՝ չնայած Թալեաթի և Էնվերի բոլոր անպատկառություններին: Նրանք մտել էին բոլոր հաղթաթղթերն իրենց ձեռքում պահող ոճրագործների շրջապատը և ենթարկվել նրանց առավել ուժեղ կամքին: Հաղթանակի տեսիլքին հետամուտ լինելուն ստորադասվեց ամեն ինչ, նաև ամեն մի բարոյական նկատառում:

1915 թ. մայիսին Էնվերը բարոն ֆոն Վանգենհայմին հայտարարեց, որ անհրաժեշտ է «այժմյան ապստամբ հայկական կենտրոններից բոլոր ոչ լրիվ անբասիր ընտանիքներին վերաբնակեցնել Միջագետք», և մայիսի 31-ին Վանգենհայմը հեռագրեց Բեռլին.

*«Էնվերը թախանձագին խնդրում է, որ մենք չբռնենք նրա ձեռքը: Միջոցառումներն անշուշտ մեծ դաժանություն են նշանակում հայ բնակչության համար: Բայց ես այն կարծիքին եմ, որ մենք, հավանաբար, իրավունք ունենք դրանք իրենց ձևով մեղմացնելու, բայց ոչ սկզբունքորեն արգելելու»:* Հունիսի 17-ին Վանգենհայմը հաղորդում է արտաքին գործերի նախարարությանը.

*«Թալեաթն անպատկառորեն այնպես է արտահայտվել, որ Բարձր դռուքը համաշխարհային պատերազմն ուզեցել է օգտագործել այն նպատակով, որ հիմնովին սրբի իր ներքին թշնամիներին (բնիկ քրիստոնյաներին), իսկ դրանում արտասահմանի դիվանագիտական միջամտությունը չպիտի խանգարի»:*

Իսկ 1915-ի հուլիսի 7-ին.

*«Վերաբնակեցման եղանակը ցույց է տալիս, որ կառավարությունը փաստորեն հետապնդում է այն նպատակը, որ թուրքական կայսրությունում ոչնչացնի հայերի ցեղը»:*

Երբ Լեփսիուսը Կոստանդնուպոլսում պարզել էր հանցագործության ամբողջ ընդգրկումը, Վիլհելմի փողոցում այցելել է պետական քարտուղարի օգնական Ցիմերմանին և նրանից պահանջել թուրքերի վրա գործադրել ամենախիստ ճնշումը, որպեսզի առնվազն ողջ մնացածները պաշտպանվեն. Ցիմերմանը պատասխանել է.

*«Ի՞նչ պիտի անենք: Թուրքիայի հետ մեր դաշինքը դրված է Թալեաթի, Էնվերի և Հալիլի վեց աչքերի վրա: Եթե այդ երեքը մեզ չլսեն, մեզ կմնա միայն քանդել դաշինքը: Իսկ դա մենք չենք կարող»:*

1915 թ. օգոստոսի 31-ին Թալեաթը հայտարարեց Գերմանիայի դեսպանին.

*«La question arménienne n'existe plus! - Հայկական հարցը այլևս գոյություն չունի»:*

Ինչպես երևում է, գերմանական կառավարությունը հաստատ գիտեր, թե ինչ խնդիր կար Հայաստանում: Թալեաթը կարող էր պարծենալ. «Հայկական հարցի լուծման համար ես մի օրում ա-

### վելին արեցի, քան Արդուլ Չամիլը՝ երեսուն տարում»:

Իսկ գերմանացի ժողովուրդը: Որևէ ժողովուրդ երբեք առավել հանցավոր ձևով չի խաբվել: Ռայխսբազմ անգամ իրավունք չունեի իմանալու ճշմարտությունը: Պատգամավորների համար հատկացված մեկնաբանող նյութերը, որ ուղարկում էր Լեփսիուսը, չէին ընկնում հասցեատերերի ձեռքը: Գերմանա-թուրքական միավորումները բարեկամության զվարթ տոներ էին տոնում: Թուրք բարձրաստիճան անձինք մեծարվում էին մեզ մոտ, և ոչ ոք չէր թքում նրանց երեսին: Վրա էին պրծնում վերջնական հաղթանակի երանգափայլ օճառապղպջակին, ոչինչ չէին տեսնում վրդովմունքի բոցերից, որ վեր էին գալարվում մեր շուրջբոլորը, իսկ դաստիարակությամբ սրսկված առեղծվածային հավատը իշխանության հանդեպ թույլ չէր տալիս այն գաղափարի առաջացմանը, որ խաբեությունը դարձել էր կայսերական կառավարական արվեստի կարևորագույն միջոցը:


Լուրերը, որ արտասահմանից հասնում էին գերմանական մամուլին, չպետք է լուսաբանվեին: Թերթերը, որոնք կտպագրեին ճշմարտությունը, կփակվեին: Բայց, այնուամենայնիվ, ինչ-որ բան սպրդում էր: Որպեսզի արգելվեր, որ գերմանական հասարակությունն իմանա ճշմարտությունը, պաշտոնական մամուլի բաժինները օժանդակում էին թուրքական հերքումների տարածմանը, որոնցում թուրքերը խաբում էին այնպիսի անպատկառությամբ, որ անգամ գերմանական ռազմական մամուլի բաժնի վարիչներն ընկնում էին կարմրելու վտանգի մեջ:

Գերմանիայի հասարակական կարծիքն ամբողջ պատերազմի ընթացքում ստեղծվում էր Լուդենդորֆի ոչ սովորական բարեկամի՝ գնդապետ Նիկոլայի կողմից: Յ. ֆոն Գերլախի «Սուի մեծ ժամանակը» և դ-ր Զուրթ Մյուլհազամի «Թե ինչպես խաբվեցինք» երկու գրքերն այդ մասին տալիս են սպառնիչ պարզաբանում:

7.10.1915 թ. մամուլի ասուլիսում թղթակիցներին տրվել է հետևյալ ցուցումը.

*Չայերի հանդեպ գործած ոճիրների կապակցությամբ պետք է ասել հետևյալը. մեր բարեկամական հարաբերությունները Թուրքիայի հանդեպ այդ ներթուրքական գերատեսչական խնդիրներով ոչ միայն չպետք է վտանգի ենթարկվեն, այլ ներկա ծանր պահին նույնիսկ չպիտի քննության առնվեն:*

Ուստի առաջմ պարտադիր է լռելը: Չետագայում, եթե գերմանական մեղսակցության պատճառով արտասահմանից





## ՀԱՅԱՍՏԱՆ

Ընթերցողը թող մի հայացք նետի այս քարտեզի վրա. այն ցույց է տալիս, թե որչափով է «Մեծ հնգյակը» ի չիք դարձրել հայ ժողովրդի հույսերը: Սևրի հաշտության պայմանագրի համաձայն հայերը պիտի ստանային պետականորեն ինքնուրույն մի հայրենիք, որն իր մեջ ներառում էր Երևան, Ալեքսանդրապոլ, Կարս, Էրզրում, Վան, Բիթլիս, Մուշ, Դիարբեքիր քաղաքները, իսկ Տրապիզոն մավահանգստային քաղաքով հարում էր Սև ծովին:

Սակայն այդ պլանից շուտով հրաժարվեցին: Անտանտի պետական գործիչներն ընդարձակ ինքնավար պետության փոխարեն հայերին խոստացան մի «հայրենի օջախ» Լեռնահայաստանում կամ Կիլիկիայում: Բայց դրժվեց նաև այդ խոստումը: Լոզանի կոնֆերանսում (1923 թ.) լքեցին մարտիրոսված այդ ժողովրդին և նրան թողեցին «Թուրքիայի բարեհաճությանը»:

Եվ այսպես, իրենց ինչքից ու հարազատներից զրկված, դեռ այսօր էլ աշխարհով մեկ անհայրենիք թափառում են 700000 մարդ՝ չհաշված ավելի քան 100000 հայ որբուկներին:

Սևրում հայերին հանդիսավոր խոստացան ստվերագծով սահմանազատված տարածքը, սակայն նրանց փաստորեն բաժին հասավ հյուսիս-արևելքում ընկած, Երևանը շրջապատող այն փոքրիկ անկյունը:

Այդպես մի ամբողջ ժողովուրդ մնաց խաբված ու լքված:

հետևեն ուղղակի հարձակումներ, պետք է գործին վերաբերվել մեծագույն զգուշությամբ ու զսպվածությամբ և ավելի ուշ պատեր-վակել, թե հայերը խիստ կատաղեցրել են թուրքերին:

23.12.1915 թ. մամլո ասուլիսում ասվում է.

Խորհուրդ չի տրվում՝ Հայկալիսում ունեցած իրենց հաջողության վրա թուրքերին ծայրահեղորեն փառաբանել, քանզի վտանգ կա, որ պատասխանատու թուրք պետական գործիչները խիստ կգերազնահատեն իրենք իրենց և թուրք ռազմավարներին անտեսելով, թե դրանում իրենք ինչով են մեզ պարտական ...

Ամենաճիշտը հ ա յ կ ա կ ա ն հ ա ր ց ը լ ռ ու թ յ ա ն մատնելն է: Այդ հարցում հատկապես դրվատելի չէ թուրք տիրակալների վերաբերմունքը:

Ինչպես տեսնում ենք, կառավարությունը գիտակցաբար խաբել է: Գերմանացի ժողովրդի նկատմամբ հանցանք թույլ տված անձինք դեռ երկար տարիներ Բոսֆորի ափին գտնվող դահիճների հետ թև թևի ձգտում էին «վերջնական հաղթանակի»: Այս խաբանը հավերժ դաջված կմնա նրանց ճակատին:

## «ԽԱԲՎԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴ»

Վերսալի, Ս. Ժերմենի և Սևրի հաշտության պայմանագրերը մինչև այդ պահը կեղեքված մի ժողովրդի ինքնուրույնություն տվեցին: Լեհաստանը, Չեխոսլովակիան, ծայրամասային պետությունները ազատագրվեցին, Արաբիան ու Սիրիան բաժանվեցին Թուրքիայից: Նույնիսկ հրեաներն ստացան իրենց հայրենիքը:

Հ ա յ ե ր ի ն խ ա բ ե ց ի ն: Գերմանիան ոչինչ չարեց՝ բռնելու թուրք մարդասպանների ձեռքը: Անտանտը դրժեց բոլոր խոստումները, որ նա տվել էր ողջ մնացածներին: Ֆրիտյոֆ Լանսենը հայերին նվիրված իր հրաշալի գիրքը իրավամբ վերնագրում է «խաբված ժողովուրդ»:

Սևրի հաշտության պայմանագրով հայերին մի տերիտորիա տրվեց Կովկասում որպես հայրենի օջախ, որը պետք է գտնվեր Ազգերի լիգայի պաշտպանության ներքո: Նախագահ Ուիլսոնն իր միջնորդ դատարանի վճռով այնպես որոշեց ամբողջական Հայաստանի սահմանները, որ ժողովուրդն այնտեղ կարողանար հավաքել իր բեկորները և փոքրիկ, դեռևս 1918 թվականից գոյու-

թյուն ունեցող Հայաստանի Հանրապետության հետ միասին կարողանար սկսել խաղաղ կյանք:

Նոր դիկտատոր Քեմալ փաշան Թալեաթի և Էնվերի արժանավոր ժառանգորդն էր: Հենց որ իմացավ՝ 1915 թ. եղեռնագործության տերիտորիան պետք է տրվի կեղեքված ժողովրդի բեկորներին, նա Խորհրդային Ռուսաստանի հետ միասին հարձակվեց այդ երկրի վրա: Ժողովուրդը մնաց անտուն-անտեր՝ հալածանքներից նույնքան անպաշտպան, որքան համաշխարհային պատերազմի ժամանակ:

Խորանանկ Քեմալ փաշան, ի հեճուկս Անտանտի, հաջողեցրեց իր կամքն այնպես անցկացնել, որ իրար դեմ խաղարկեց մեծ տերությունների եռանդը: Նա կարողացավ մեջտեղ բերել ծանրակշիռ մի փաստարկ՝ տրամադրության տակ ունենալով Մոսուլի նավթահանքերը: Եվ ի սեր նավթի՝ հայերին խաբեցին իրենց ապագայի հարցում: Քեմալն այնքան ուժեղ էր, որ նույնիսկ 1922 թ. 1.5 միլիոնանոց ամբողջ հույն բնակչությանը բարբարոս հանգամանքներում դուրս շարտեց երկրից, պատռեց Սևրի հաշտության պայմանագիրը և 1923 թ. Լոզանում անցկացրեց մի դաշինք, որը նրան, իր կատարած բոլոր հրեշագործությունների դիմաց, համընդհանուր ներում մատուցեց:

### **Նավթը խիստ առանձնահատուկ «հյութ» է ...**

Ի՞նչ արեց Ազգերի լիգան: Նա իրար հետևից երեք անգամ միաձայն որոշում ընդունեց, որ «Բարձր խորհուրդը» պետք է մտահոգված լինի՝ «ապահովելու հայերի ապագան և ամենից առաջ հայերի համար երաշխավորելու ազգային հայրենիք»: Լոզանում այդ ամենն արդեն մոռացվել էր: Լորդ Քերզոնը հայերի այդ ճակատագիրն անվանեց «աշխարհի մեծագույն խայտառակություններից մեկը»: Թուրքերի համար դա նշանակություն չուներ: Նրանք մերժում էին ամեն մի պատրաստակամություն: Լոզանի պայմանագրում ոչ մի խոսք չկա հայերի հայրենիքի տարածքի մասին: Այդ կապակցությամբ Անտանտի մի ներկայացուցիչ նկատել է. «Շահագրգռված էին լուծումը թողնել թուրքերի բարեհաճությանը»: Հայաստանի համար դա նշանակում էր բոլոր հույսերի խորտակում: Եթե Ազգերի լիգան գեթ մի անգամ չի գործել, ապա միայն այս հարցում: Նույնիսկ ծախողվեց փոքրիկ, ռուսական տարածքում ընկած Հայաստանի Հանրապետության համար փոխառություն բաց թողնելու փորձը, որը պիտի դրամական միջոցներ բերեր՝ ժողովրդին հայրենիքի հետ կապելու և աշ-

խատանքային հնարավորություններ ստեղծելու համար:

Երբ 1924 թ. Մըքդոնալդը Անգլիայի վարչապետն էր, ընդդիմության ղեկավարներ Ասքուիթն ու Բալդուինը նրան մի սրտաշարժ նամակ գրեցին Մեծ Բրիտանիայի՝ հայերին օգնելու պարտականությունների մասին: Մըքդոնալդը տապալկեց, որից հետո չորս տարի կառավարում էր Բալդուինը: Նա՞ ինչ արեց հայերի համար: Ոչինչ:

1915 թ. թուրքերը հայերին ոչ միայն կոտորեցին, այլ նաև կողպտեցին: Թալանված առկա կարողության միայն արժեքը կազմում է մի քանի հարյուր միլիոն ոսկեմարկ: 1916 թ. թուրքերն այդ գողացված դրամից 100 միլիոն ոսկեմարկ ուղարկեցին Բեռլին՝ որպես ոսկու ավանդ՝ իրենց վալյուտայի համար: Ջինադադարի ժամանակ այդ գումարը բռնագրավվեց Անտանտի կողմից: Ինչո՞ւ այն չեն վերադարձնում թալանված ժողովրդին:

Ազգերի լիգան պարտավորեցնում է ազնվաբարո Նանսենին՝ ուսումնասիրություններ կատարելու նպատակով ճանապարհորդել Հայաստանով: Նանսենը մեկնում է մեծագույն դժկամությամբ, քանզի գնում է դատարկաձեռն՝ ստիպված լինելով սահմանափակվել միայն իր անձնական միջոցներով: Նա ստուգում է փոքրիկ Հայաստանի Հանրապետության կենսական պայմանները, քննում այն հնարավորությունները, որոնք կկարողանային աղքատ պետությանը հնարավորություն ընձեռել՝ ընդունելու աշխարհով մեկ թափառող բավական շատ փախստականների: Նանսենն առաջարկում է Ազգերի լիգային՝ վարկ տրամադրել:

Ի՞նչ է անում Ազգերի լիգան: Շթրեսեմանը գովում է Նանսենին նրա եռանդի համար: Չեմբեռլենը (Բալդուինի արտաքին գործոց նախարարը) արտասվելու աստիճան հուզվում է հայերի ծանր ճակատագրի համար, ... բայց ... նա հրահանգներ չունի և չի ուզում կեղծ հույսեր արթնացնել...

Նաև այն սրտաշարժ կոչը, որ բանաստեղծ Արմին Թ. Վեգները 1919 թ. հունվարին ուղղեց Ուիլսոնին, արդեն վաղուց հնչել մարել է:

Այսպիսին են նրանք՝ այն պարոնները, որոնք իրենց ակումբը Ազգերի լիգան են անվանում: Եթե մեծ հարցերում (զինաթափում) նման ակնառու բաներ են անում, ապա ժամանակ չեն ունենում լուծելու փոքրիկ հիմնահարցերը: Իսկ փոքր մի ժողովրդի ապրելը կամ մեռնելը դատարկ բան է, եթե այդ ժողովուրդը հիմարություն է թույլ տվել, որ չի ունեցել ոսկե ականներ և նավթահանքեր:

Նանսենն իր «Խաբված ժողովուրդ» գրքում ասում է.

«Լսե՛ք, քաղաքագետներ, և Դու՛ք, պետական գործիչներ, չէ՞ որ Դու՛ք կարող էիք դադարեցնել պոռոտախոսությունները՝ փոխանակ մարդկանցից խլելու իրենց հավատի վերջին կայծը, որը, չնայած ամեն ինչին, սրբազան բան է՝ կապված յուրաքանչյուր ժողովրդի պատմության հետ ...»:

Հ ա վ ե լ վ ա ծ

## ՀԱՅԵՐԻ ԶԱՐԴԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԱԼԵԱԹԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ՝ ՈՒՂՂԱԾ ՀԱԼԵՊԻ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹՅԱՆԸ

*3-ը սեպտեմբերի, 1915 թ.*

Հանձնարարում ենք Ձեզ՝ ինչպես կանանց, այնպես էլ երեխաներին ենթարկել այն հրամաններին, որոնք Ձեզ գրավոր կարգադրվել են հայտնի անձանց տղամարդկանց նկատմամբ: Իսկ այդ հանձնարարության համար կարգեցեք վստահելի պաշտոնյաներ:

Ներքին գործոց նախարար՝ Թալեաթ

*15-ը սեպտեմբերի, 1915 թ.*

Արդեն հաղորդվել է, որ կառավարությունը ջեմիեթի (կոմիտեի) հրամանով որոշել է լրիվ բնաջնջել թուրքիայում ապրող բոլոր հայերին: Այս հրամանին և որոշմանը ընդդիմացողները կզրկվեն իրենց քաղաքացիությունից: Առանց հաշվի առնելու՝ կին են, երեխա թե հիվանդ, առանց խղճի զգացումներին ունկնդիր լինելու, որքան էլ ողբերգական լինեն բնաջնջման միջոցները, պետք է վերջ տալ նրանց գոյությանը:

Ներքին գործոց նախարար՝ Թալեաթ

*23-ը նոյեմբերի, 1915 թ.*

Գաղտնի միջոցներով ոչնչացրե՛ք արևելյան գավառների ամեն մի հայի, ում պարտավոր էիք հայտնաբերել Ձեր տարածքում:

Ներքին գործոց նախարար՝ Թալեաթ

*1-ը դեկտեմբերի, 1915 թ.*

Թեև պետք էր բացառիկ եռանդ ցուցաբերել անվստահելի անձանց բնաջնջելու համար, սակայն տեղեկանում ենք, որ նրանք ուղարկվում են կասկած հարուցող վայրեր, ինչպես Սիրիա, Երուսաղեմ: Նման ներողամտությունն աններելի սխալ է: Նրանց տիպի խռովարարների աքսորվայրն է **անևությունը**: Հանձնարարում են գործել ըստ այդմ:

Ներքին գործոց նախարար՝ Թալեաթ

*11-ը դեկտեմբերի, 1915 թ.*

Տեղեկանում ենք, որ հայկական թերթերի որոշ թղթակիցներ, ովքեր կանգ են առել Ձեզ մոտ, ձեռք են բերել եղերական դեպքեր ներկայացնող լուսանկարներ ու փաստաթղթեր և դրանք վճարատահել են Ձեր տեղի ամերիկյան հյուպատոսին: Ձերբակալել ու վերացնել տվեք այդ կարգի վտանգավոր անձանց:

Ներքին գործոց նախարար՝ Թալեաթ

*12-ը դեկտեմբերի, 1915 թ.*

Ընդունեցեք ու ապաստան տվեք միայն այն որբերին, ովքեր չեն կարողանա հիշել այն սարսափները, որոնց ենթարկվել են իրենց ծնողները: Մյուսներին քշեցե՛ք քարավանների հետ:

Ներքին գործոց նախարար՝ Թալեաթ

*15-ը հունվարի, 1916 թ.*

Տեղեկանում ենք, որ որոշակի վայրերում բացված որբանոցներն ընդունում են նաև հայտնի անձանց երեխաներին: Քանի որ կառավարությունը վնասակար է համարում նրանց գոյությունը, ապա կերակրել այդ երեխաներին ու երկարացնել նրանց կյանքը, ինչպես նաև կարեկցել նրանց, երևի թե չըմբռնելով իրական նպատակը կամ էլ արհամարհելով այն, նշանակում է գործել կառավարության բաղձանքին հակառակ: Հանձնարարում են՝ նման երեխաներին թույլ չտալ մոտենալու որբանոցներին և չձեռնարկել նրանց համար հատուկ որբանոցների հիմնումը:

Ներքին գործոց նախարար՝ Թալեաթ

*7-ը մարտի, 1916 թ.*

Ուզանկան նախարարության հրամանով թիկունքի գորախմբերի հավաքած և սնուցած հայտնի անձանց երեխաներին, տեղահանության կառավարչության կողմից նրանց սնուցանելու պատրվակով, առանց կասկած հարուցելու, պետք է en masse\* չտապ հավաքել ու ոչնչացնել: Սպասում ենք հաղորդագրության:

Ներքին գործոց նախարար՝ Թալեաթ

\* Ֆրանսերեն՝ համախումբ, զանգվածաբար:

**ՀԵՆՐԻԹ ԴՈՆԱԹ**

**ՀԱՅՎԱԿԱՆ ՋԱՐԴԵՐԻ ԱՐՏԱՑՈՒՄԸ ԳԵՐԱՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽԱՂԱՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԱՎԿԻՑՆԵՐԻ ԸՆԴՄԱՆ ՀԱՅԵԼՈՒ ՄԵՋ (1895-1933 ԹԹ.)- ԸՆԴԱՐՁԱԿ ՎԵՐՋԱԲԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆԸ 1915-ԻՆ» ԳՐԹԻ ԵՐՐՈՐԴ ԴՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**

Սույն հրատարակությունը, որն առաջին անգամ լույս է տեսել 1930 թ. Վալթեր Համերի պացիֆիստական-հանրապետական «Fackelreiter - Verlag»-ում («Ձահակիր ասպետը» հրատարակչություն), առնչվում է համաշխարհային պատմությանը մինչև այժմ հայտնի «մեծածավալ կազմակերպված ոճիրի» հետ (Փ. Ռորբախ): Ամենից առաջ Վայմարի խաղաղության կողմնակիցների շարժման մեջ իրենց ճանաչումը գտան Հայնրիխ Ֆիրբյուխտերի հավաստի և անկողմնակալ շարադրանքները<sup>1</sup>: «Rhein-Mainische-Volkszeitung»-ը («Հռենոս-Մայնի ազգային թերթ») կազմավորված պացիֆիզմի կաթոլիկ թևի լրագիրը, մի առաջնորդող հողված հատկացրեց այս ստեղծագործությանը<sup>2</sup>: Միջազգային իրավունքի աշխարհահամբավ դասախոս Հանս Վեբերը խաղաղության կողմնակիցների շարժման գիտական ամսագրում «Friedens-Warte»-ում, արտատպեց գրքի «Սատանայի

<sup>1</sup> Հմմտ. թերևս Հ. Վեբերգի գրախոսականը «Friedens-Warte»-ում («խաղաղության դիտակետ»), հրատ. XXX տարի, հուլիս-օգոստոս 1930 թ., էջ 255: Սույն գրքի կազմի դարձերեսի մեջբերումը վերցված է այդ գրախոսությունից: «Ստաբերեք Հայաստանը»- այսպես է հնչում Օթո Ռայնենմանի գրախոսականը պատերազմի հակառակորդների միության «Die Friedensfront» («խաղաղության ճակատ») կեսամսյա պարբերականում, հրատ. 2-րդ տարի, թիվ 13, էջ 3-4, 1-ը հուլիսի 1930 թ.: Վեր է հանվում «Վիլհելմ II-ի և նրա կապիտալիստ խորհրդատուների (Գերմանական բանկ) Բաղդադի երկաթուղուն առնչվող մեծամուլ քաղաքականության սեղմ, արտակարգ ուսանելի նկարագրությունը, քաղաքականություն, որը խանդավառ պաշտպանություն էր գտնում ոչ միայն պանգերմանականների, այլ նաև «դեմոկրատների» մոտ (Նաուման, Ռորբախ, Յեթ)»:

<sup>2</sup> Սևերինուս, «Համաշխարհային պատմության մեջ խոշորագույն հալածանքը քրիստոնյաների նկատմամբ» տպագրված «Rhein-Mainische-Volkszeitung»-ում, հրատ. 60-րդ տարի, թիվ 105, 6-ը մայիսի 1930 թ. (հանրային հրատարակություն): «Գրքի քննարկում» խորագրի տակ այդ հողվածից մի քաղվածք է լույս տեսել «Das Andere Deutschland»-ում («Մյուս Գերմանիան»), հրատ. 10-րդ տարի, թիվ 20, էջ 7, 17-ը մայիսի 1930 թ.:

կիրճը» գլուխը<sup>3</sup>: Գերմանիայի խաղաղության կողմնակիցների ընկերության (ԳԽԿԸ) հյուսիս-գերմանական մի տեղական խմբի ընդհանուր ժողովում «Հայաստանը 1915-ին» գրքից մի քանի հատվածների բարձրաձայն ընթերցումը «խորին կարեկցանք արթնացրեց մեր երբեմնի սիրելի դաշնակից թուրքերի կողմից բնաջնջման ենթարկված հայ ժողովրդի հանդեպ»<sup>4</sup>:

Աթազնել է հայերին հետևողականորեն բնաջնջելու հիշողությունը: Երկրորդ համաշխարհային պատերազմը, հրեաների զանգվածային ոչնչացումը, 1945 թ. հետո եղած բազմաթիվ ռազմական բախումները, ինչպես նաև Ծովախորշի համար մղվող պատերազմի մինչև մեր օրերը հասնող ռուբերն ավելի թարմ են մեզ համար: Այնուհանդերձ հնարավոր է հեշտությամբ որոնել-գտնել այն հետքերը, որոնք թողել են հայերի նկատմամբ կատարված ոճիրները: Ամենամուխ է ցեղասպանության ժխտումը թուրքական իշխանությունների կողմից, որոնք ի սկզբանե մեղավոր են հայտարարել զոհերին<sup>5</sup>: Այսպես կոչված «Հայ հեղափո-

3 Լույս է տեսել «Հայ ժողովրդի բնաջնջման մասին» վերտառությամբ «Friedens-Warte»-ում, հրատ. XXX տարի, հուլիս-օգոստոս 1930 թ., էջ 205 և հաջորդ էջերը:

4 Սիլեզյան Հոլշթայնի Հայդե քաղաքի ԳԽԿԸ տեղական խմբի 1930 թ. մայիսի 24-ին կայացած ժողովի մասին հաղորդագրությունը «Deutsche Zukunft»-ում («Գերմանացիների ապագան») օրգան ԳԽԿԸ Հյուսիս-գերմանական բանվորական համայնքի, հրատ. 7-րդ տարի, թիվ 11, էջ 4, 1-ը հունիսի 1930 թ.:

5 Ղրա համար հմմտ.: Քարլ Փալինգեր, «Ուրացված ցեղասպանությունը: Հայկական ահաբեկչության կուլիսների հետևում»՝ տպագրված «Zukunft»-ում («Ապագա») քաղաքականության, տնտեսության և մշակույթի սոցիալիստական ամսագիր (Վիեննա), 1984 թ. նոյեմբերյան պրակ, էջ 37-41: Սոցիալիստական կրթության բնագավառի գործիչ և Փոթենդորֆի քաղաքագլուխ Փալինգերը գրում է. «Թուրքական ոչ մի իշխանություն երբեք չի ընդունել 1915-1917 թթ. ցեղասպանությունը որպես պատական հանցանք: Կտրուկ ժխտումից, մեղքը զցելով անհատ անձանց, օրինակ՝ Թալեթթ բեյի վրա, ուրացումի խաղացանկը հասնում է մինչև պատմության ակնհայտ կեղծումը: Հակառակ գերմանացի պառլամենտականների, էսփիթը ևս պնդում է, որ թուրքական զինված պահակախմբերի անձնակազմերը չէին բավարարի տեղահանված հայերին «պաշտպանելու տեղացի ջուրղ ցեղախմբերի և թուրք գյուղացիների հարձակումներից» (Թ. Հոֆման): Այդ հարցում թուրքական իշխանությունների նրբանկատությունը զուտ տեղային է, բայց այն միանգամայն համապատասխանում է այն պետությունների դիրքորոշմանը, որոնց երկկողմանի շահերի հարցում թուրքիան կարևոր քաղաքական և ռազմական պարտնյոր է: Հայկական հարցում թուրքիայի նկատմամբ եղած յուրաքանչյուր անպատվությունից խուսափելու անթիվ օրինակներ են բերվել ... Որտեղ և երբ ի հայտ է գալիս հայերի հետ կապված «ցեղասպանություն» բառը, թուրք դեսպանները հետ են կանչվում Անկարա՝ կոնսուլտացիաների,

խական բանակի» ահաբեկչական գործողությունները դրանում ոչինչ չեն փոխի: Ընդհակառակը: Նրանց «հրամանատարական ձեռնարկումները» հնարավորին չափ վատ ծառայություն են մատուցում ճշմարտությունն ընկալելու ջանքերին: Նրանք ջուր են լցնում արհեստականորեն մշակված այն պրոպագանդայի ջրաղացին, ինչին վաղուց և անմնացորդ նվիրված է թուրք ժողովուրդը: Իսկ այդ պրոպագանդան կատարելագործված ձևով արդյունք է տալիս արևմտյան դեմոկրատիաներում<sup>6</sup>:

Թուրք պատգամավորները բողոքում են ՄԱԿ-ի հանձնաժողովներին և միշտ էլ հասնում են ցանկալի հերքումների: Սատուցվում են արդարացումներ, կասկածելի տպագիր հատվածներ են բացեիքաց համվում պաշտոնական մեկնություններից: Թուրքիան կարևոր պարտնյոր է ՆԱՏՕ-ի դաշինքում. անցանկալի են այդ դաշինքը խախտող խճճումները: Հայերը դա երբեք չեն հասկանա ինչպես էլ որ լինի՝ Չէ՛ որ նրանց համար անխուսափելի է իրենց ժողովրդի ճակատագրի համեմատությունը 1945-ից հետո եղած անցյալի հաղթահարման հետ: Միջազգային դատական ատյանները դատապարտեցին նացիստների կատարած ոճիրների պատասխանատուներին սկսած մարշալից ու նախարարից, վերջացրած տեսական խմբերի ղեկավարներով: Եվրոպական դատարանները մինչև օրս էլ դատավճիռ են կայացնում նացիստական ժամանակներում մարդկության դեմ գործած ոճիրների առնչությամբ. նյութական հատուցումը խարխիս է գցել միջազգային իրավունքի մեջ: Անցիտնալ-սոցիալիստների ժամանակ և հրեաների հալածանքը մեկնաբանող գրականության լեցուն են գրադարանները... Եվ մացիոնալ-սոցիալիստական ողջակիզման վերջում հառնեց Իսրայել պետությունը: Հայերի համար ավելորդ են համեմատությունները անցյալի հաղթահարման հետ: Հաղթահարումը չկա կամ չկա հենց միայն քրեական ծածկանտության այն ոլորտում, որտեղ ահաբեկչության պատմական մեղքի դիմաց: Այս տարվա օգոստոսին Լոզանում տեղի ունեցավ Հայկական միջազգային կոնգրեսը: Վերաբարձրվեց արևմտահայկական վաղեմի հայրենիքի հայքը, խստորեն դատապարտվեցին ԱՄՆԱ-ի (Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի) ահաբեկչական մեթոդները: Հայ գաղտնի բանակն անտարակույս չնչին ուշադրություն կդարձնի դրա վրա, և ահաբեկչությունը կշարունակվի»:

6 Թե ինչպես է Ֆեդերատիվ Հանրապետությունում արգելք հարուցվում հայերի ճակատագրի լուսաբանմանը, 1985 թ. ապրիլին բացահայտեց Բրեմենում կայացած «Ցեղասպանություն և ողջակիզում կոնֆերանս հայերի ու թուրքիայում ապրող արևելյան մյուս քրիստոնյաների եղեռնի 70-րդ տարելիցի առթիվ» համաժողովը: Թուրքիայից և Արտաքին գործոց նախարարության կողմից կազմակերպված ինտերվենցիաները Բրեմենի Գիտությունների սենատորին դրդեցին «բռնագրավել» «Երկրի քաղաքական կրթության կենտրոնի» կողմից հրապարակված մի հոդված, իսկ երկրի կենտրոնական վարչության ղեկավարին արգելել մասնակցելու մամուլի ասուլիսներին, թեև նա ասուլիսի կազմակերպիչներից մեկն էր: Գործողությունների հանդեպ մամուլի արձագանքը, ինչպես նաև պարագայի մեկնաբանումը «Bremscher Burgerschaft»-ում («Բրեմենցիները») արժանապատիվ է իմ կազմած բրոշյուրում «Հայերը ըստ գերմանացիների»: «Ցեղա-

Հայնրիխ Ֆիրբյուխերն, անկասկած, բռնության և ահաբեկչության հակառակորդ է: Առաջին համաշխարհային պատերազմից հետո նա աշխատում էր որպես Բեռլինի «Ճառայողների կենտրոնական միության» քարտուղար, հռետոր էր և արհմիութենական գործիչ: 1922 թ. գարնանը նա տեղափոխվեց Ռուրի ավազան: Էստենուն նա առաջին անգամ շփվեց ԳԽԿԸ-ի հետ, որը նրան մինչ այդ էլ ներկայանում էր որպես «ուսյալ ու բարեկիրթ» ակումբ<sup>7</sup>: 1923 թ. հունվարին էստենի ազատ արհմիությունների գործիչների առաջ Հարրի կոնս Բեսլերի արտասանած ճառից հետո Ֆիրբյուխերը վճռեց ակտիվորեն համագործակցել խաղաղության կողմնակիցների շարժմանը:

«Ruhrkampf»-ում («Ռուրի պայքարը», 1923 թ.) նա հարում էր արհմիութենականների այն փոքրամասնությանը, ովքեր Հռենոս - Վեստֆալենի արդյունաբերական մարզում պացիֆիստների նման մերժում էին «պասիվ դիմադրությունը», որը նրանք ընկալում էին որպես շեղում իրագործվող քաղաքականությունից և գերմանա-ֆրանսիական փոխըմբռնումից: Նրանք կանխագուշակում էին արդյունաբերական հզոր շրջանների կողմից սարքված «Ռուրի արկածախնդրության» սոցիալական և քաղաքական հետևանքները՝ փողի անօրինակ արժեզրկումը, ժողովրդական լայն խավերի սաստիկ թշվառացումը՝ ի նպաստ ծանր արդյունաբերության, ռևանշիստական ոգու և միլիտարիստական-նացիոնալիստական բլոկի հզորացման - և հենց սկզբից պահանջում էին Կունոյի կառավարության հրաժարականը<sup>8</sup>:

սպանություն և ողբակիզում» բրեմենյան կոնֆերանսի փաստագրություն (19-24-ը ապրիլի 1985 թ.), Բրեմեն, 1985 թ.: - Թե ինչպիսի ճնշում գործադրվեց խափանելու 1986 թ. ապրիլի 21-ին հեռարձակված Ռալֆ Ջորդանոյի հեռուստաֆիլմը, նկարագրում է Համբուրգի Հայկական մշակութային ընկերության կողմից հրատարակված բրոշյուրը՝ «Հայերի ցեղասպանությունը: Համդիսավոր երեկո» նվիրված Ռ. Ջորդանոյին, 1986 թ. հոկտեմբերի 4-ին, Համբուրգում: Հավելվածում Ռ. Ջորդանոյի Արևմտագերմանական հեռուստատեսության փաստագրության վերաբերյալ տեքստն է՝ «Հայկական հարցն այլևս գոյություն չունի: Ժողովրդի ողբերգությունը» (ARD-ԳՌՀ = Գերմանական ռադիո-հիմնարկների համագործակցություն, 21-ը ապրիլի 1986 թ.): Երկու գործերն էլ լույս են տեսել Դոնաթ և Թեմեն հրատարակչությունում:

7 Հմմտ. Հ. Ֆիրբյուխեր, «Մեր ուղին»՝ «Das Andere Deutschland»-ում, հրատ. 11-րդ տարի, թիվ 31, 1-ը օգոստոսի, 1931 թ.:

8 Հմմտ. Հ. Դոնաթ, Լ. Վիլանդ (հրատարակիչներ), «Das Andere Deutschland»՝ անկախ լրագիր համուն հանրապետական վճռական քաղաքականության: Ընտրանի (1925-1933 թթ.), Ի. Քյուսթերի նախաբանով, Յոնիհիշթայն (Թաունուս, Սաքսոնիա, 1980 թ., էջ XXX և հաջորդ էջերը):- 1923

Քաղաքական տարակարծության պատճառով Ֆիրբյուխերը հրաժարվեց իր արհմիութենական պաշտոնից: 1924 թ. գարնանը, երբ արդեն ծանոթացել էր Ֆրից Քյուսթերի հետ, միացավ ԳԽԿԸ-ի արևմտագերմանական հոսանքին, որի նպատակների համար նա ծավալեց հանրաժողովային անխոնջ գործունեություն<sup>9</sup>: Մի քանի տարում նա դարձավ հետպատերազմյան շրջանի գերմանական պացիֆիզմի ամենահայտնի և ամենանշանավոր ազիտատորներից մեկը: Հաճախ բավական էր հայտարարել նրա անունը, և հազարավորները կշարժվեին մասնակցելու նրա հանրահավաքներին: Նրա համոզելու կարողությունն զգալիորեն նպաստեց այն բանին, որ ԳԽԿԸ-ն իր համար առաջին անգամ հաստատուն տեղ նվաճեց Հռենոս-Վեստֆալենի արդյունաբերական մարզում, և Քյուսթերի կողմից ստեղծված ԳԽԿԸ-ի «Արևմտագերմանական երկրի միությունը» դարձավ Վայմարի խաղաղության կողմնակիցների շարժման առաջնակարգ գործունը:

Անթիվ հանրաժողովների համար կատարվող ուղևորությունների կողքին, որոնք տանում էին նրան ողջ Գերմանիայի բոլոր ուղղություններով, ինչպես նաև ռևանշիստական ոգու միջնաբերդը, Ֆիրբյուխերը համարվում էր «Das Andere Deutschland»-ի, «Menschheit»-ի («Մարդկություն»), «Friedens-Warte»-ի և «Welt am Montag»-ի («Աշխարհը երկուշաբթի օրը») աշխատակիցներից մեկը<sup>10</sup>: «Բնածին ժողովրդական հռետորին» (Ֆ. Քյուսթեր) հաջողվեց նախածեռնել ԳԽԿԸ-ի տեղական խմբերի հիմնումը, բազմաթիվ մարդկանց հավաքագրել խաղաղության

թ. սեպտեմբերի վերջին դադարեցրին «պասիվ դիմադրությունը»: «Դրանից կարճ ժամանակ առաջ, հաղորդում է Ֆիրբյուխերը, - Գելգենքիրխենում ինձ իջեցրին բեմահարթակից, քանզի ես էլույթ էի ունեցել ծերուկ Լեդերուրի դեմ, որն իրեն ներդրել էր համուն Ռուրի պայքարի շարունակության, քանի որ դա իբր «համաշխարհային հեղափոխության» մի փուլն էր: Ես վերադարձա Բեռլին և ստանձնեցի առևտրական մի պաշտոն, որտեղ ես, համենայն դեպս, դափնիներ չվաստակեցի»: Փաստարկումը տես ծանոթ. 7:

9 Հմմտ. Ֆ. Զ. (Ֆ. Քյուսթեր), «Մեր պայքարի ժամանակներից: Հայնրիխ Ֆիրբյուխեր» տպագրված «Das Andere Deutschland»-ում, թիվ 6, 1960 թ., էջ 8, մարտի վերջ, 1960 թ.:

10 Թվարկված թերթերի բնութագրության համար հմմտ. հրատարակիչներ Հ. Դոնաթ և Զ. Հոլլի գրառումները՝ տպագրված «Die Friedensbewegung»-ում («Խաղաղության կողմնակիցների շարժումը») «Կազմակերպված պացիֆիզմը Գերմանիայում, Ավստրիայում և Շվեյցարիայում», նախաբանը դ. Լաքմանի, Դյուսելդորֆ, 1983 թ.: Նույնը վերաբերում է վերջաբանում և Կառնթագրություններում հիշատակված անձանց մեծ մասին և խաղաղության կողմնակիցների շարժման մյուս հրատարակչական օրգաններին:

կողմնակիցների շարժման աշխատանքի համար և ԳԽԿԸ-ի համակերպվող անդամների թուլացող ակտիվությունը վերափոխել լարված պայքարի: Ֆիրբյուխերի աստվածատուր ազդեցության ուժը ընդգծվում էր նրա բարձրահասակ, ատլետիկ կերպարանքով, որը թաքցնում էր նրա նրբազգաց բնավորությունը<sup>11</sup>: Իր հանրաժողովներում, հաճախակի ենթարկվելով միջոցառումը տապալել փորձող նացիոնալիստական խմբերի սպառնալիքներին, նա ռեալիստորեն էր գնահատում գերմանացի ժողովրդի լայն խավերի տրամադրվածությունը: Առավել անզիջում էր նա շովինիստական «Մյունխենի Գերմանիայից» բխող վտանգների նկատմամբ՝ հանուն համաշխարհային խաղաղության և Վայմարի Հանրապետության պաշտպանության: Նա պահանջում էր ստեղծել հանրապետական-պացիֆիստական պաշտպանության ճակատ ընդդեմ «կեռ խաչի և պողպատյա սաղավարտի»<sup>12</sup>: Միաժամանակ

11 Հ. Ֆիրբյուխերի մասին տրված տեղեկությունների համար ես երախտապարտ եմ Հայնց Քրաշուցկուն (հանգուցյալ), Ինգեբորգ Քյուսթերին (Վուլփերթալ), Շարլոթե Լեոնարդին (Լյուբեք) և Լյուդվիգ Վոլֆին (Ելինգեն): Լ. Վոլֆն ուշագրավ բան է գրում Ֆիրբյուխերի մասին. «Առանց չափազանցության, իմ ըմբռնումներով, նա վայմարյան շրջանի լավագույն հոետորն էր: Նրան չէր կարող հասնել այն ժամանակվա «թղանոթներից» և ոչ մեկը սկսած Յոզեֆ Վիրթից, Շթրետեմանից, Քուրթուսից, Վեսթարփից, Բրայքշայդից, Քրիստիենից, Թորպերից, վերջացրած Սայդլիցով: Ինքնուս, անհավանական թվացող կարողացած և ամեն ինչը նաև չափած-ձևած, անչափ շնորհալի, զարմանալի դատողությամբ... Հստակ մտքով ու նույնատիպ խոսքով հենց ամբիոնից գրավում էր բոլորին: Ես նրան երբեք չեմ տեսել ելույթի տեքստով, նա օգտվում էր խոսքի առատության եղջյուրից: Դեռ վաղ հասակից ես աչք էի ածում բոլոր հոետորների կոնսպեկտների վրա, այսինքն ուշադրություն էի դարձնում նյութի մատուցման վրա՝ երանգավորմանը հավասար: Ֆիրբյուխերի մոտ խոսքը կառուցվում էր ներդրման ուղղությամբ: Խոսքի եզրակակիչ մասում դառնում էր դրոշմը: Դեռ երբ որ այդ ձևով վարված լինեք ճարտասան Դանտոնը. Լամարթինի նկարագրությունը ճիշտ և ճիշտ համընկնում է Ֆիրբյուխերին: Նաև արտաբնական պատկառանք մերշնչող երևույթ. պարթև, հաղթանդամ, առյուծաբաշ: Նրա հայացքը կարծես տեսնում էր յուրաքանչյուրին: Եվ ի՞նչ ծայր ուներ... Կարճ ասած՝ ժողովրդական տրիբուն», գրում է Լ. Վոլֆը Հ. Դոնաթին 1985 թ. փետրվարի 5-ին:

12 Առնչվում է հակաֆաշիստական դիմադրության հետ, որն առաջին անգամ Գերմանիայում 1924 թ. գարնանը կազմակերպեց ԳԽԿԸ-ի «Արևմտա-գերմանական երկրամասի միությունը» Քյուսթերի ու Ֆիրբյուխերի հոետորությամբ և արդեն 1929 թ. աշնանը վերսկսեց իր գործունեությունը, հիմն. «Das Andere Deutschland»-ը հանուն ճշմարտության, իրավունքի, ազատության ու համաշխարհային խաղաղության» ներածականը տպագրված Հ. Դոնաթի և Լ. Վիլհանի (իրատարակիչներ) «Das Andere Deutschland» (1925-1933) հանդեսում, նույն տեղում, էջ XXX-XXXIV և էջ XLVI-LVII, 1924 թ. ճառերի բախումների կապակցությամբ Ֆիրբյուխերն այլոց թվում իր արդեն հիշատակ-

մանակ նա չէր թաքցնում այն զիջումները, որ կատարում էին բանվորական կուսակցությունները ռազմական ոգուն: Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության պաշտպանության քաղաքականությունը քննադատելու պատճառով Ֆիրբյուխեր Օթո Յյորգինը հանրապետության պաշտպանության միության ֆեդերալ նախագահը, արգելեց, որ Ֆիրբյուխերը շարունակի իր գործունեությունը որպես «Schwarz - Rot - Gold» («Սև - կարմիր - ոսկեգույն») մարտական կազմակերպության ճառախոս (1928 թ.):

ԳԽԿԸ-ի օգտին կատարած իր հանրաժողովային ուղերթների կողքին նա 1930/1931 թթ. աշխատում էր որպես նորաստեղծ «Ռադիկալ-դեմոկրատական կուսակցության» ճառախոս, 1931/32 թթ. նա, որպես գլխավոր խմբագիր, իր ծառայությունները մատուցեց հակաֆաշիստական «Alarm» («Տագնապ») շաբաթաթերթին «հանրապետության բոլոր թշնամիների դեմ պայքարող մարտական թերթին»<sup>13</sup>: Նացիոնալ-սոցիալիզմի ռեժիմի հետապնդումներից Ֆիրբյուխերը փորձեց խույս տալ վտարանդիությանը: 1933 թ. մարտի սկզբին նա Վ. Համերի հետ հանդիպեց իրենց հետ մտերմացած «Kleiner Bärenstein» իջևանատան տիրոջ պանդոկում՝ Փիրնա քաղաքից ոչ հեռու<sup>14</sup>: Նրանք նախ ու-

ված «Մեր ուղին» հողվածում 1931 թ. օգոստոսին գրում է. «Ամեն դիսկի դիմեցինք ու շատ բան շահեցինք: Ես ի նկատի ունեմ այն մեծ հարվածը, որ մենք 1924 թ. հունիսին հասցրինք «Գերմանական օրվան» Ձիգենում: Դրանք մահակի հարվածներ էին պատերազմի այն հրժիգներին, որոնք այն ժամանակ ձևավորվում էին Լուդևիգորֆի մոտերքում: Եթե այն հազարավորները, ովքեր ցնծությամբ ողջունում էին մեզ, հենց տեղից մեզ հետ միասին պայքարեին, եթե հարյուրհազարավորները, ովքեր այն ժամանակից ի վեր ամենուր ոգևորված էին, տղամարդ լինեին, Գերմանիայում վիճակն այսօր ավելի լավ կլիներ»:

13 Ֆիրբյուխերի գլխավորությամբ հրատարակվող թերթի աշխատակիցների շարքին այլոց թվում դասվում էին Օթո Բրաունը, Ադոլֆ Դամաշթեն, Արթուր Քրիստիենը, Հելմուտ Ֆոն Գերլախը, Էռնսթ Լենդեր, Օթո Լենան-Ռուսթյուլթը, Լյուդվիգ Վիլհանի արքայազն Հուբերթուսը, Հայնրիխ Մանը, Լյուդվիգ Քվիդդեն, Ֆիլիպ Շայդեմանը, Թոնի Չենդերը, Քարլ Սևերինգը և Օսթբար Շթիլիլը: Բազմաթիվ առաջնորդող հողվածների կողքին Ֆիրբյուխերն այլոց թվում հրատարակեց «Հայն պատերազմի գոհ» հողվածը «Alarm»-ում, իրատ. 4-րդ տարի, թիվ 18, էջ 6, 5-ը մայիսի 1932 թ.: Դոնաթ և Թեմեն հրատարակչությունը նախապատրաստում է հողվածների մի հատընտիր վերցրած հակաֆաշիստական պայքարի «Alarm» թերթից:

14 Շարադրանքը հենվում է Վալթեր Համերի 1956 թ. օգոստոսի 12-ին հրատարակած «Ճշմարտացի մեկնաբանության» վրա: Հ. Ֆիրբյուխերի դուստրն ինձ համար հասանելի դարձրեց ինչ-որ մի պատճեն: Իմ առանձնահատուկ երախտիցը տիկին Սալոմեա Ֆիրբյուխերին՝ իր հոր կյանքի ու ճակատագրի մասին տեղեկություն տալու պատրաստականության համար: Հիմն. նաև Ա. Բենգել, «Հայնրիխ Ֆիրբյուխեր» տպագրված «Das Andere Deutschland»-ում, թիվ 10/1960, էջ 8, մայիսի վերջ, 1960 թ.:

զուսմ էին կարևոր փաստաթղթեր: թաքցնել իջևանատանը կպած քարայրներում և հնարավորության դեպքում մանրագնին աչքի անցկացնել, ապա սահմանն անցնելով՝ տանել Պրագա՝ ապահով տեղ: Բայց արդեն Շթրուփեն գյուղի կայարան հասնելուն պես ճամպուկներով բեռնավորված օտարականները գրավեցին կայարանապետի ուշադրությունը: Վերջինս զեկուցեց նացիստական գրոհային ջոկատին: Հազիվ երեք օր էր, որ տեղավորվել էին հյուրանոցում, երբ երեսուն - քառասուն գրոհայիններ վրա տվեցին, տակնուվրա արեցին ամբողջ շենքը և կալանեցին Ֆիրբյուխերին ու Համերին: Նրանք բերեցին Շթրուփենի մի կալվածատուն, որտեղ նրանք տանջեցին և մի նեղ սենյակում, մյուս ձերբակալվածների հետ, լցրին իրար վրա: Ավելի ուշ տարան Փիրնայի նացիստական գրոհային ջոկատների զորանոցը: Դրեզդենի ոստիկանական նախագահությունում նախնական կալանքի բանտից նրանք եկան այսպես կոչված «Մաթիլդայի դղյակը»՝ մի հին, արդեն վաղուց լքված մի բանտ, որտեղ Համերն ու Ֆիրբյուխերը կիսեցին նույն խցիկը: Ռայխսարեզիդենտ Հինդենբուրգին Ֆիրբյուխերի կնոջ տված դիմումով ամուսնուն ազատ արձակեցին և թույլատրեցին գնալ Բեռլին<sup>15</sup>:

Իր ընտանիքի ապրուստը հոգալու նպատակով (1921 թ. ապրիլից նա ամուսնացած էր պացիֆիստ Օթո Լեման-Ռուսբյուլդի քույրերից մեկի հետ և ուներ մի աղջիկ) նա դեռևս 1933 թ. բաց էր արել մի առաքող գրախանութ՝ համագործակցելով մի հնավաճառ խանութի հետ: Բայց նացիստները նրան հանգիստ չէին թողնում: Մինչև 1936 թ. հազվադեպ երևույթ չէին տնային խուզարկությունները՝ սկզբում շաբաթը չորս անգամ: Շաբաթը մի անգամ նա պարտավոր էր ներկայանալ ոստիկանություն: Բրյուքենալեն փողոցում գտնվող նրա բնակարանը երեք տարի շարունակ իրսկողության տակ էր պահվում: Կասկածելի երևույթների մասին

15 Ֆիրբյուխերի կինը քսանական թվականներին Բեռլինում կազմակերպում էր «հրավիրովի երեկոյթներ» կինոյի, բեմի և գրականության մեծերի համար»: Նրանցից այդ ընտանիքի մտերիմների շրջանի մեջ էին դասվում նաև այնպիսի անհատականություններ, ինչպիսիք են Մարթա Էգեթը, Յան Զիփուրան և ռեժիսոր Ռոլֆ Գուբլը: Ֆիրբյուխերն անձամբ մտերմություն էր անում Էռնսթ Ֆրիդրիխի և Էրիկ Մյուլհազմի հետ: Տեղեկությունը տիկին Ս. Ֆիրբյուխերի (Հերնե), 25-ը հոկտեմբերի 1986 թ.: - Հմմտ. նաև «Կյանք» համուն արվեստի: Պատերազմի և փախուստի խճճվածության բովոլ անցնելով՝ բեռլինցի կինը փրկում է «Ասպետի ուրվագիծը»՝ հողվածը տպագրված «Ruhr - Nachrichten»- ում («Ռուրյան լուրեր») (Դորթմունդ), 3-ը հունվարի 1963 թ.:

պետք է զեկուցեր նացիստների կողմից հատուկ հանձնարարություն ստացած շենքի պարետը: Այնուհանդերձ, չհաջողվեց բացահայտել Ֆիրբյուխերի ընդհատակյա գործունեությունը: Հակառակ գրելու և էլույթ ունենալու արգելքին, որը նրա վրա էր դրվել 1933-ին, նա մոտավորապես 1934 թվականից մինչև 1938-ի վերջը պարբերաբար հողվածներ էր գրում լեհերեն հրատարակվող մի թերթի համար: Դա, իհարկե, անվտանգ չէր:

Ֆիրբյուխերի կրկնվող հետապնդումն ուներ այլ, «առապել մեղսական» պատճառներ: 1938 թ. սեպտեմբերին իր հինգ վեպերը Նոյշթադթում ապրող ենթասպա Վիլհելմ Բյուշերին առաքելիս՝ նա փաթեթավորման համար օգտագործել էր հրետենթերթեր: Յուլիուս Շթրայխերի «Der Stürmer» («Գրոհայինը») սադրիչ թերթը որսաց գործի ընթացքը: 1939 թ. հունվարյան երրորդ համարի կարմիր տիտղոսաթերթի վրա գրված էր. ««Ֆիրբյուխեր» առաքող գրախանութը հրետենթերթ շաբաթաթերթ է բաժանորդագրում», և հողվածներից մեկուն խանութը վարկաբեկվում էր որպես հրեական ընտանեկան թերթի ցրիչ կետ: Ֆիրբյուխերի համար, որը չէր կարողանում մոռանալ 1938 թ. «Իմպերիայի բյուրեղյա գիշերը» ընդդեմ իր հրեա համաքաղաքացիների, պարզ էր, որ սպառնալու էին հետագա հետապնդումներ ձեռնարկելով: 1939 թ. փետրվարի 11-ի լույս 12-ի գիշերը նրա մոտ մտավ մի օտար մարդ, որն ակնհայտորեն գործում էր գեստապոյի հանձնարարությամբ: Խոսակցության մասին ոչինչ հայտնի չէ: Այն պետք է որ առանձնապես բարյացակամ չլիներ: Համենայն դեպս, դա Ֆիրբյուխերին մեծ վրդովմունք պատճառեց: Այցից անմիջապես հետո նա ուշագնաց եղավ: Մինչ այդ պահը դեռ ողջ-առողջ այս մարդը հաջորդ առավոտյան իսկ մեռավ ուղեղի կաթվածից Ռոբերթ Քոխի անվան բեռլինյան հիվանդանոցում:

Հայնրիխ Ֆիրբյուխերը սերում էր սոցիալ-դեմոկրատների ընտանիքից: Ժողովրդական դպրոցն ավարտելուց հետո, դեռ մանուկ հասակում հետաքրքրվելով քաղաքական հարցերով, նա ուզում էր հենց լրագրող դառնալ: Բայց որպես ընտանիքի ավագ որդի<sup>16</sup>, նա

16 Իր երեք եղբայրների մեծն էր Ֆիրբյուխերը ևս ԳՄԴԻ-ի անդամ էր: Քարլ Ֆիրբյուխերը, որը Բեռլինում մինչև 1933 թ. «Կարմիր բազեների» ղեկավարն էր, իսկ այդուհետ նացիստները հաճախ ծեծում էին նրան, 1945-ից հետո Արևմտյան Բեռլինի դպրոցական գերատեսչությունում զբաղեցնում էր ղեկավար պաշտոն: Սևերին Ֆիրբյուխերը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ապրում էր նույնպես ԳԴՀ-ում, որտեղ նա դարձավ DEFA-ի ղեկավարը: Էռնսթ Ֆիրբյուխերը մինչև 1939 թ. Դանցիգում հիմնադրել էր հետախուզական բյուրո: Տեղեկությունը՝ Ս. Ֆիրբյուխերի, 25-ը հոկտեմբերի, 1986 թ.:



տեղի տվեց հոր մղումին, սովորեց նրա մասնագիտությունը և դարձավ կաղապարող: Աշխատանքը Բեռլինի մետաղամշակման ֆիրմայում, սակայն, չէր գոհացնում նրան: Նույնքան քիչ էր հրապուրում նրան երբևիցե հոր նման վարպետ աշխատելու հեռանկարը: Լինելով բազմաշնորհ Ֆիրբյուխերը սովորեց շ ա տ լեզուներ՝ անգլերեն, ֆրանսերեն, արաբերեն և թուրքերեն:

1914 թ. օգոստոսին զորակոչվելով զինվորական ծառայության և կատարելագործվելով որպես նորակոչիկ՝ նա 1915 թ. դարձավ մարշալ Լիման ֆոն Ջանդերսի թարգմանը Կոստանդնուպոլսում: Թարգմանչի աշխատանքը նրան տարավ դեպի Թուրքիայի զանազան տեղեր ու բնակավայրեր: Նա դարձավ հայ ժողովրդի ցեղասպանության ականատեսը: 1916 թ. նոյեմբերին նա մոտիկից զգաց, թե ինչպես Լիման ֆոն Ջանդերսին հաջողվեց դադարեցնել հայերի զանգվածային տեղահանությունները Չմյուռնիայից<sup>17</sup>: Մարշալի ունեցած հաջողությունը ցույց տվեց, որ նույնիսկ հաշվի առնելով գերմանա-թուրքական զինակցությունը, հնարավոր էր հայերի համար անել ավելին, քան ընդհանրապես արվել է: Եվ դա Չմյուռնիայի փորձն էր, որը Ֆիրբյուխերին դրդեց և իրավունք տվեց հարցը բարձրացնելու նաև գերմանական կողմի պատասխանատվության տեսանկյունից՝ առավել հետևողական, քան իրենից առաջ և հետո եղածները:

«Vorwärts»-ը («Հառաջ»)՝ ԳՄԴԿ-ի կենտրոնական օրգանը, «Արևելքի զոհը» վերնագրով արտատպեց Ֆիրբյուխերի բողոքը «Մարդկային զազանության տարտարոսի» և «Հայերի հեծեծանքի վտակների» վերաբերյալ, որոնք հոսելով Ստամբուլից, Տրապիզոնից, Սվազից և Էրզրումից՝ կուտակվում դառնում էին անասելի տառապանքի հսկայական-ահավոր սիմֆոնիա<sup>18</sup>: Ֆիրբյուխերին տարիներ շարունակ հետապնդող սարսափի տեսարանների մասին է վկայում նաև նրա «Հայաստանը 1915-ին» գիրքը՝ այն միակ առավել մեծ գործը, որ նա երբևէ հրատարակել է: Հըստակ ու պարտավորված՝ նա խոսք բացեց կայսերական կառավարության մեղսակցության մասին և ոչ հանիրավի խարազանեց



Հայնրիխ Ֆիրբյուխերը 1918 թ.  
Կոստանդնուպոլսում

17 Սրա հետ հմտ. Յոհաննես Լեփսիուսի (հրատարակիչ) վերջերս հրատարակած գործը՝ «Գերմանիան և Հայաստանը 1914-1918 թթ.: Դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու»՝ նոր հրատարակության համար Թեսսա Հոֆմանի գրած նախաբանով և Մ. Ռայներ Լեփսիուսի վերջաբանով, Բրեմեն, 1986 թ., էջ 300-304:

18 Գ. Ֆիրբյուխեր, «Արևելքի զոհը» տպագրված «Vorwärts»-ում, հրատ. 37-րդ տարի, թիվ 61, 10-ը օգոստոսի, 1920 թ. (երեկոյան հրատարակություն):

այն չարաբաստիկ գերմանական «իրական քաղաքականութեան» ոգու կեցվածքը, ինչի համար ինչ-որ արժեք ունեին «միայն շոշափելի, միայն առևտրի հաշվեկշիռների թվերի մեջ հաշվելի, զորախմբերի ու զրահանավերի թվերի մեջ գումարելի գործոնները, սակայն մարդասիրության հայցը, եթե այն ամբարտավան ժպիտով վերջնականապես մի կողմ չի հրվել որպես «գաղափարական» ցնորամիտների երևակայություն, ճանաչվել է միայն որպես դեկորատիվ մեծության մի տեսակ»<sup>19</sup>: Բացի դրանից, չնայած նախատեսվում էր Թուրքիային ընդունել Ազգերի լիգայի մեջ, պատահական չէր, որ կազմավորված պացիֆիզմի մի հանրահայտ ներկայացուցիչ հիշեցնում էր հայ ժողովրդի ճակատագրի ու տառապանքի մասին:

Իր կազմավորումից ի վեր Գերմանիայի խաղաղության կողմնակիցների շարժումը, որը պատերազմները կանխարգելելու իր գործունեությունը միշտ կապում էր մարդու քաղաքական ազատությունների համար մղվող պայքարին անմիջական մասնակցություն ունենալու հետ, մեծ ուշադրություն է նվիրել հայկական հարցին և ձգտել Գերմանիայի հասարակայնությանը պարզաբանել թուրքական իշխանությունների անողոք գործելակերպը<sup>20</sup>: Նույնը վերաբերում է այն անձնավորություններին, ովքեր մար-

19 Մ. Քրոնենբերգ, «Դժբախտ ժողովուրդ» տպագրված «Ethische Kultur» («Բարոյակրթություն») հանդեսում, սոցիալ-քարոյագիտական բարեփոխումների շարքաթերթ, հրատ. X տարի, թիվ 32, էջ 249, 9-րդ օգոստոսի 1902 թ.:

20 Բ. Ֆոն Չուքների հրատարակած «Die Waffen nieder!» («Ձեռքերը ցած») խաղաղության շարժմանն աջակցող ամսագրում, որը միաժամանակ միջպառլամենտական կոնֆերանսների ծառայության Բեռլինի միջազգային խաղաղության բյուրոյի, խաղաղության կողմնակիցների ավստրիական ընկերության և ԳևԿԸ-ի պաշտոնական օրգանն է, կարելի է գտնել հոդվածներ, գեկուցումներ, մամլո հաղորդագրություններ և դիրքորոշումներ հայկական հարցի վերաբերյալ. հմնտ. թեկուզ «Das Gemetzel von Trapezunt» («Տրապիզոնի սպանողը»), հրատ. IV տարի, թիվ 12, էջ 459-460, դեկտեմբեր 1895 թ., հրատ. V տարի, թիվ 10/11, էջ 366-367, հոկտեմբեր/նոյեմբեր 1896 թ. (այստեղ կա մի հաղորդում Բուդապեշտում կայացած համաշխարհային խաղաղության VII կոնգրեսում ծայր առած մտքերի փոխանակության մասին, որտեղ հիշատակության են արժանի անգլիացի Ջեյմս Զոլֆերի փաստարկումները), հրատ. V տարի, թիվ 10/11, էջ 406-407, հոկտեմբեր/նոյեմբեր, 1896 թ., հրատ. V տարի, թիվ 12, էջ 450, դեկտեմբեր, 1896 թ. և հրատ. VI տարի, թիվ 8/9, էջ 334, օգոստոս/սեպտեմբեր, 1897 թ. (բոլոր տեղերում խոսքը Բ. Ֆոն Չուքների հոդվածների մասին է՝ իր «Ժամանակի տեսություն»-ում): Առանձնապես հուզիչ է, թեև կարողալու համար քննադատելի, ֆրանսիացի բանաստեղծ և գրող Էմիլ Բերգեռաթի բողոքը «Հայկական սարսափները» վերնագրով՝ «Die Waffen nieder!» ամսագրում, հրատ. VI տարի, թիվ 3, էջ 94, և հաջորդ էջերը, մարտ, 1897 թ.:

բուրգցի աստվածաբան Սարթին Ռադեի նման մոտ էին կանգնած պացիֆիստական գաղափարների: Նրա կողմից հրատարակված «Christliche Welt» («Քրիստոնյա աշխարհը») շաբաթաթերթում «Ամեն դիրքի կիրթ մարդկանց համար համայնքի ավետարանական թերթ»-ում դեռ 1894 թ. հոկտեմբերին հիշատակվում էր հայը<sup>21</sup>: Անշուշտ, միայն նվազ ուշադրության արժանացան «Հայ եկեղեցին թուրքական տիրապետության տակ» թեմային վերաբերող հոդվածները: Այնուհանդերձ Ռադեն դեռ 1896 թ. հունվարին «վստահելի ակնատեսի» գրչով հրապարակեց առաջին գերմանալեզու հաղորդումն ընդդեմ ինստիտուցիոնալ կանոնների ջարդերի: Ռադեն նույնիսկ մի ներածական տեքստում «Հայ եղբայրների ճակատագիրը կիսալուսնի բռնապետության տակ» բնութագրեց որպես «ողբալի» և պարզաբանեց, որ հայ ժողովրդի խաղաղասեր բնավորության նկատմամբ «ոչ մի կասկած չկա՞նք չի կարող»<sup>22</sup>: Նաև 1896 թ. հաջորդ հրատարակություններում թերթը փորձում էր ուշադրություն հրավիրել «բնաջընջելու՝ թուրք աղաներին հատուկ ֆանատիկ համակարգի վրա»<sup>23</sup>: Այն միաժամանակ կոչ էր անում ընթերցողներին՝ օգնելու և նվիրատվությամբ մեղմացնելու ողջ մնացածների ողբալի վիճակը: «Christliche Welt»-ը լայն տեղ տվեց մամլո այն հոդվածների հերքմանը, որոնք փորձում էին ի վնաս հայերի բռնաբափել թուրքերի մեղքը<sup>24</sup>: Արթնացնելով մարդկանց խիղճը՝ Ռադեն հավաստում է. «Եվրոպացի քրիստոնյաների անտարբերությունը Հայաստանի քրիստոնյաների՝ ընդհուպ զուտ եկեղեցական շըրջաններից էլ ներս կատարվող հալածանքների նկատմամբ հանցանք է ու խայտառակություն»<sup>25</sup>:

21 «Հայի բերած փաստարկումները» տպագրված «Christliche Welt»-ում, հրատ. VIII տարի, թիվ 40, էջ 956-959, 4-ը հոկտեմբերի, 1894 թ., թիվ 41, էջ 981 և հաջորդ էջերը, 11-ը հոկտեմբերի, 1894 թ. և թիվ 42, էջ 1005-1008, 18-ը հոկտեմբերի, 1894 թ.:

22 «Ոճիր Հայաստանում» տպագրված «Christliche Welt»-ում, հրատ. 10-րդ տարի, թիվ 4, էջ 80-88, 23-ը հունվարի, 1896 թ.:

23 Ս. Ռադե, «Հայաստան» տպագրված «Christliche Welt»-ում, հրատ. X տարի, թիվ 24, էջ 569-570, 11-ը հունիսի, 1896 թ.:

24 Ս. Ռադե, «Ճշմարտությունը Հայաստանի մասին» տպագրված «Christliche Welt»-ում, հրատ. X տարի, թիվ 34, էջ 800 և հաջորդ էջերը, 20-ը օգոստոսի, 1896 թ.: 1896 թ. սեպտեմբերի 10-ի հրատարակության մեջ Ռադեն ակնարկում է. «Հայաստանի համար բացվում է օրը: Աճում է գերմանական այն թերթերի թիվը, որոնք պատշաճ են հատուցում ճշմարտությանը»:

25 Ս. Ռադե, «Հայերի հարցի էությունը» տպագրված «Christliche Welt»-ում, հրատ. X տարի, թիվ 20, էջ 463-466, 14-ը մայիսի 1896 թ.: Հաջորդ տարիներին

1895/96 թթ. հանցագործությունների մասին է հիշեցնում Ֆրիդրիխ Վիլհելմ Ֆյորսթերի գործակցությամբ Ռ. Փենցիգի և Ս. Քրոնենբերգի կողմից հրատարակված «Ethische Kultur» շաբաթաթերթը, որը, որպես 1892 թ. Վիլհելմ Ֆյորսթերի կողմից հիմնադրված «Բարոյակրթական ընկերության» օրգան, օժանդակում էր խաղաղության շարժման գործունեությանը: Քրոնենբերգը բացատրում էր, որ հավաստի տեղեկությունների համաձայն «թուրքական իշխանության մարմինների աչքի առաջ և մասամբ նրանց գործակցությամբ որսի կենդանիների նման մորթվել էին ամեն տարիքի ու սեռի մոտ երեք հարյուր հազար հայեր, և այդ եղեռնի նպատակը, իրենց իսկ բացահայտ խոստովանությամբ, հայ ժողովրդին վերջիվերջո ամբողջությամբ արմատախիլ անելն էր»: Եվրոպայի հարածուն ուշադրության պայմաններում, անշուշտ, թուրքիան կորցրել էր հուսալիությունը, բայց «այն ժամանակվանից թուրքերը դուրս իսկ չեն հրաժարվել բնաջընջման նպատակից, այլ միայն փոխել են այն մեթոդները, որոնք դարձյալ տանում են դեպի այդ նպատակը: Այլևս չեն սպանում զանգվածաբար, առավել շատ սպանում են անհատ և փոքր խմբերով»<sup>26</sup>:

Օթո Ումֆրիդը՝ Շթուբգարթի քաղաքային քահանան և Գեսլե-ի երկարամյա փոխնախագահը, 1895/96 թթ. արյան բաղնիքների մասին այն կարծիքին էր, որ «ներոնյան դաժանությունը մանկական խաղ էր քրիստոնյաների հալածանքի համեմատությամբ, որը սուլթան Աբդուլ Համիդի օրոք 19-րդ դարի վերջին ջարդվեց Հայաստանի գլխին»<sup>27</sup>: Ումֆրիդը ոչ միայն բախվում էր գերմանական մամուլի մեծ մասի կողմից հասարակական կարծիքի հետևողական ապակողմնորոշման հետ, այլև նույն ձևով նշավակում էր կայսերական կառավարության դիրքը և «մեր ժողովրդական ներկայացուցիչների հազիվ մի անգամ խախտված լռությունը»: «Ռայխսբաղի ոչ մի պատգամավոր, - այսպես է շարադրում Ումֆրիդը, - չգտավ այն ճշմարիտ խոսքը, որը հենց տե-

ևս թերթը հաղորդում էր Հայաստանում տիրող վիճակի մասին. հմտ. թեկուզ՝ Էվալդ Շթր, «Հայ եկեղեցու իրավագրվումը» «Christliche Welt»-ում, հրատ. XVII տարի, թիվ 46, էջ 1093 և հաջորդ էջերը, 12-ը նոյեմբերի 1903 թ.:

26 Փաստարկումը տես ծանոթ. 19:

27 Օ. Ումֆրիդ, ««Հայկական սարսափները» և արևելքի խաղաղասիրությունը» նույն հեղինակի «խաղաղությունն աշխարհում: Խորհրդածություններ ժողովուրդների խաղաղության մասին» աշխատությունում, 2-րդ հրատարակություն, Ելինգեն, 1898 թ., էջ 93:

դուռն էր հեղեղի պես թափվող խոսքերի դեմ դիմաց: Ոչ մի մարդ հանդես չեկավ վայրագորեն ծաղրված մարդու իրավունքների պաշտպանությամբ: Բայց երբ պրուսական պատգամավորների պալատում մի գրեթե քաղաքական դիակ հարցապնդում արեց նախագահողին՝ հայ թուրմանյանին Գերմանիայից վտարելու վերաբերյալ, նրան տրված պատասխանը եղավ. «Բարեկամական այս հարաբերությունների պայմաններում, ինչի մեջ մենք գտնվում ենք թուրքիայի հետ և հատկապես նրա բարձր գերիշխանության հետ, մենք չենք կարող հանդուրժել, որ Գերմանիայի ներսում թուրքիային անպատվելու եղանակով խոսվի այնտեղ տիրող իրավիճակի մասին»<sup>28</sup>: Այսօր պետք է հարցնել Գերմանական բուհերից թափափող որևէ պատգամավոր ե՞րբ խոսք կբացի պառլամենտում այն մասին, որ ֆեդերալ կառավարությունը եվրախորհրդարանում քվեարկության ձեռնպահությամբ խափանում է 1915 թ. հայերի ցեղասպանության ճանաչումը:

Խաղաղության կողմնակիցների միջազգային շարժումը Բուդապեշտում կայացած VII համաշխարհային խաղաղության կոնգրեսից ի վեր (սեպտեմբեր 1896 թ.) մշտապես զբաղվել է այն իրադարձություններով, որոնք կատարվել են Հայաստանում<sup>29</sup>:

28 Նույն տեղում, էջ 99-100: - Նաև Ումֆրիդն էր, որ 1896 թ. սեպտեմբերին հայերի վիճակի մասին կարդացած իր զեկուցումով Շոթթագարթի խաղաղության կողմնակիցների հավաքին դրոշեց ընդունելու մի բանաձև, որտեղ ՊԿԿԿ-ի Շոթթագարթի տեղական խումբը ի միջի այլոց հայտարարում էր, «որ ինքն իր անկեղծ համակրանքն է տածում հազար վերքերից արյունածոր հայ ժողովրդի նկատմամբ և խստագույնս դատապարտում է թուրքական կառավարության ձեռնարկումները» և որ «ինքը խիստ կարեկցում է եվրոպական այն տերությունների եսանդ, շահադիտական քաղաքականությանը, որոնք իրենց անտարբերությամբ մեղակից են դառնում հայ ժողովրդին ոտքի տակ տալու գործում»:

29 Ձ. Քրփերի ճառի բովանդակության և ազդեցության վերաբերյալ համաշխարհային խաղաղության VII կոնգրեսի մասին տրված հաղորդագրության մեջ ասվում է. «Անթիվ բանակները, սարսափազդու հրանոթները իբր թե որոշել են խաղաղություն հաստատել և պաշտպանել այն: Բայց և այնպես եվրոպայի վեց միլիոն զինվորները չհերիքեցին խափանելու այն խայտառակությունները, որոնք տեղի էին ունենում Արևելքում: (Ծափահարություն:) Այստեղ խոսքը ոչ թե Արևելքում ապրող քրիստոնյաների պաշտպանության մասին է, այլ մարդասիրության իրագործման մասին: (Բուռն ծափահարություն:) Չի կարելի դիտել, թե ինչպես են մարդասպանները ոտքերով տորդում մի ամբողջ ժողովուրդ: Եթե հռետորը նրբանցքում տեսնում է, որ խուլիզանները հարձակվում են մի երեխայի վրա, ապա նա իր պարտքը պիտի համարի միջամտելու և զույգ բռունցքներով պաշտպանելու հարձակման ենթարկվածին, և եթե այդ պայքարում նրա կյանքը պահանջվի, նա պիտի այն սիրով տա: (Աշխույժ ծափահարություն: Բացականություններ՝ բրավո:)

Լայն տեղ տրվեց հայկական հարցին վերաբերող խորհրդակցություններին Մոնակոյում կայացած XI համաշխարհային խաղաղության կոնգրեսում (ապրիլ 1902 թ.): Ֆրանսիացի Պիեռ Քիյառը՝ Փարիզի հայ ուսանողության պատգամավորը և «Pro Armenia» («Հանուն Հայաստանի») ամսագրի խմբագիրը, ներկայացրեց մի սրտաճմլիկ պատկեր այն վայրագ հալածանքներից, որոնց հայերը ենթարկվել էին թուրքերի կողմից վերջին տարիների ընթացքում... 1874-1897 թթ. սպանվել են ոչ պակաս, քան 300000 հայեր (տղամարդիկ, կանայք ու երեխաներ)»: Կոնգրեսը միաձայն ընդունեց մի բանաձև, որը Բեռլինի համաձայնագիրը (1878 թ.) ստորագրող տերություններին «թախանձագին» խնդրում էր «հավաքվելու Հաագայում պաշտոնական մի կոնֆերանսի՝ 1895 թ. մայիսին նախագծված վերափոխումների կենսագործմամբ հայկական հարցը լուծելու նպատակով»: Այնուհետև, քանի որ Սասունի շրջանում նոր ջարդերի վտանգ կար, եվրոպական մեծ տերություններին կոչ էին անում «հարևան քաղաքների իրենց հյուպատոսներին ուղարկել Մուշ, քանզի պաշտոնական եվրոպական վկաների ներկայությունն իսկ հարմար էր թվում՝ կանխելու այն արյունալի իրադարձությունների կրկնությունը, որոնք համընդհանուր վրդովմունք էին առաջացնում»<sup>30</sup>:

Նույնն է կոնգրեսի խնդիրը նրանց հանդեպ, ովքեր Արևելքում հարձակման են ենթարկվել անմեղ տեղը: Ուստի այս կոնգրեսից ուժեղ ու հզոր պիտի հնչի ... որ այդ խայտառակությունը պետք է դադարի: Որպես քրիստոնյա, որպես մարդ, որպես խաղաղության կողմնակից՝ բոլորը պարտավոր են փայփայել այդ ցանկությունը: (Բուռն, երկարատև ծափահարություն:) Փաստարկումը տես ծանոթ. 20: VII համաշխարհային խաղաղության կոնգրեսի վերջում «ժողովուրդների ուղղված իրաժեշտի կոչ»-ում ասվում է. «Կոնգրեսը սարսափիզ զգացումներին ի միջի այլոց տալիս է այն արտահայտությունը, որը նրան ներշնչում է թուրքիայում կատարված սպանող՝ եվրոպական երկրներին թախանձելով անհապաղ ձեռնարկելու այնպիսի միջոցառումներ, որոնք վերջ կտան նման իրավիճակին»: Դրա հետ հմնտ. նաև Բ. Ֆոն Ջուրներ, «Հուլներ»՝ հրատարակված Լ. Ֆոն Ռայնքենի կողմից, եվա Հելեն Փաուլինգի և Լինուս Փաուլինգի կողմից գրված առաջաբանով, որը տպագրվել է Է. Բյունի և Զ. Ֆ. Ռայնքենգի հրատարակած «Իրենց ժամանակի վկաները: Հուլներ, հաղորդումներ, փաստաթղթեր» ժողովածուում, Բրեմեն, 1965 թ., էջ 318:

30 Մեջբերումը՝ ըստ Ա. Հ. Ֆրիդի, «XI համաշխարհային խաղաղության կոնգրեսը Մոնակոյում (2-6-ը ապրիլի 1902 թ.)» տպագրված «Friedensblätter»-ում, օրգան Գերմանիայի խաղաղության կողմնակիցների ընկերության, հրատարակված Օ. Ումֆրիդի կողմից, հրատ. III տարի, թիվ 6, էջ 67-68: - Ֆրիդի հաղորդումից պետք է եզրակացնել, որ համահունչ պահանջներ էին բարձրացնում դեռևս IX և X համաշխարհային խաղաղության կոնգրեսները (1900 թ. հոկտեմբերին Փարիզում և 1901 թ. սեպտեմբերին Գլազգոյում): - Հմնտ. նաև Մ. Հյուլցելի (Համբուրգ) հաղորդագրությունը՝ «X միջազգային

Համաշխարհային խաղաղության հետագա տարիների կոնգրեսները, ինչպես պետք է եզրակացնել Օ. Ումֆրիդի կողմից հրատարակված «Friedensblätter» («խաղաղության թերթիկներ») ամսագրից՝ ԳԽԿԸ-ի մինչև 1914 թ. օրգանից, նույնպես զբաղվում էին թուրքական կայսրության տարբեր ժողովուրդների զարհուրելի տառապանքներով<sup>31</sup>: խաղաղության կողմնակիցներն անընդհատ դիմում էին մեծ տերություններին իրագործելու հայերին խոստացած բարեփոխումներն ու երաշխիքները: Եվ նրանք հիշատակում էին Բեռլինյան համաձայնագրի 61-րդ հոդվածի տեքստը, որի համաձայն Եվրոպան պարտավորվում է «երաշխավորել և պաշտպանել հայ բնակչության կյանքը, անձնական անվտանգությունն ու երթևեկության ազատությունը, ինչպես նաև նրանց ունեցվածքի խաղաղ տնօրինումն ու նրանց խըղճի ազատությունը»<sup>32</sup>: Կարճ ժամանակ անց, 1902 թ. հուլիսին, Բրյուսելում նիստ գումարեց «Հայաստանի բարեկամների կոնգրեսը»: Նախագահությունը գլխավորում էր բելգիացի քաղաքագետ և պացիֆիստ Շարլ Ուզո դը Լեյեն, որն իր բացման ճառում հույս հայտնեց, որ «կոնգրեսը պարտադրելու է կառավարություններին՝ վերջապես մտահոգվելու ճնշված հայերով»<sup>33</sup>: Շատ երկրներից եկած կուսակցությունների նշանավոր ներկայացուցիչների կողքին հավաքին մասնակցում էին բազմաթիվ պացիֆիստներ, ինչպես բարոն դ'Էստուրնել դը Կոնստանտը<sup>34</sup>, Փարիզում ապրող կին գրող Կարոլինե Սևերինեն, բարոնուհի Թ. Փ. Վասթելսիչը և շատ ուրիշներ:

Պ. Քիյառը նորից կանգ առավ թուրքական կառավարության «արարքի» վրա և ընդգծեց, որ բանը հասնելու է հայերի «համա-

խաղաղության կոնգրեսը Գլազգոյում (10-13-ը սեպտեմբերի 1901 թ.) տպագրված «Friedensblätter»-ում, հրատ. II տարի, թիվ 12, էջ 145, դեկտեմբեր 1901 թ.:

31 Մեքեբրունը՝ ըստ Ռ. Ֆելդհաուսի, «XIII համաշխարհային խաղաղության կոնգրեսը Բոսթոնում» տպագրված «Friedensblätter»-ում, հրատ. V տարի, թիվ 23, էջ 166, 1-ը դեկտեմբերի 1904 թ.:

32 Մեքեբրունը՝ ըստ Ռ. Ֆելդհաուսի, «Հայաստանի բարեկամների կոնգրեսը» տպագրված «Friedensblätter»-ում, հրատ. III տարի, թիվ 8, էջ 98-101, օգոստոս 1902 թ.:

33 Նույն տեղում:

34 խաղաղության կողմնակիցների շարժման գործում նրա մատուցած ծառայության կապակցությամբ հմնտ. Ա. Վիլդ, «Բարոն դ'Էստուրնել դը Կոնստանտ (1852-1924 թթ.): խաղաղության Նորբեյյան մրցանակակրի գործունեությունը հանուն գերմանա-ֆրանսիական փոխընդհանուր և Եվրոպայի միավորման», Համբուրգ, 1973 թ.:

տարած բնաջնջմանը», ինչպես մտադիր է թուրքական կառավարությունը, իսկ Եվրոպան չի պարտավորվում միջամտել: Կոնգրեսը այլոց թվում հանձնարարեց ինտերնացիոնալ կազմ ունեցող մի հանձնաժողովի՝ պառլամենտներում, մանուկում տարվող գործուն պրոպագանդայով և հասարակական կարծիքի ստեղծումով գործել հանուն հայկական հարցի»<sup>36</sup>: Նախապես կազմվել էին հանձնաժողովներ, որոնք պետք է մշակեին գործնական առաջարկություններ: Այդ հանձնաժողովներում առաջադրված էին պատերազմի նշանավոր հակառակորդներ, ինչպիսիք են Բերթա ֆոն Ջուքենը՝ Ավստրիայի անունից, դ'Էստուրնել դը Կոնստանտը՝ Ֆրանսիայի անունից, սենատորներ Ուզո դը Լեյեն՝ Անտվերպենում կայացած VI համաշխարհային խաղաղության կոնգրեսի (1894 թ.) նախագահ, և Լա Ֆոնտենը՝ Բելգիայի անունից, Է. Թ. Մոնեթան (1833-1918)՝ Իտալիայի անունից: Լյուդվիգ ֆոն Բարը<sup>37</sup>, Ավգուստ Բերելը, Էդուարդ Բեռնշթայնը և Վիլհելմ Ֆյորսթերը ընտրվեցին Գերմանիայի անունից:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին ավետարանական պաստոր Եվալդ Շթիրը Մագնուս Շվանթեյի կողմից հրատարակված «Ethische Rundschau» («Բարոյագիտության տեսություն») պացիֆիստական թերթում մատնանշում էր, որ «Երիտթուրքերի տիրապետության ժամանակներում ևս այլ կերպ չի եղել», և «սպանությունը, կողոպուտը, թալանը, դաժան վարմունքը հայերի հետ առօրյա բան են եղել»<sup>38</sup>: Համաշխարհային պատերազմի ընթացքում, որը թուրքերին հնարավորություն տվեց լրիվ հրաժարվելու հայկական հարցի վերաբերյալ եվրոպական տերությունների հանդեպ ունեցած պարտականություններից, Լյուսի Յոշ-Էռնսթ<sup>39</sup> էր, որ ԳԽԿԸ-ի լայացիզյան ասամբ-

35 Գերմի Լա Ֆոնտեն (1854-1943 թթ.), 1907 թ. ի վեր Բեռնի միջազգային խաղաղության բյուրոյի խորհրդի նախագահ, 1913 թ. ստացավ խաղաղության Նորբեյյան մրցանակ:

36 Փաստարկունը տես ծանոթ. 32:

37 Լ. ֆոն Բարի ունեցած կարևորության կապակցությամբ հմնտ. համապատասխան գրանցումը. Գ. Վերեդ, «Գերմանիայի խաղաղության կողմնակիցների շարժման առաջնորդները (1890-1923 թթ.)», Լայպցիգ, առանց հրատ. տարեթվի (1923 թ.), էջ 34-37 (վերահրատարակություն. Լյու Յորթ /Լոնդոն, 1972 թ.):

38 Է. Շթիր, «Հայերի վիճակը» տպագրված «Ethische Rundschau»-ում, հրատ. II տարի, պրակ 9, էջ 157, սեպտեմբեր 1913 թ.:

39 Լ. Յոշ-Էռնսթը Գեռնու-Վեստֆալյան կանանց միության անդամ էր և Դորթմունդի «Կանանց կրթություն - կանանց գործունեություն» միության նախագահը: Առաջին համաշխարհային պատերազմում նա իր պացիֆիստական

լեային 1915 թ. նոյեմբերին առաջարկեց հետևյալ բանաձևը. «Համաժողովն արտահայտում է իր համակրանքը բոլոր ճնշված ժողովուրդների, հատկապես հայերի նկատմամբ և դիմում է Գերմանիայի կառավարությանը, ելնելով մարդասիրական շահերից՝ գործուն ազդեցություն ունենալ իր դաշնակից Թուրքիայի վրա»<sup>40</sup>:

Հասկանալի է ոստիկանության հսկող պաշտոնյան թույլ չտրվեց քվեարկության դնելու այդ բանաձևը: Տեքստը փոխեցին, այնպես որ հազիվ թե ճանաչելի էր նրա նախնական իմաստը<sup>41</sup>: Այդ պայմաններում խաղաղության կողմնակիցների շարժման ջանքերը՝ հասարակական հետաքրքրությունը հրավիրելու հայ ժողովրդի բնաջնջման վրա, դատապարտված էին ծախողման<sup>42</sup>:

Նման բայտս վիճակվեց էքսպրեսիոնիստ գրող Արմին Թ. Վեգներին, ում հաջողվել էր հարյուրապատիկ լուսանկարել թուրքական ձեռնարկումների վայրագությունները<sup>43</sup>: 1915 թ. հոկտեմբերին հայրենի Բեռլինում անցկացվող զինծառայության

գործունեության համար ռազմական իշխանությունների կողմից ենթարկվել էր մշտական հալածանքների: Հմետ. Լ. Քվիդե, «Գերմանական պացիֆիզմը 1914-1918 թթ. համաշխարհային պատերազմի ժամանակ»՝ հրատարակված Բ. Հոլլի կողմից՝ Գ. Դոնաթի գործակցությամբ, Հռեմսի Բուխարդ, 1979 թ., էջ 355 և 359: 40 Նույն տեղում, էջ 350:

41 Քվիդեի հաղորդում է հետևյալ բառացի տեքստը. «Այնուհետև համաժողովը «իր համակրանքն արտահայտեց բոլոր ճնշված ու ծանակված ժողովուրդների, առանձնապես հայերի ու ռուսական հրեաների հանդեպ», նա կառավարությունից պահանջեց, «ելնելով մարդասիրական շահերից՝ օգնություն ցույց տալ»: Նույն տեղում, էջ 87: Չէր թույլատրվում պահանջել կայսերական կառավարությունից՝ պաշտպան կանգնելու հայերին և այդ իմաստով ազդելու թուրք դաշնակցի վրա:

42 Ա. Հ. Ֆրիդի կողմից հրատարակվող «Friedens-Warte»-ն հրապարակեց «Հայկական սարսափների» վերաբերող երեք փաստաթուղթ («Friedens-Warte»), հրատ. XVIII տարի, թիվ 11, էջ 321-324, նոյեմբեր 1916 թ.: Հասկանալի է՝ 1916 թ. ամռանը թերթը Գերմանիայում արգելված էր եղել:

43 Այդ լուսանկարներից մի քանիսը արտատպվել են է. Ֆրիդրիխի «Պատերազմ պատերազմին» գրքում, Բեռլին 1924 թ., էջ 152 և հաջորդ էջերը: Վեգների մասին հուշերի համար մեծ ծառայություն է ունեցել ամենից առաջ «Փեթեր-Յոնսոն» հրատարակչությունը (Վուփերթալ), որը վերջին տարիներին լույս է ընծայել Վեգների երեք գրքերը և Ռ. Ս. Գ. Նիքիշի կենսագրությունը: Վաստակաշատ աշխատանք է կատարվել Մ. Ռունեյի կողմից «Ա. Թ. Վեգների կյանքը և գործունեությունը (1886-1978 թթ.) Գերմանիայի սոցիալ-քաղաքական և մշակութային զարգացման կոնտեքստում», Մայնի Ֆրանկֆուրտ 1984 թ.: ԳԿԿ-ից Վեգների երես թեքելու հարցին Ռունեյը, անշուշտ, միայն հարևանցիորեն է մոտենում նման 1986 թ. հոկտեմբերի 9-ին Բրեմենի գրախանութներից մեկում Վեգներին նվիրված միջոցառման պարագային, որտեղ նա նույնիսկ չհիշատակեց ԳԿԿ-ից Վեգների դուրս գալը:

արձակուրդի ժամանակ նա փորձեց արթնացնել գերմանացիներին և կապի մեջ մտավ մամուլի ներկայացուցիչների հետ: Թեոդոր Վոլֆը՝ «Berliner Tageblatt»-ի («Բեռլինյան օրաթերթ») գլխավոր խմբագիրը, նրան սկզբում չէր էլ ընդունում<sup>44</sup>: Այլ էր Մաքսիմիլիան Հարդենի՝ «Die Zukunft» («Ապագան») շաբաթաթերթի գլխավոր խմբագրի և Հելմուտ Ֆոն Գերլախի՝ «Welt am Montag» հանդեսի գլխավոր խմբագրի ու կազմավորված պացիֆիզմի պարագլուխներից մեկի վերաբերմունքը: Վեգների այցի մասին Հ. Ֆոն Գերլախը հաղորդում է. «Նա հենց Թուրքիայից էր գալիս և հոգեցուցեց էր եղել իր տեսած հայկական սարսափներից: Անասելի բան է կատարում թուրքական ֆանատիզմը: Մենք՝ գերմանացիներս, պիտի միջոցներ ձեռք առնեինք այդ իրեշայնության դեմ, եթե որպես դաշնակիցներ չէինք ուզում մեղսակցի համբավ վաստակել»: Ի տարբերություն Թ. Վոլֆի՝ Հ. Ֆոն Գերլախը հետամուտ եղավ գործին: Շվեյցարական մամուլում նա գտավ Վեգների տվյալների հաստատումը գերմանացի հեղինակների կողմից<sup>45</sup>: Ամբողջ աշխարհի եկեղեցական շրջանները գործի անցան, - այսպես է շարադրում Գերլախը, - որպեսզի պահանջեն դադարեցնել քրիստոնյա ժողովրդի սպանողը: Ես նայում էի գերմանացի Լեփսիուսի սրտաշարժ հաղորդագրությունները: Կասկած չկար. Թուրքիայում ծավալվում էր այն ամենասարսափելին, ինչ իր հետ առհասարակ բերեց համաշխարհային պատերազմը: Մեր դաշնակիցը հետևողականորեն, մինիստրական որոշմամբ, բնաջնջում էր հայերին: Տղամարդ, կին, երեխա ... Ոչինչ չէր խնայվում: Երևույթ-

44 «Ռունեյի գրույցը Ա. Թ. Վեգների հետ», Հոն, դեկտեմբեր 1972 թ. պատճենահանված ծայնագրական ծապավենից: Միայն առաջին համաշխարհային պատերազմից հետո Թ. Վոլֆը ճշտեց իր դիրքը և «Berliner Tageblatt»-ի 1919 թ. փետրվարի 23-ի թողարկման մեջ արտատպեց Վեգների «Բաց նամակ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ պարոն Վուդրո Ուիլսոնին՝ հայ ժողովրդին դեպի անապատ քշելու կապակցությամբ» ուղերձը: Հաջորդող տարիներին ևս Վեգները հանդես էր գալիս ի պաշտպանություն Հայաստանի: «Թուրքական նոր կառավարության օտարալույս քաղաքականության» վրա նա գրոհեց «ժողովրդական կամուրջ: Հայ ժողովրդի ճակատագրի առթիվ» հոդվածով տպագրված «Der Syndikalist»-ում, հրատ. VII տարի, թիվ 1/1925 թ. (հավելված):

45 Հ. Ֆոն Գերլախն ըստ երևույթին վկայակոչում է Մ. Նիպաթի և է. Գրեթերի արտաքին գործոց նախարարությանը տված հաղորդագրությունը, որը «Berner Tagwacht»-ը («Բեռնյան վերկաց») հատվածաբար հրապարակեց Ա. Ֆրիդի մեկնաբանությամբ (հրատ. XXIV տարի, թիվ 188, 12-ը օգոստոսի 1916 թ.): Արտատպված է նաև Վ. Բրայսի «The Treatment of Armenians in the

ներն այնքան զարհուրելի էին, որ նույնիսկ Փառլո Ռորբախի նման կրքոտ պատերազմամուլը, որն, անշուշտ, սեփական հայեցակետով ծանոթ էր հայերի բարձր մշակույթին, ժամանակ առ ժամանակ հրաժարվում էր իր՝ սովորաբար այնպես եռանդուն տարվող պատերազմական պրոպագանդայից, քանզի նա պարզապես անտանելի էր համարում հայերի հետ կատարվող երևույթները: Գերմանիան, սակայն, մունչը էր մնում: Գրաքննությունը փակում էր մեր բերանը: Մամուլի կոնֆերանսում «անցանկալի» բնորոշվեց, որ մենք ուշադրություն էինք դարձնում հայերի հալածանքների վրա: Հնարավոր չէր պաշտպա-

Ottoman Empire 1915-16»-ում («Վարմունքը հայերի հետ Օսմանյան կայսրությունում 1915-16 թթ.», Լոնդոն, 1916 թ., էջ XXXIII-XXXIV (վերահրատարակություն, Բեյրութ, 1972 թ.): Եղուարդ Գրեթերը գերմանական ծագումով մի շվեյցարացի, Նիպածի նման աշխատում էր Հալեպի գերմանական դպրոցում որպես ուսուցիչ: Հետագայում նա դարձավ «Բագելի ազգային թերթի» խմբագիրը: «Berner Tagwacht»-ի հոդվածն էր վկայակոչում նաև խաղաղության Նոբելյան մրցանակակիր Ա. Գ. Ֆրիդը, երբ նա 1916 թ. հոկտեմբերի 17-ին իր «Պատերազմի օրագրում» նշում էր. «Ես հիմա քիչ է մնում խելագարվեմ, հոգեգար դառնամ և խենթանամ... Հայերի դեմ գործած ոճիրների մասին թուրքերի միջոցով զարհուրելի նկարագրությունների տարափ է թափվում մեզ վրա: Այս անգամ փաստաթղթեր ներկայացված գերմանացիների կողմից, օրինակ՝ Հալեպի գերմանական ռեալական դպրոցի ուսուցիչների կողմից: Մարտադաշտերի սարսափները ոչինչ են համեմատած այս սարսուզողու նկարագրությունների հետ: Հազարավոր հայերի սովանահ են անում, հենց ջրի ափին ծարավից մերցնում»: Հալեպից օրական դուրս են տանում սովանահ եղածների հարյուրից ավելի դիակ»: Շատերը մինչ այդ խելագարվում են: 5000 հոգու ջարդում են միանգամից, 3000 կանանց ու երեխաների օրեր տևող երթերով քշում են դեպի Եփրատը և խեղդում այնտեղ: Իրեն փրկել փորձող ամեն ոքի սպանում են... Սակայն գերմանացի գերքրիստոնյան այստեղ բավական հաճախ նշավակված պատտոր Թրուտլը՝ այլասիրության այդ քուրմը, 1916 թ. սեպտեմբերի 18-ին Մյունխենում կայացած բազմահազարանոց մի հավաքույթում ասաց հետևյալը (տե՛ս «München-Augsburger-Zeitung»- «Մյունխեն-աուգսբուրգյան լրագիր», հոկտեմբերի 19-ի երեկոյան հրատարակությունը): «Եթե այսօր հայերի օգտին տարածվում է գրավոր պրոպագանդա, ապա մենք մեզ պետիանդերծ պետք է ասենք, որ գլխավորը նվիրվածությունն է հայրենիքին, հետևապես մենք, երբ հայերը չհարգեցին այդ առաքինությունը, առիթ չունենք Հայաստանի օգտին մեզ ներկայացնելու որպես վկա»: Ա. Գ. Ֆրիդը, «Mein Kriegs-Tagebuch» («Պատերազմի իմ օրագիրը»), հատոր III, պատերազմի երրորդ տարի (1916 թ. օգոստոսի 1-ից մինչև 1917 թ. հուլիսի 28-ը), Ցյուրիխ, 1919 թ., էջ 69: Ֆրիդի անվանած «Մահվան երթերի» հետ հմնտ. «Հայերի տեղահանությունների ժամանակի տասներկուամյա տղայի հուշերը: Գրի է առնվել Թերեզա Լեման-Հաուփթի կողմից ըստ տղայի բանավոր հաղորդման, Յ. Լեփսիուսի կարծիքը հայկական ջարդերի մասին հավելվածով», Փոթսդամ, 1921, (գրքի վերահրատարակությունը Գ. Դոնաթի վերջաբանով 1985 թ. լույս է տեսել «Դոնաթ և Թեմեն» հրատարակչությունում):

նել այն ամենը, ինչ տեղի էր ունենում Թուրքիայում: Բայց ամենից առաջ չէր էլ թույլատրվում կշտամբել՝ հաշվի առնելով դաշնակցին, որը շատ զգայուն էր իր ինքնիշխանության գործերին միջամտելու հանդեպ: Ամենալավը լռելն էր: Բայց լռում էին ոչ բոլորը: «Deutsche Tageszeitung»-ը («Գերմանական օրաթերթ») մի ստոր սադրիչ հոդված տպագրեց հայերի դեմ: Այստեղ արդեն արտաքին գործոց նախարարության ներկայացուցչի համբերությունն էլ հատավ: Կոմս Վեդելը մամուլի կոնֆերանսի առաջ իր ցավակցությունն արտահայտեց ճշմարտության այդպիսի ծաղրի նկատմամբ: Չէ՞ որ մենք բոլորս գիտեինք, որ Թուրքիայում այնպիսի բան է կատարվում, ինչը գեղեցիկ չէ: Մենք չպետք է գրգռեինք ամբողջ աշխարհին՝ դեռ զոհերին մեղադրելով: Գերմանական ժողովրդի հսկայական զանգվածները երբեք էլ չիմացան այն, ինչ, իմիջիայլոց, գիտեր ամբողջ աշխարհը. որ ամենակեղտոտ դահիճները՝ եղել են մեր դաշնակիցները՝ թուրքերը»<sup>46</sup>:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ փշրվել էին գրաքննության կապանքները, Վեգներին աջակցեց «Նոր հայրենիք միությունը», որն իր «Պահի ոճիրները հավերժության ուժիկներն են» հոդվածը թիվ 29/30-ում թողարկեց որպես թռուցիկ<sup>47</sup>: Մաքսիմիլիան Հարդենը, որ 1914 թ. աշնանից ի վեր համակված էր խաղաղության կողմնակիցների շարժման ձգտումներ-

46 Գ. ֆոն Գերլախ, «Ստի մեծ ժամանակը», Շարլոթենբուրգ, 1926 թ., էջ 82: Պատերազմի գրաքննության վերաբերյալ հմնտ. Գ. ֆոն Գերլախի «Աջից ծախ» գրքի համապատասխան գլուխը է. Լյուդվիգի նախաբանով ու վերջաբանով, Ցյուրիխ, 1937 թ., էջ 236-239 (վերահրատարակությունը Մայնի Ֆրանկֆուրտ 1987): «Հայկական հարցի և գերմանական մամուլի» մասին մի ամբողջ գլուխ է գրված Յ. Լեփսիուսի «Հայ ժողովրդի մահվան ընթացքը» գրքում՝ հաղորդում համաշխարհային պատերազմի ժամանակ հայ ժողովրդի ճակատագրի մասին, 3-րդ հրատարակություն, Փոթսդամ, 1927, էջ 259-294: Այնհայտ է գերմանական մամուլի մեղքերը թեթևացնելու Լեփսիուսի հակումը: Միանգամայն անքննադատ գրավոր վկայություն է տալիս նա «մեծ մամուլին», որ վերջինս «նաև պատերազմի ժամանակ գիտակցում էր իր պատասխանատվությունը ճշմարտության հանդեպ»: Նույն տեղում, էջ 263:

47 Լույս է տեսել Բեռլինում 1922 թ. (վերահրատարակությունը Համբուրգ, 1982 թ.): Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, հայկական ոճիրների դեմ բողոքելու պատճառով, Վեգները ռազմական իշխանությունների կողմից կարգապահական տույժի ենթարկվեց և վերջապես, 1916 թ. դեկտեմբերին, հետ կանգնեց Թուրքիայից: Գմնտ. Մ. Ռունեյ, Ա. Թ. Վեգների կյանքն ու գերմանությունը», Նշված տեղում, էջ 205: Հայերին մատուցած ծառայության դիմաց Վեգները 1918/19 թթ. զրկվեց «Neuer Orient»-ի («Նոր Արևելք») խմբագրի իր պաշտոնից: Նույն տեղում, էջ 288:

րով, Թեիլերյանի դատավարության<sup>48</sup> առթիվ իր «Zukunft»-ի («Ապագա») երկու հրատարակությունները տրամադրեց Թուրքիայում ծավալվող հրադարձություններին: Եվ, ի վերջո, իշխող շրջանների ներկայացուցիչների հետ ունեցած իր լայնածավալ կապերի շնորհիվ, ի տարբերություն Լեփսիուսի, նա պարզաբանեց. «Զէ՞ որ ոչ մեկն այսուհետ մեզ հեքիաթ չի մատուցի. Բեռլինից իբր ինչ-որ ծևով լուրջ փորձ է արվել կանխելու ոճիրը<sup>49</sup>: Ֆրանց Քարլ Էնդրեսը, որը որպես Լիման ֆոն Ջանդերսի զորավարությամբ գործող թուրքական V բանակի գլխավոր շտաբի պետ, ծառայել էր Դարդանելի մոտ և պացիֆիստ էր դարձել պատերազմից ստացած տպավորությունից, քրիստոնյաների ջարդի և թուրքական զինվորների սարսափելի թշվառության ականատեսը լինելով այլևս չէր կասկածում, թե ով էր պատասխանատու հայկական սարսափների համար: Էնդրեսը՝ օսման պաշտոնաթող մայորը, զրկվեց Թուրքիայի կողմից տրվող թոշակից: Այնուհանդերձ, նա «Die Weltbühne»-ում («Միջազգային բեմ») քննարկման ներկա-

48 Դատավարության լրիվ արձանագրությունը լույս է տեսել «Թալեսթ փաշայի դատավարությունը» վերնագրով՝ սղագրված հաղորդում Թալեսթ փաշայի սպանության հարցով մեղադրվող հայ ուսանող Սողոմոն Թեիլերյանի հանդեպ Բեռլինի մարզային III երդվյալների դատարանում լսված գործի մասին, Թ. Վեգների նախաբանով և հավելվածով, Բեռլին 1921 թ. (զրքի վերահրատարակությունը «pogrom» - «Ջարդ» մատենաշարով իրականացրել է «Սպառնալիքի տակ գտնվող ժողովուրդներին հովանավորող ընկերությունը») «Հայերի ցեղասպանությունը դատարանի առաջ: Թալեսթ փաշայի դատը», հրատարակությունը և ներածությունը Թ. Հոֆմանի, Գյոթինգեն 1980 թ.): Հմմտ. նաև Մ. Հարդեն, «Թեիլերյան» տպագրված «Die Zukunft»-ում, հատոր 113, էջ 273-294, 4-ը հունիսի 1921 թ.:

49 Մ. Հարդեն, «Արևելքի և Արևմուտքի արանքում: Հայաստանը Մոսքիթում» տպագրված «Die Zukunft»-ում, հատոր 113, էջ 300, 11-ը հունիսի 1921 թ.: Լեփսիուսի նման Մ. Երցբերգերն իր «Համաշխարհային պատերազմի հուշեր»-ում (Շոթթագրք/Բեռլին, 1920 թ., էջ 74-82, զլուխ 6՝ «Հայկական հարցը») պաշտպանում է այն կարծիքը, որ կայսրությունն իբր արել էր ամեն ինչ «կանխելու ոճիրները»: Երցբերգերն իհարկե թաքցնում է, որ կայսրությունն արել է ամեն ինչ՝ մոլորեցնելու գերմանացի հասարակայնությանը: Երևույթների մեջ Հոհենցոլերների վարչակարգի խճճվածության կապակցությամբ հմմտ. Ստ. Ստեփանյան, «Կայսերական Գերմանիայի իմպերիալիստական քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի համոզեա առաջին համաշխարհային պատերազմում» տպագրված «pogrom»-ում, հրատ. X տարի, թիվ 64, էջ 22-28 (թարգմ. ռուսերենից) Թ. Հոֆմանի): Հ. Շթյուրմեր, «Պատերազմական երկու տարի Կոստանդնուպոլսում: Գերմանա-թուրքական բարոյախոսության ու քաղաքականության նշխարներ», Լոզան 1917 թ.: Դեռևս իր «Բալկանյան պատերազմը և Գերմանիայի միջազգային քաղաքականությունը» աշխատությունում (Բեռլին 1910 թ., էջ 45) ավստրիացի սոցիալիստ Օթո Բաուերը հավաստում էր. «Գերմանիան հովանավորում էր... հայերի բնաջնջումը»:

յացրեց «Հինգ քառորդ միլիոն քրիստոնյա հայերի և հարյուր հազարավոր հույների կոտորածը թուրքերի կողմից»<sup>50</sup>:

Դեռևս 1914 թ. առաջ ընկած տարիներին արքայազն Մաքսը՝ Սաքսոնիայի թագավորի եղբայրը և Ֆրայբուրգի (Շվեյցարիա) համալսարանի կաթոլիկ աստվածաբանության պրոֆեսորը, հաճախակի էր անդրադառնում Հայաստանի պատմությանն ու մշակույթին: Նաև խաղաղության կողմնակիցների շարժման շրջանակներում, որպես ակտիվ հոեետոր, այնպիսի ջանադրությամբ էր պաշտպանում նույնադավան իր հայ եղբայրներին, «ինչպես հնարավոր էր սպասել միայն նրա սերունդն ու ազդեցությունն ունեցող մարդուց»<sup>51</sup>: 1918-ից հետո նա աջակցում էր «Հայերին միջոցավանական օգնություն ցուցաբերելու կամպանիա» թերթին, որի տասնմեկերորդ թողուցիկը նա շարադրեց որպես «կոչ մեծարգո կաթոլիկ հոգևորականությանն ու նրա համայնքներին ի նպաստ հայերի նրանց սովամահությունից փրկելու մտադրությամբ»<sup>52</sup>:

Մարթեն Նիպածը (1886-1963 թթ.) Գերմանիայի կայսեր երբեմնի նվիրյալը, առաջին համաշխարհային պատերազմից հետո դարձավ ԳԽԿԸ-ի անդամ: Որպես Հալեպի գերմանական դպրոցի ավագ դասատու, նա 1915/16 թթ. դիմել էր արտաքին գործոց նախարարություն, ռայխսբանցլերին, ինչպես նաև պաշտոնատար քաղաքական գործիչների՝ փրկելու հայերին ստույգ մահից. հասկանալի է՝ անարդյունը: Իր «Խոսք գերմանացի ժողովրդի հեղինակավոր ներկայացուցիչներին»<sup>53</sup> հուշագրում նա իր անձնական հայեցողությամբ ուշադրություն էր հրավիրում Հայաստանում կատարվող դեպքերի վրա: 1916 թ. օգոստոսին Մազդեբուր-

50 Ֆ. Ք. Էնդրես, «Նոր Արևելք»: II: «Նոր Թուրքիան» տպագրված «Die Weltbühne»-ում, հրատ. XXII տարի, I/ թիվ 18, էջ 698, 4-ը մայիսի 1926 թ.:

51 Իզո Բաուներ, «Սաքսոնիայի արքայազն Մաքսը (1870-1951 թթ.) և Հայաստանը: Ի հակակշիռ եկեղեցական և պետական տարածված կարծիքների ու տեսակետների», Բրեմեն 1986, էջ 23:

52 Թռուցիկը վերատպվել է ծանոթ. 51-ում հիշատակված ուսումնասիրության հավելվածում:

53 Առաջին անգամ լույս է տեսել 1919-ին «Թուրքիայում աշխատող գերմանացի ավագ ուսուցչի տպավորությունները» վերտառությամբ: Աշխատությունը տպագրվել է «Հալեպ, 1915 թ.»: Երկու գերմանացի ուսուցիչ հանուն հայ ժողովրդի մղվող պայքարում Մ. Նիպածի և Է. Գրեթերի տեքստերով վերնագրի տակ, հրատարակել և ներածությունը գրել է Հ. Դոնաթը: Նիպածի մատուցած ծառայության վերաբերյալ հմմտ. Թ. Հոֆման (հրատարակիչ), «Լոռույան հանցանքը: Հայերի նկատմամբ թուրքերի գործած ցեղասպանության դատը ժողովուրդների մշտական տրիբունալի առաջ» (Փարիզ, 13-16-ը ապրիլի 1984 թ.), Գյոթինգեն /Վիեննա, 1985 թ., էջ 99-100:



գի IV բանակային կորպուսի գլխավոր հրամանատարության ներկայացուցիչը բռնագրավեց գրվածքը: Նիպաժն էլ անլուր չթողեց զարհուրանքը: 1931 թ. մարտի 2-ին, այդ ընթացքում որպես Համբուրգի Շթրետենմանի անվան ռեալական գիմնազիայի ավագ շթուդիենտաթ (բարձր դասարանների ուսուցիչ), նա մի զեկուցում կարդաց «Հայկական ջարդերը պացիֆիզմի լույսով» թեմայով: Կազմակերպիչն էր Համբուրգ-Վիլհելմսբուրգի ԳեսԿԸ-ի տեղական խումբը: Ժողովի հաղորդագրության մեջ ասվում է. «Դահլիճը լեփ-լեցուն էր: Շատերը ներս մտնելու հնարավորություն չունեցան... Դժբախտաբար, հայերի այդ ողբերգությունը դեռ միանգամայն անհայտ է Գերմանիայում, թեև այն իրագործվել է՝ մեզ բոլորիս դարձնելու մարդու իրավունքների փաստաբան... Քանզի ամեն մի պացիֆիստ Հայաստանի կողմնակիցն է, և բոլոր հակառակորդները պիտի պապանձվեն»<sup>54</sup>:

Բայց «հակառակորդներ» շատ կային: Երբ Ա. Թ. Վեգները 1919 թ. զեկուցում էր կարդում Բեռլինի «Ուրանիայում», նրա փաստարկումները գրգռում էին գերմանական ազգայնամուլ շրջաններին, և բանը հասնում էր իրարանցումների<sup>55</sup>: Եվ «Germania»-ն Կաթոլիկ կենտրոնի կուսակցության կենտրոնական օրգանը, 1931 թ. կրկին քամուն տվեց «Թուրքիայի արևելյան գավառներում Ռուսաստանի և Անգլիայի կողմից նյութված հայերի ապստամբության» թուրքական դարձանը<sup>56</sup>: Էռնսթ Թրագուլթի կողմից հրատարակված «Vom frohen Leben» («Ուրախ կյանքից») կաթոլիկ-պացիֆիստական ամսագիրն այդ շարադ-

րանքը մերժեց որպես «հեքիաթ» և պարզաբանեց. «Հայ ժողովրդի մահվան այդ ընթացքը մենք քննարկում ենք այսչափ հանգամանորեն, քանի որ անընդհատ զգում ենք, թե որքան քիչ բան գիտեն այդ մասին Գերմանիայում, և որովհետև գերմանական մասնուլն ընդհանրապես ոչինչ չի անում՝ տարածելու ճշմարտությունը համաշխարհային պատերազմի մասին և այն մասին, ինչ սերտորեն առնչվում է նրա հետ: Մենք մեր պարտքն ենք համարում մահվան դատապարտված քրիստոնյա հայ ժողովրդին, որն առհավետ կապված է քրիստոնեական խղճի ու մարդկային սրտի հետ և ստիպված է եղել կրելու անվերջ տառապանքի փշրվող բեռը, օգնել նրանով, որ ... պատմական ճշմարտության պայծառ լույսով ողողենք «երիտթուրքերի կառավարության կատարած հետևողական կոտորածը մի ամբողջ ժողովրդի նկատմամբ» (Ա. Թ. Վեգներ)<sup>57</sup>:

57 «Համաշխարհային պատերազմի ամենաարյունալի պատմությունը» տպագրված «Vom frohen Leben»-ում, հրատ. XI տարի, պրակ 10/11, էջ 387, հուլիս/օգոստոս 1932 թ.: Վկայակոչելով այն ցուցումները, որոնք տրվել են գերմանական մամուլին ռազմական մամուլ բյուրոյի կողմից 1917 թ. սկզբին հրատարակված չարգելված գրքում, 388-րդ էջի հոդվածում ասվում է. «Երևում է, որ գերմանական կինոգրաբնութաբանությունը դեռ ռազմական գրաբնութային ցուցումների կողմնակիցն է: Մենք լավ ենք հիշում, թե ինչպես մոտ 1.5 տարի առաջ անսազորից մեկուն կարդացինք, որ ինչ-որ մի ֆիլմում էկրանի վրա չպետք է մեծ չափով երևային սպանված հայերի թվերը: Անապատում պետք է հեռացվեին որոշակի քանակությանը քարեր, քանի որ մարդիկ դրանք կարող էին հայերի դիակների տեղ դնել»: Ավֆոնս Էրբի հեղինակությամբ մի հոդված («Պատերազմն ընդդեմ հայերի») արդեն լույս էր տեսել «Vom frohen Leben» ամսագրի «1930 թ. խաղաղության գրքույկ»-ում: Հայ ժողովրդի ճակատագրի հարցում խաղաղության կողմնակիցների շարժման ավանդական մասնակցությունն են վկայում նաև հետևյալ բացատրությունները. «Ռուդոլֆ Բրոդա, «Կարելի է և պե՛տք է արդյոք պաշտպանել թուրք ժողովրդի ինքնորոշման իրավունքը» տպագրված «Die Menschheit» պարբերականում, օրգան «Մարդկության շահերի միության», հրատ. 7-րդ տարի, թիվ 9, էջ 9, 6-ը մարտի 1920 թ.: Աուգուստին Հասնո, «Սոցիալական պատերազմը: III: Հայկական հարցը» տպագրված նույն տեղում, հրատ. 7-րդ տարի, թիվ 27, էջ 1-2, 10-ը հուլիսի 1920 թ.: «Ի՞նչ է կատարվում Հայաստանում: Պետք է բնաջնջվի՞ հայ ժողովուրդը» տպագրված «Allgemeine Rundschau»-ում («Համայնապատկեր»), շաբաթաթերթ քաղաքականության ու մշակույթի, հրատ. Գեորգ Մյոնիուսի, հրատ. XXVII տարի, թիվ 12, էջ 214, 22-ը մարտի 1930 թ.: Իր «Իտալական ճամփորդություն» գրքում (Ֆրայբուրգ, Բրայսգաու 1925, էջ 394-397) Մյոնիուսը գրում է «Սուրբ Ղազարի Հայաստանի» մասին: Նույն ձևով անհայտ պիտի մնար Ավֆրեդ Քերի հաղորդումը Վենետիկից Սուրբ Ղազար կատարած իր ճամփորդության մասին, որը լույս է տեսել «Berliner Tageblatt»-ում «Հայկական կղզին» վերնագրով, հրատ. 49-րդ տարի, թիվ 279, 16-ը հունիսի 1920 թ. (Երեկոյան հրատարակություն): Քերն ի միջի այլոց պատկերում է «Հայր սուրբ Աուբերի» (հայերեն՝ Ավգեր) ընթռնումը, ով իր

54 «Deutsche Zukunft», հրատ. VIII տարի, թիվ 7, էջ 4, 15-ը մարտի 1931 թ.: 1931 թ. սեպտեմբերի 15-ին ԳեսԿԸ-ի տեղական խումբը Համբուրգի Ալթոնա թաղամասին կրկին հրավիրեց լսելու Նիպաժի զեկուցումը: Հավաքույթի մասին Մ. Միլլեի տված հաղորդագրության մեջ ասվում է. «Մեդսակցության խայտառակությունն ընկավ գերմանացիների վրա, եվրոպական այն միակ ազգության վրա, որը դեռ ներկայացուցիչներ ուներ Թուրքիայում: Սակայն վճռական միջոցներ ձեռք առնելու համար գերմանական կառավարությունը խիստ զբաղված էր Գերմանիայի ներսում եղած հոգսերով, և մարդասիրության հայցով նրա բոլոր դիմումներին թուրքական կառավարությունը պատասխանում էր միայն դաշինքի խախտման սպառնանքով: Փորձեցին օգնել գերմանացի ուսուցիչներ, բժիշկներ ու բուժքույրեր, սակայն իզուր»: «Deutsche Zukunft», հրատ. VIII տարի, թիվ 19, էջ 4, 1-ը հոկտեմբերի, 1931 թ.:

55 Հմմտ. Մ. Ռուներ, «Ա. Թ. Վեգների կյանքն ու գործունեությունը», նշված տեղում, էջ 312:

56 Դ-ր 3. Ո., «Ժողովուրդ՝ առանց երկրի և իրավունքի: Հայերի թշվառությունը» տպագրված «Germania»-ում՝ գերմանական ազգային թերթ, հրատ. 61-րդ տարի, թիվ 13, 16-ը հունվարի, 1931 թ., և հրատարակություն (պետհրատ):

դիվանագիտական ճամփորդությունների ժամանակ պատերազմի սկզբին մեկնեց նաև Գերմանիա և այցելեց նաև Էրցբերգերին, ում հետ մտերիմ էր: Չայր սուրբը նրա հետ խոսեց հայերի գաղթի մասին և զանազան կոտորածի մասին: Էրցբերգերը խոստացավ լավագույնս հանդես գալ ոճիրի դեմ... Սակայն հետո նա գրեց, որ իբր կոտորածի մասին լուրերը չափազանցված են: Բայց չափազանցություն չկար... Գերմանիան այն երկիրը չէ, որ հանդուրժած լինի թուրքերի գաղթելի ոճիրները... Գերմանական միլիտարիզմի միայն մի մասը: Ավգերը, որքան էլ որ իր համար ցավ էր, չէր թաքցնում, որ գերմանացի սպաները երբեք էլ միայն դիտորդ չեն եղել, այլ գործարար մասնակցություն են ունեցել սպանողներին»: - Իր «Համաշխարհային պատերազմի բարքերի պատմությունը» երկհատորյակում (Վիննա, 1930 թ.) սեռաբան գիտնական և պացիֆիստ Մագնուս Յիրշֆելդը ևս հանգամանորեն կանգ է առնում հայերի ջարդերի վրա: Ոմն քահանայի հաղորդումը «Թշվառ հայ փախստականների» մասին հրատարակեց Ֆ. Վ. Ֆորսթերի հետ սերտորեն կապված «Die Menschheit» պացիֆիստական շաբաթաթերթը, հրատ. 14-րդ տարի, թիվ 9, էջ 58, 4-ը մարտի 1927 թ.: - «Պոնտացի Պիղատոսը, Անասն ու Կայֆասը և համաշխարհային պատերազմը» գրքում, որը լույս է տեսել 1926 թ. կաթոլիկ պացիֆիստ և քաղաքական գործիչ Վիթոլի Վյուրցբուրգյան հրատարակչությունում («Das neue Volk»- «Նոր ժողովուրդ»), քննարկվում է նաև հայ ժողովրդի բնաջնջումը. փաստարկումները մասամբ տրվում են «Պիղատոսն ու Մուհամմեդը» վերնագրի տակ՝ տպագրված «Das Andere Deutschland»-ում, հրատ. 6-րդ տարի, թիվ 19, 15-ը մայիսի 1926 թ.: «Համաշխարհային պատերազմի ժամանակ թուրքերի կատարած ջարդերի» մասին պացիֆիստ Ադոլֆ Վուրմբախի գրած հոդվածում ասվում է. «Պատմության մեջ այդ ամոթալի էջերի հեղինակն ու կենսագործող ոչ թե թուրք ժողովուրդն է որպես այդպիսին, այլ հենց իսկական խառնամբույրը, որը բոլոր երկրներում ու բոլոր ժամանակներում իրագործել է այդպիսի և նման խայտառակ արարքներ, քանի որ ինքը օգուտ ունի միայն դրանից: Այն երևելի խուժանը, որը մշտապես խաղում է մագդործի դանակի հետ և այսօր էլ ծարավի է վաղը ծանուցելու ուրախ-զվարթ մի կոտորածի մասին, խուժան, որն ամենուրեք նույնն է՝ դավանի նա Քրիստոսի թե Մուհամմեդի ուսմունքը»: Տպագրված է «Das Andere Deutschland»-ում, հրատ. 6-րդ տարի, թիվ 31, 7-ը օգոստոսի 1926 թ.: - Ռուդոլֆ Բրայթշայդի հրատարակած «Der Sozialist» շաբաթաթերթում, ուր լույս էին տեսնում խաղաղության կողմնակիցների շարժման ներկայացուցիչների բազմաթիվ հոդվածներ, Վալթեր Օհմեն հրատարակեց «Համաշխարհային պատերազմի ամենատխուր պատմությունը», հրատ. 5-րդ տարի, թիվ 47, էջ 742 և հաջորդ էջերը, 22-ը նույնների 1919 թ.: Խաղաղության կողմնակիցների շարժման կողմից հայկական մշակույթի գնահատմանը և հայ ժողովրդի հետ համերաշխությանը այնուհանդերձ հակադրվում էին բազմաթիվ գերմանացի հեղինակներ, որոնց ներկայացրած հայի պատկերը պարզապես քննարժան է: Դրա համար հմնտ. Գրիգոր Մելիքյան, «Հայաստանի վերաբերյալ պարոն Քրաուզեն ոչինչ չի հիշատակում»: «Հայաստանը գերմանացի հեղինակների վերարտադրությամբ» տպագրված «die horen»-ում («Հորաներ») ամսագիր գրականության, գրաֆիկայի ու քննադատության, հրատ. 25-րդ տարի, հատոր 3, էջ 159-168, աշուն 1980 թ., հրատարակություն 119 (լույս է տեսել որպես մեկը այն բազմաթիվ հոդվածներից, որոնք, կազմված լինելով Գ. Մելիքյանի կողմից, որպես այդ «Հորաներ» հրատարակության եզրափակող մաս, արժանավայել ձևով շարադրում են «Հայ գրականության, մշակույթի ու քաղաքականության» ասպեկտները):

ՎԱԼԹԵՐ ՖԱԲԻԱՆ - Նախաբան ----- 5

Շիրմախաչը ----- 7

Հայ Թելլը ----- 8

Կարմիր և սև-սպիտակ-կարմիր սուլթանը ----- 10

Պանգերմանական դեմոկրատները ----- 14

Թե ինչպես խաբվեցինք ----- 17

Թուրքական խեղճ զինվորը ----- 20

Թուրք փաշաները և գերմանիացի մոլազարները ----- 23

Թուրքական պատմությունից ----- 26

Հայ ժողովուրդը ----- 33

Պաստոր Նաումանը ----- 36

Աբդուլ Համիդի տապալումը ----- 39

Խաբված առաջնորդները ----- 41

Կառավարում են երիտթուրքերը ----- 42

Թուրքական իմպերիալիզմը ----- 45

Նախճիրի ուրվականը ----- 49

Շրջում է մահվան հրեշտակը ----- 52

Սատանայի կիրճը ----- 56

Մուլեգնում է Ֆուրիան ----- 60

Տիկին Թերզիբաշյանի ցուցմունքը Թեիլերյանի դատավարության ժամանակ ----- 62

Եմվեր փաշայի փեսան եղեռնագործ ----- 66

Թալեաթի փեսան՝ նույնպես եղեռնագործ ----- 68

Ծեր մարշալը ----- 69

Բավական է ----- 71

Կայսերական կառավարության մեղսակցությունը ----- 72

«Խաբված ժողովուրդ» ----- 77

Հավելված. Հայերի ջարդերի վերաբերյալ Թալեաթի հրամանները՝ ուղղված Հալեպի կուսակալությանը ----- 81

ՀԵԼՄՈՒԹ ԴՈՆԱԹ - Վերջաբան ----- 83

ՀԱՅՆՐԻՒՆ ՖԻՐԲՅՈՒՄԵՐ  
ՀԱՅԱՍՏԱՆԸ 1915-ին

Գերմաներենից թարգմանեց  
Հունան Ղուկասյանը

Հրատ. խմբագիր՝ **Հ. Բ. Պետրոսյան**  
Տեխն. խմբագիր՝ **Վ. Զ. Բոդյան**  
Համակարգչային շարվածք՝ **Ս. Գասպարյան**  
Համակարգչային ձևավորում՝ **Ռ. Օհանյան**

Հանձնված է շարվածքի 21.03.2000 թ.: Ստորագրված է տպագրության 11.04.2000 թ.: Չափսը՝ 84x1081/32: Թուղթ՝ օֆսեթ: Տպագրության եղանակը՝ օֆսեթ: Հրատ. 5,7 մամ., տպագր. 7,0, մամ.= 5,88 պայմ. մամ + 3 ներդիր: Տպաքանակ 500:  
Պատվեր 32:

Երևանի համալսարանի հրատարակչություն,  
Երևան, Ալեք Մանուկյան փող. N 1:

---

Երևանի համալսարանի տպարան,  
Երևան, Աբովյան փող. N 52: